Անդորրիչ *a.* quieting, calming, tranquillizing.

Անդորրութիւն *s.* tranquillity, calm, repose; ease, comfort.

Անդուլ *a.ad.* assiduous, continual; assiduously, continually, incessantly.

Անդունդք, դնդոց *s.pl.* abyss, gulf; precipice; the infernal regions, hell, tartar.

Անդուռն *a.* without gates, open; – բերան՝ լեզու, tattler, person of an unbridled tongue. [from above.

Անդուստ *ad.* thence; – 'ի վերուստ,

Անդ ուրեմն, Անդր ուրեմն *ad.* there; S. Անդ *ad.*

Անդպրութիւն S. Անուսումնութիւն.

Անդստին *ad.* from, since, as soon as, when; radically, originally, naturally; anew, afresh: even then; – 'ի մանկութենէ իմմէ, from my infancy; – յարարչութենէ աշխարհի, from the creation of the world.

Անդր *ad.* there; beyond, on the other side; yonder; 'ի քաղաք –, to the city; – քան, *pr.* beyond, further than, on the other side of, over; – քան զծով, beyond the sea. [position.

Անդրաբերութիւն *s.* metaphor; trans-

Անդրագիր *s.* inscription.

Անդրադոյն *a.* further.

Անդրադարձ *a.s.* reciprocal, mutual; inverse; retrograde: requital, return, exchange.

Անդրադարձութիւն *s.* retrogression; reverberation, repercussion; reflection; rebound.

Անդրադարձուցանեմ, ուցի *va.* to drive back; to reverberate; to reflect; to repel, to cause to rebound.

Անդրանամ, ացայ *vn.* to go beyond, to go further, to pass, to go before.

Անդրանիկ, նկի or նկան, կաց *a.s.* eldest, first-born.

Անդրանկածախ *a.* that destroys the first-born.

Անդրանկածին *a.* first-born.

Անդրանկածնունդ S. Անդրանիկ.

Անդրանկանամ, ացայ *vn.* to be eldest; to claim primogeniture.

Անդրանկարար *a.* that gives the right of primogeniture.

Անդրանկացուցանեմ, ուցի *va.* to make eldest, to give the right of primogeniture.

Անդրանկութիւն *s.* seniority, primogeniture, right of primogeniture.

Անդրավարտիք *s.pl.* breeches, hose, trousers.

Անդրդուելի *a.* immoveable, firm, constant; inflexible.

Անդրդուութիւն *s.* firmness, constancy, resolution.

Անդրէն *ad.* again, anew, afresh; from or to the same place, in the same situation; – դառնալ, to return; – սկսանել, to recommence; – առնել, to re-

peat or say over again; S. Անդէն. [լի.

Անդրժելի *a.* inviolable: S. Անդրժե-

Անդրի, րւոյ, րեաց *s.* statue; bust; – մեծախարի, colossus. [tor.

Անդրիագործ, աց *a.* statuary, sculp-

Անդրիագործութիւն *s.* sculpture.

Անդրիանդ, աց S. Անդրի.

Անդրիանդագործ, Անդրիաստեղծ S. Անդրիագործ.

Անդրոյթք *s.* eructation.

Անդրոշմ, աց *a.* uninscribed; without mark; unsealed; not ratified; without confirmation. [nag, hackney.

Անդրուար, Անդրուվար, Անդրվար *s.*

Անդր քան S. Անդր.

Անեզր, Անեզրական *a.* interminable, boundless.

Անել, Անելանելի *a.* much embarrassed, much perplexed, inextricable, without escape; – և անմուտ առնել, to hem in on all sides, to cut off all means of escape from; – փողոց, blind alley; street or court with only one entrance. [uncreate.

Անեղ, ից, Անեղական *a.* uncreated,

Անեղածին *a.* born of increated God.

Անեղակերտ *a.* made by increated God.

Անեղանելի *a.* that cannot be created.

Անեղաշէն S. Անեղակերտ.

Անեղբայր *a.* without brother.

Անեղծ, ից, Անեղծական, Անեղծանելի *a.* incorruptible, indissoluble; indelible, not to be effaced; inviolable.

Անեղծութիւն *s.* incorruption, indissolubleness.

Անեղութիւն *s.* uncreated state.

Անեպեր *a.* unblamable.

Աներ, ոյ *s.* wife's father, father-in-law; – Լիբանանու or Լիբանաներ, Antilibanus.

Աներաժիշտ *a.* unmusical.

Աներաժշտութիւն *s.* ignorance of music.

Աներանամ, ացայ *vn.* to become father-in-law, brother-in-law.

Աներասան, Աներասանակ *a.* not broken in, unruly; unbridled, unreined, ungoverned, debauched. [nal.

Աներբ *a.* not bounded by time, eter-

Աներեկ, Աներեկոյ *a.* that has no night, that always enjoys the light; eternal, endless.

Աներեւակ, Աներեւական, Աներեւակի, յԱներեւակի *a.ad.* invisible, hidden, obscure; ignoble; invisibly.

Աներեւակայելի *a.* unimaginable.

Աներեւան S. Աներեւակ.

Աներեւոյթ, ութից *a.ad.* invisible, vanished; imperceptible, insensible; *gr.* infinitive; յ–ս, աներեւութաբար, invisibly; –, յ–ս լինել, to vanish, to disappear; – լինելն, disappearance.

Աներեւութանամ, ացայ *vn.* to vanish, to disappear.

Աներեւութացուցանեմ, ուցի *va.* to cause to disappear, to hide. [hidden.

Աներեւութերակ *a.* whose veins are

Աներեւութիւն, Աներեւութութիւն *s.* disappearing, disappearance.

Աներկաթ *a.* without iron, – chains.

Աներկբայ, Աներկբայաբար, Աներկբայապէս, Աներկբայելի *a.* doubtless, indubitable, sure, certain, unquestionable, incontestable, indisputable; *ad.* doubtless, indubitably, certainly.

Աներկբայութիւն *s.* certainty, certitude.

Աներկեւան *a.* safe, free from danger; bold, fearless; certain, doubtless; infallible, faithful; *ad.* safely, in safety; certainly; boldly, fearlessly.

Աներկեւանութիւն *s.* safety; confidence, security; boldness.

Աներկիւղ, յԱներկիւղս, Աներկիւղաբար *a.ad.* fearless, bold, courageous, intrepid; fearlessly; courageously, intrepidly. [God, irreligious.

Աներկիւղած *a.* that has no fear of

Աներկիւղածութիւն *s.* irreligion.

Աներկիւղութիւն *s.* fearlessness.

Աներկմիտ, Աներկմտելի *a.* without hesitation, resolute, certain.

Աներկուանալի S. Անյերկուանալի.

Աներկրագործելի *a.* that cannot be cultivated.

Աներկրպագու *a.* that does not adore, indevout, irreligious. [in-law's son).

Աներորդի *sm.* brother-in-law, (father-

Անեփ *a.* not enough cooked, raw.

Անզանազան *a.* indifferent.

Անզանազանութիւն *s.* indifference.

Անզարդ *a.* unadorned, without embellishment; unpolished, uncivilized.

Անզարդանամ, ացայ *vn.* to be divested of ornament.

Անզարդացուցանեմ, ուցի *va.* to divest of ornament, to despoil, to disfigure.

Անզարդիմ, եցայ *vn.* S. Անզարդանամ.

Անզարդութիւն *s.* state of any thing without ornament, disfiguration, despoliation.

Անզաւակ, աց a. childless; barren.
Անզաւակեմ, եցի, Անզաւակեցուցանեմ, ուցի va. to deprive of childring, to kill children.
Անզաւակիմ, եցայ vn. to be bereaved of children.
Անզաւակութիւն s. state of a person bereft of children; barrenness.
Անզբաղ a. at leisure, disengaged, unemployed, undisturbed.
Անզբաղութն s. leisure, tranquillity.
Անզբօս S. Անզբաղ.
Անզբօսութիւն S. Անզբաղութիւն.
Անզգալի a. insensible, imperceptible.
Անզգամ, աց a. rascally, knavish, roguish, wicked; foolish, mad.
Անզգամաբար ad. foolishly, stupidly; imprudently, perversely.
Անզգամեցուցանեմ, ցուցի va. to enrage, to make wicked.
Անզգամիմ, մեցայ vn. to be rascally, to be knavish, to be wicked; to become mad, to grow mischievous.
Անզգամութիւն s. roguery, knavery; malignity, ill turn, wicked action.
Անզգայ, ից a. insensible, inanimate, dull, stupid; besotted, infatuated, stupified.
Անզգայ, յԱնզգայ, յԱնզգայս, Անզգայաբար ad. insensibly, imperceptibly; stupidly.
Անզգայական S. Անզգայ a.
Անզգայանամ, ացայ vn. to be insensible, to be stupid; to be infatuated.
Անզգայացուցանեմ, ուցի va. to infatuate, to stupify, to hebetate; to deprive of reason.
Անզգայիմ, եցայ S. Անզգայանամ.
Անզգայութիւն s. insensibility, stupidity, apathy, indolence, lethargy.
Անզգայուն, յնոց a. insensible.
Անզգաստ, ից a. not vigilant, careless, inattentive; յ–ս, յ–ից ad. insensibly.
Անզգաստութիւն s. want of a vigilance, carelessness, inattention.
Անզգոյշ, գուշից a. incautious, uncircumspect, inconsiderate, imprudent, unwary, heedless.
Անզգոյշ, Անզգուշաբար ad. without precaution, inadvertently, imprudently.
Անզգուշութիւն s. want of circumspection, unwariness, imprudence, inconsiderateness, negligence.
Անզգօն, ից a. stupid, foolish, senseless, indiscreet.

Անզեղջ, ից a. impenitent, irreclaimable; irrevocable.
Անզերծ a. inextricable.
Անզէն a. unarmed.
Անզիրկ a. undeprived.
Անզղջական S. Անզեղջ.
Անզղջանալի a. not to be repented of, not to be regretted.
Անզղջումն s. impenitence, obduracy.
Անզին, Անզինական, Անզիննելի a. inconsiderable, imperceptible.
Անզոհ a. without sacrifice; unworthy to be sacrificed.
Անզոյգ a. odd, not a pair; different, dissimilar; – գործել, to spoil the pair, to render dissimilar.
Անզովանալի a. that cannot be refreshed.
Անզուգական a. matchless, incomparable, unparalleled, unequalled.
Անզուգականութն s. matchlessness, incomparableness, excellence.
Անզուգակցութիւն s. disjunction, separation: virginity.
Անզուգութիւն s. disparity, inequality; disjunction, separation; discord, division, dissension, disunion: virginity.
Անզրաւ, Անզրաւական a. interminable, infinite, perpetual.
Անզօշաքաղ a. disinterested.
Անզօր, աց a. without power, weak, impotent, feeble; unmanly, fainthearted; inefficacious, insufficient; invalid.
Անզօրանամ, ացայ vn. to lose strength, to be feeble.
Անզօրացուցանեմ, ուցի va. to render feeble, without force, to render powerless.
Անզօրութիւն s. weakness, feebleness; invalidity.
Անէ, էից, Անէակ a.s. that does not exist, null, none: nothing, non-entity.
Անէծք, նծից s.pl. imprecation, malediction; execration, horrour, detestation.
Անէութիւն s. nothingness.
Անըղձալի, Անըղձանալի a. not desirable, detestable.
Անըմբեր, Անըմբերելի a. impatient; intolerable, insupportable.
Անըմբռնելի a. that cannot be taken; incomprehensible, inconceivable.
Անընդդիմաբանելի, Անընդդիմադրելի a. incontestable, indisputable.
Անընդդիմակ, Անընդդիմակայ, Անընդդիմակաց a. unresisting; resistless, irresistible.
Անընդդիմահար a. not opaque, transparent.

Անընդել, etc. S. **Անընտել**, etc.
Անընդհատ *a.* uninterrupted, continual, successive; *ad.* uninterruptedly, successively.
Անընդմիջաբար *ad.* immediately.
Անընդմիջական *a.* immediate.
Անընդմիջելի *a.* inseparable, indivisible; continual.
Անընդոստ *a.* that cannot be jolted out of its place, fast; firm, steadfast.
Անընդունակ *a.* incapable, unqualified, insufficient.
Անընդունակութիւն *s.* incapacity, inability.
Անընդունելի *a.* inadmissible.
Անընթեռնլի *a.* illegible, unreadable.
Անընթրիք *a.* supperless.
Անընկալ S. **Անընդունելի**; – *լինել*, to be inadmissible.
Անընկեր *a.* without companion, alone.
Անընկերական *a.* unsociable; unsocial.
Անընկերականութիւն *s.* unsociableness.
Անընկերասէր *a.* that loves not his companions.
Անընկճելի *a.* indomitable, invincible, inflexible, unconquerable.
Անընչութ *s.* want of fortune, poverty.
Անընտել *a.* not familiar, strange; unaccustomed; indocile, wild, savage.
Անընտելութիւն *s.* want of familiarity; disuse; indocility, ferocity.
Անընտրաբար, **Անընտրողաբար** *ad.* indiscreetly, imprudently.
Անընտրող *a.* indiscreet, imprudent.
Անընտրողութիւն *s.* indiscretion, imprudence.
Անըստգիւտ S. **Անստգիւտ**.
Անըստերիւր S. **Անստերիւր**.
Անթ S. **Անութ**.
Անթագաւոր *a.* kingless.
Անթախանձ *a.* without importunity, – intrusion.
Անթաղ *a.* unburied.
Անթանոցիկ *s.* armful, any thing carried under the arm-pit.
Անթառամ *a.* unfading; incorruptible: *s.* amaranth.
Անթատակ *s.* arm-pit.
Անթարգման, **Անթարգմանելի** *a.* without interpreter; that cannot be translated; inexplicable.
Անթարգմանաբար, **Անթարգմանապէս** *ad.* inexplicably.
Անթարթ, **Անթարթափ** *a.* earnest, steadfast; with fixed eyes.
Անթարշամ S. **Անթառամ**.
Անթաց *a.* dry.
Անթափ *a.* unspilt; raw, unprepared.
Անթափանց, **Անթափանցիկ** *a.* opaque, impenetrable.
Անթափանցկութիւն *s.* opacity, impenetrability.
Անթաքուն, **Անթաքոստ**, **Անթաքչելի** *a.* inconcealable, manifest, evident, public.
Անթեղ, *ի s.* wood embers; – *հարկանել*, to cover the fire with ashes.
Անթեղայ S. **Անդեղայ**.
Անթերի *a.* entire, complete, perfect; *ad.* entirely, completely.
Անթեւ, *ից a.* without wings.
Անթեփ *a.* peeled, scaled.
Անթեքելի *a.* inflexible, stiff.
Անթեքութիւն *s.* inflexibility, stiffness, hardness.
Անթիպատոս, **Անթիհիւպատոս** *s.* proconsul.
Անթիպատոսութիւն *s.* proconsulship.
Անթիւ *a.* innumerable, immense.
Անթլփատ *a.* uncircumcised.
Անթլփատութիւն *s.* uncircumcision; prepuce.
Անթող, **Անթողլի** *a.* unpardonable, inexpiable.
Անթոյն *a.* without poison.
Անթոշակ *a.* without pension, wages; without the last Sacrament.
Անթոռն *a.* without nephews or nieces.
Անթուական, **Անթուելի** *a.* innumerable.
Անթուրծ *a.* unbaked; – *սափոր*, urn not baked.
Անժամ *a.* too late; unseasonable; unforeseen, unexpected.
Անժաման *a.* that cannot arrive; not arrived, slow, tardy.
Անժամանակ *a.* not limited or subject to time, eternal; unseasonable.
Անժամանակաբար or *պէս ad.* unseasonably; eternally.
Անժամանակաւոր, **Անժամանակեալ**, **Անժամանակեայ**, **Անժամանակեան** S. **Անժամանակ**.
Անժամութիւն *s.* mischance, disappointment; unseasonableness.
Անժառանգ *a.* heirless.
Անժառանգեմ, *եցի va.* to deprive of heirs; to disinherit.
Անժառանգութիւն *s.* heirless state, want of succession; disinherison.
Անժխտելի *a.* incontestable, undeniable.
Անժոյժ *a.* intolerant, impatient; incontinent, intemperate, immoderate; violent.

Անժուժաբար *ad.* impatiently; intemperately.

Անժուժանամ, ացայ *vn.* to lose patience, to grow impatient.

Անժուժելի *a.* intolerable, insupportable. [nent, intemperate.

Անժուժկալ *a.* impatient; inconti-

Անժուժկալութիւն, Անժուժութիւն *s.* impatience; intolerance; incontinence, intemperance; immoderation, violence.

Անժպիտ *a.* sorrowful, grave, serious (in countenance).

Անիծ, անծոյ *s.* nit. [curse.

Անիծաբանութիւն *s.* malediction,

Անիծաբեր *a.* that bears a curse; that curses. [imprecation.

Անիծագրութիւն *s.* malediction, curse,

Անիծակուռ, Անիծակուր *a.* loaded with curses; — առնել, to load with maledictions.

Անիծանեմ, ծի, Անիծեմ, եցի *va.* to curse, to imprecate; to detaste, to loathe, to abhor, to forswear, to deny upon oath. [S. Անիծակուռ.

Անիծապարտ *a.* worthy to be cursed;

Անիծեալ *a.* cursed.

Անիմայ S. Անիմաստ.

Անիմանալի *a.* unintelligible, inconceivable, incomprehensible.

Անիմանալութիւն *s.* unintelligibility; incomprehensibility.

Անիմաստ *a.* foolish, senseless, insipid; irrational, absurd.

Անիմաստասէր *a.* that does not love wisdom, ignorant; unphilosophical.

Անիմաստասիրութիւն, Անիմաստութիւն *s.* folly, senselessness, absurdity.

Անիմաց *a.* incomprehensible; insensible. [nothingness.

Անինչ, ընչից *a.* pennyless, poor; *s.*

Անիշխան *a.* without a prince, — chief, — governor, in anarchy; vulgar, plebeian.

Անիշխանութիւն *s.* anarchy.

Անիսկ, ից *a.* not real, false; accidental.

Անիսոն, ի *s.* anise.

Անիրան *a.* bodiless, difformed.

Անիրաւ, աց *a.* unjust, iniquitous, wicked; injurious, offensive; perfidious, disloyal; false, illegitimate; tyrannical; *ad.* —, յ—ի, յ—ս, unjustly, iniquitously.

Անիրաւատեաց *a.* that hates the unjust or the injustice.

Անիրաւացի *a.ad.* unjust; *ad.* unjustly.

Անիրաւեմ, եցի *va.* to offend, to sin against, to wrong, to injure, to abuse, to hurt.

Անիրաւիմ, եցայ *vn.* to be unjust, to be unrighteous; to sin, to fail in duty.

Անիրաւութիւն *s.* injustice, iniquity; injury, wrong, offence, affront; trespass; oppression.

Անիւ, նուոյ, նուի, ուաց *s.* wheel; — մեքենայի, ‡— of a machine; — յեսանի, grindstone; — խորտկաց, jack; — տպայոց, gig; — առաջակողմեան նաւին, capstern, capstan.

Անլեզու *a.* without a tongue, dumb.

Անլիութիւն *s.* imperfection, fault; — հասակի՝ ամաց, youth.

Անլիր *a.* incomplete, imperfect.

Անլուկ *a.* free from vexation, tranquil.

Անլծակից, Անլծորդ *a.* disjoined, separate; that cannot be united; virgin.

Անլոյծ, լուծից *a.* indissoluble; insoluble.

Անլոյս *a.* dark, obscure.

Անլու *a.* disobedient. [pure.

Անլուայ, Անլուաց *a.* unwashed, im-

Անլուծական, Անլուծանելի *a.* indissoluble, incorruptible; insoluble, not to be decomposed; that cannot be deciphered. [ble.

Անլուծիչ *a.* indissoluble, incorrupti-

Անլուութիւն S. Անլսողութիւն.

Անլուսին *a.* moonless, dark.

Անլուր *a.* unheard of, new, extraordinary; deaf; disobedient; without news, — tidings.

Անլռաբար, Անլռական, Անլռելի *a.* that never ceases to speak; incessant; *ad.* incessantly.

Անլսող *a.* deaf; disobedient.

Անլսողութիւն *s.* disobedience.

Անլսուրդ S. Անլսող.

Անխաբ *a.* infallible; sure.

Անխախուտ, Անխախտ, Անխախտական, Անխախտելի *a.* firm, unshakeable; indissoluble, incorruptible; inviolable.

Անխակ *a.* ripe. [peace, turbulent.

Անխաղաղասէր *a.* that loves not

Անխաղաց *a.* without movement, stationary; indeclinable.

Անխայեմ, եցի *vna.* to be economical; to spare, to except; to respect; to preserve.

Անխայութիւն *s.* economy; respect; exemption; preservation.

Անխառն *a.* unmixed, simple, pure.

Անխառնութիւն *s.* purity, unmixed state; intemperance.

Անխարդախ *a.* sincere, ingenuous; loyal, faithful; simple, unadulterated; well disposed; *ad.* sincerely; loyally, faithfully, with simplicity, innocently.

Անխարխար *a.* unruined, solid.

Անխարիսխ *a.* without base or foundation; anchorless.

Անխարշ *a.* not boiled, raw.

Անխաւար *a.* clear, luminous, bright.

Անխափան *a.* incessant, unintermitted, unceasing, continual; unobstructed; *ad.* without opposition or intermission, constantly, incessantly, continually.

Անխզելի *a.* indivisible, infrangible.

Անխէթ *a.* unsuspicious; sincere.

Անխիղճ *a.* not scrupulous; unexceptionable.

Անխիտ *a.* thin, uncompact, porous.

Անխղճական S. **Անխիղճ**.

Անխմոր, **ից** *a.* unleavened, azymous, unfermented.

Անխնամ *a.* unprotected, forlorn, destitute.

Անխնամակալու *a.* that does not protect; unprotected, forlorn.

Անխնամեմ, **եցի** *va.* to be careless.

Անխնամութիւն *s.* carelessness, heedlessness.

Անխնայ, **յ–**, *a.ad.* without compassion; indiscreetly, prodigally, profusely.

Անխնայեմ, **եցի** *vn.* to be lavish, to be prodigal; to be void of compassion.

Անխնայութիւն *s.* cruelty; prodigality, profusion.

Անխնդիր *a.* unsought, unsearched.

Անխոհեմ *a.* imprudent, indiscreet; inconsiderate, unadvised, rash.

Անխոհեմաբար *ad.* imprudently.

Անխոհեմութիւն *s.* imprudence.

Անխոյզ *a.* that does not search or examine; unsought, unsearched; inscrutable, unsearchable.

Անխոնարհելի *a.* that cannot be humbled, stern, undaunted: firm.

Անխոնաւ *a.* unmoist, dry.

Անխոնջ *a.* indefatigable; fresh, unfatigued; stubborn, obstinate; *ad.* indefatigably.

Անխոչ *a.* without obstacle or impediment.

Անխոռ *a.* not stolen, not purloined, not undermined, entire, perfect.

Անխոտոր, **Անխոտորնակ** *a.* that does not wander; straight.

Անխորամանկ *a.* ingenuous, naive, artless.

Անխորհուրդ *a.* inconsiderate, rash, imprudent.

Անխորհուրդ, **Անխորհրդաբար** *ad.* imprudently, inconsiderately, without riflection.

Անխորհրդածութիւն *s.* thoughtlessness.

Անխորհրդապահ, **աց** *a.* that does not keep secret, indiscreet.

Անխորհրդապահութեն *s.* indiscretion.

Անխորհրդութիւն *s.* inconsiderateness, rashness, temerity.

Անխորշ *a.* without a bay.

Անխորշելի *a.* inevitable.

Անխոց, **Անխոցելի** *a.* invulnerable.

Անխոցութիւն *s.* invulnerability.

Անխուլ *a.* indestructible; inconsiderate, blind, unthinking.

Անխուճապ *a.* intrepid, calm.

Անխռով *a.* unruffled, calm, peaceable.

Անխռով, **Անխռովաբար** *ad.* without perturbation.

Անխռովութիւն *s.* calmness, tranquility.

Անխտիր, **յԱնխտիրս**, **Անխտրաբար** *a. ad.* indifferent; indiscreet; indifferently; indiscreetly.

Անխտրոց *a.* without interval or intermedium.

Անխտրութիւն *s.* indifference; indiscretion.

Անխրախոյս, **Անխրախուսելի** *a.* disheartened, dispirited, cowardly.

Անխրամ, **Անխրամատելի** *a.* breachless, solid.

Անխրատ, **ից**, **Անխրատական** *a.* undisciplined, irregular, licentious, incorrigible.

Անխրատութիւն *s.* indocility; irregularity, licentiousness; incorrigibleness.

Անխօս *a.* dumb; irrational.

Անխօսանամ, **ացայ** *vn.* to become dumb; to be dumb; to be silent.

Անխօսութիւն *s.* dumbness; irrationality.

Անխօսուն, **մնոց** S. **Անխօս**.

Անծագելի *a.* that cannot be enlightened, dark, gloomy.

Անծախ, **Անծախական** *a.* inconsumable; incombustible.

Անծախաբար, **Անծախապէս** *ad.* without being consumed.

Անծաղիկ *a.* that does not flower or blossom.

Անծաղր *a.* that never smiles, grave, serious.

Անծաղրածու, **աց** *a.* that does not

ridicule, not scornful, not apt to deride. [tough.

Անծամ *a.* that cannot be chewed,

Անծանակ *a.* that is not mocked; free from shame.

Անծանօթ, ից *a.* ignorant; unknown; foreign; ignoble, obscure; յ-ս, *ad.* ignorantly, unwittingly; incognito, without being known; յ-ս լինել, to be in disguise; to feign or counterfeit.

Անծանօթանամ, ացայ *vn.* to be unknown; to be disguised.

Անծառ *a.* treeless.

Անծառայ *a.* free; without servants.

Անծառայական *a.* that is not servile, free.

Անծասքելի S. Անծամ. [tile.

Անծաւալելի *a.* irreducible; not duc-

Անծեղ, այ *s.* magpie, pie.

Անծեր, Անծերական, Անծերանալի *a.* not subject to the effects of age, perpetual, durable. [ren, steril.

Անծին *a.* unbegotten, unborn; bar-

Անծնելութիւն *s.* unborn state.

Անծնութիւն *s.* barrenness: S. Անծնելութիւն. [steril.

Անծննդական, Անծնունդ *a.* barren,

Անծննդութիւն *s.* sterility.

Անծուծ *a.* that does not give suck; that no longer suckles.

Անծուփ *a.* not agitated by the waves, calm, peaceable.

Անկ, ից *a.* proper, fit; -է, *v.imp.* it ought, it is right, it is proper; յ- ելանել, to be completed, accomplished, finished.

Անկազմ *a.* unbuilt, unfurnished, unprepared, not ready; unbound.

Անկազմութիւն *s.* want of construction, unfurnished state, imperfection.

Անկախ *a.* independent, free; free from all attachment, disengaged.

Անկախութիւն *s.* independence, freedom.

Անկած, ից *a.* fallen; abject, vile, despicable; booty, spoil.

Անկածութիւն *s.* fallen state, humiliation. [*ad.* involuntarily.

Անկամ *a.* involuntary, forced; յ-ս,

Անկամակութիւն, Անկամութիւն *s.* unwillingness, constraint, compulsion.

Անկայ, Անկայական, Անկայան, Անկայուն *a.* unestablished, unfounded, unsupported, uncertain, frail.

Անկան, ից *s.* mortar; ծեծել յ-ի, to pound or beat in a mortar.

Անկանգնելի *a.* that cannot rise again; that cannot be reestablished.

Անկանեմ, անկի *va.* to lay the groundwork of lace; to weave; to twine.

Անկանիմ, անկայ *vn.* to fall; to chance, to happen; to descend, to flow; to steal away, to slip away, to escape; to fall to ruin, to decay, to be impaired, to decline, to fail; to place one's self, to fix one's self, to belong, to have relation to; to put down, to deposit; to pass away; -ընդ, to undergo; to sink under; -երեսաց, to be put out of countenance, to be abashed; -զբանիւք, to hold a long discourse; -յոք, to associate with (any one), to be intimate with, to confide in; -ի միտս, զմտօք, ի սիրտ, to remember, to recall; -ի ճանապարհ, ի չու, յուղի, to voyage, to travel; -ի վերայ, to come upon unawares, to attack, to surprise; -ի մտաց, to become made, to lose one's reason; -ի կենաց, to die, to lose one's life; -ի յուսոյ, to lose hope, to become desperate; -ի վերայ երեսաց, to fall upon one's face, to prostrate; -յոտս ուրուք, to throw one's self or fall at the feet of some one; -ի ձեռս ուրուք, to fall in the hands or power of some one; -ընդ ումեք, ընդ միմեանս, այր ընդ այր, to come to blows, to fight, to combat, to quarrel, to dispute; -յիշխանութենէ, to lose one's authority, to fall from one's power.

Անկանոն *a.* irregular, anomalous.

Անկանոնութիւն *s.* irregularity, anomaly. [the apocrypha.

Անկանոնական *a.* apocryphal; -գիրք,

Անկաշառ, Անկաշառառու *a.* that does not take bribes, incorruptible, honest.

Անկապ *a.* loose, untied, free.

Անկապուտ, Անկապտելի *a.* that cannot be plundered or robbed.

Անկասելի *a.* incessant, unceasing.

Անկասկած, ից *a.* sure, certain, indubitable.

Անկասկած, Անկասկածելի, յԱնկասկածի, յԱնկասկածս, Անկասկածաբար *ad.* surely, certainly, doubtless.

Անկատակ *a.* not in jest, serious.

Անկատար *a.* imperfect, incomplete, defective, faulty; *ad.* imperfectly, incompletely, faultily; *s. gr.* imperfect tense.

Անկատարած *a.* infinite, endless.

Անկատարելութիւն, Անկատարութի

s. imperfection, incomplete state; defectiveness, want, faultiness.

Անկար *a.* seamless; not sewed: incapable, unable, weak, feeble, impotent; impossible; – *է*, it is impossible.

Անկարանամ, *ացայ vn.* to be unable, to be incapable, to be insufficient.

Անկարգ *a.* without order, in disorder, disorderly, irregular, confused, indistinct, not methodical; intemperate, inordinate, immoderate, excessive, licentious.

Անկարգ, յԱնկարգ, Անկարգաբար, Անկարգապէս *ad.* disorderly, out of order, in confusion, irregularly; inordinately, excessively, intemperately.

Անկարգեմ, *եցի va.* to disorder.

Անկարգութիւն *s.* disorder, confusion, irregularity; inordinateness, intemperance, excess, immoderation.

Անկարելի S. Անհնարին.

Անկարեկան S. Անխաս.

Անկարեկիր, Անկարեկից *a.* incompassionate, cruel, inhuman; inflexible, inexorable.

Անկարեկցութիւն *s.* want of compassion, insensibility.

Անկարծ, Անկարծելի *a.* unexpected, unforeseen, extraordinary, unaccountable; *յ–ս*, *ad.* suddenly.

Անկարկատ, Անկարկատելի *a.* not mended, not repaired; irreconcilable.

Անկարող *a.* unable, feeble, incapable.

Անկարողանամ S. Անկարանամ.

Անկարութիւն *s.* impossibility; incapacity.

Անկարօտ *a.* not indigent, not in want.

Անկարօտաճեմ *a.* not compelled to move on the ground.

Անկարօտութիւն *s.* plenitude, fulness, abundance.

Անկաւոր S. Յանգաւոր.

Անկելանոց, *աց s.* hospital.

Անկեղակարծ *a.* certain, sure.

Անկեղծ, *ից*, Անկեղծական, Անկեղծաւոր, Անկեղծիկ *a.* sincere, candid, frank, ingenuous; true, loyal, faithful; *ad.* sincerely, ingenuously, candidly.

Անկեղծութիւն *s.* sincerity, candour; loyalty, fidelity; honour, truth.

Անկեղտ *a.* unsullied, pure.

Անկենդան *a.* lifeless, dead; cold, without ardour, – animation; inanimate; *s. chem.* azote.

Անկեր, Անկերակուր *a.* that does not eat; not eaten: that has nothing to eat, famished.

Անկերակրութիւն *s.* want of food; hunger: phthisis.

Անկերպ, Անկերպարան *a.* shapeless; unformed, imperfect; ugly.

Անկերպագրելի *a.* that cannot be figured; not to be described; unimaginable. [*s.* deformity.

Անկերպարանութիւն, Անկերպութիւն

Անկերպաւոր S. Անկերպ.

Անկէզ, Անկիզելի *a.* unburnt; incombustible. [pause, eternal.

Անկէտ *a.* without a point; without

Անկիզանող *a.* not fit to burn; that will not burn.

Անկին *a.m.* unmarried.

Անկիր *a.* not subject to passions; impassive, incapable of suffering.

Անկիրթ *a.* uncultivated, uncivilized, unpolished; indocile, untractable.

Անկից *a.* not united, separate; not closed, not healed.

Անկիւն, *կեանց s.* angle; corner, nook; – *ճանապարհի*, turning of the road; *բութ* –, obtus-angled, obtusangular; *սուր* –, acute-angled; – *հաստանել*, S. Ակն հաստանել.

Անկիւնական *a.* angular; – *վէմ*, *քար*, corner-stone.

Անկիւնաչափ *s.* goniometer.

Անկիւնաչափութիւն *s.* goniometry.

Անկիւնաւոր *a.* angulous, angular.

Անկղ S. Անգղ and Անգեղ *s.* [lute.

Անկղզիանամ, *ացայ vn.* to be disso-

Անկնդրուկ *a.* without incense, – oblation.

Անկնիք, Անկնքելի *a.* not marked, unsealed: not baptized.

Անկշիռ, Անկշռելի *a.* that cannot be weighed; inestimable, incomparable.

Անկոխ, Անկոխելի *a.* untrodden, desert.

Անկողին, *ղնոյ*, *նից*, *նաց s.* bed; mattress; nuptial couch; – *անպիտան*, *անարգ*, truckle-bed; *խորշ անկողնոյ*, alcove; *դնել յանկողնի*, *ննջեցուցանել*, to put to bed; *գնալ յ–*, *ննջել*, to go to bed: *փետրալից* –, feather-bed; *յարդալից* –, straw-bed; *–ս արկանել*, to make a bed; *մտանել յ–*, to go to bed; *յառնել յանկողնէ*, to get up; *յարդարել զ–*, to make the bed; *անկեալ դնիլ յանկողնի*, to take to one's bed.

Անկողնագործ *s.* mattress-maker.

Անկողնակից *s.* bed-fellow.
Անկողնակցութիւն *s.* bed-fellowship.
Անկողնարկ լինիմ *vn.* to make a bed.
Անկողոպուտ, Անկողոպտելի *a.* that cannot be plundered, not subject to devastation.
Անկոչ *a.* uncalled, not named; uninvited; – բազմական, parasite, smell-feast, trencher-friend.
Անկոտոր *a.* infrangible, hard.
Անկործան *a.* not fallen; that cannot fall or be thrown down.
Անկորուստ *a.* that cannot be lost, imperishable; *ad.* without loss. [weft.
Անկուած, ոյ *s.* weaving, texture;
Անկուածոյ, ից *a.* woven.
Անկումն *s.* fall, tumble; overthrow, ruin, subversion; degradation; cadence; վերստին –, second fall; relapse.
Անկուշեմ, եցի *va.* to kick, to strike with the hind feet; to resist, to reject.
Անկուռ *a.* rough, rude, uneven, rugged. [rough.
Անքոփ *a.* not carved, unpolished,
Անկռինչ *a.* without cries; unable to cry out.
Անկռիւ *a.* without contention, – resistance, – quarrel. [ble.
Անկռուելի *a.* impregnable; invinci-
Անկտակ *a.* intestate.
Անկրական *a.* impassive, insensible.
Անկրելի *a.* unable to bear; insupportable.
Անկրթական S. Անկիրթ.
Անկրթութիւն *s.* want of discipline, indocility, rudeness.
Անկրօն, ից *a.* irreligious.
Անկրօնութիւն *s.* irreligion.
Անկցորդ *a.* disjoined, separate; that does not participate, that takes no share.
Անկքելի *a.* inflexible.
Անհագագ *a.* speechless; without aspiration; breathless. [indigest.
Անհալ *a.* not fusible; indissoluble;
Անհակառակելի *a.* indisputable, irresistible.
Անհակառակութ *s.* pacific conduct.
Անհաղորդ, ից *a.* that does not participate; incommunicable: that does not receive the communion.
Անհաղորդական *a.* incommunicable.
Անհաճոյ *a.* unpleasant, disagreeable, offensive; disgustful; – իմն օրինակաւ, disagreeably; – լինել, to displease; to disgust.

Անհաճոյանամ, ացայ *vn.* to displease, to be disagreeable.
Անհամ, ից *a.* insipid, unsavoury; nauseous, disgustful.
Անհամաձայն *a.* discordant, dissonant, incongruous; S. Անմիաբան.
Անհամաձայնութիւն *s.* discord, dissension, misunderstanding; disconvenience, incongruity, unsuitableness; S. Անմիաբանութիւն.
Անհամանամ, ացայ *vn.* to grow insipid, to be nauseous, to be disgustful.
Անհամառօտ *a.* not brief, not concise, prolix.
Անհամար *a.* innumerable, infinite.
Անհամբաւ S. Վատահամբաւ.
Անհամբաւելալ *a.* not divulged or made public.
Անհամբեր *a.* impatient; intolerant.
Անհամբերութիւն *s.* impatience; intolerance.
Անհամբոյր *a.* haughty, unsociable, reserved, austere, churlish, uncivil, morose, sullen, surly, harsh, forbidding.
Անհամեմատ, Անհամեմատական, Անհամեմատելի *a.* disproportionate; incomparable, unparalleled, matchless.
Անհամեմատաբար *ad.* incomparably, disproportionally.
Անհամեմատութիւն *s.* disproportion; inequality. [obscene.
Անհամեստ *a.* immodest, unchaste,
Անհամեստութիւն *s.* immodesty.
Անհամիմ S. Անհամանամ.
Անհամոզելի *a.* unpersuadable.
Անհամութիւն *s.* insipidity, ill flavour; nauseousness.
Անհայր *a.* fatherless.
Անհանգէտ *a.* not conformable, dissimilar, unequal; inconsequent, not inferible.
Անհանգիստ *a.* restless, fretful, agitated; turbulent, unquiet, tumultuous; *ad.* incessantly, always; – կալ, to fret, to be agitated, to fidget; – առնել, to fret, to agitate.
Անհանգիտութիւն *s.* disparity, inequality. [easiness; agitation.
Անհանգստութիւն *s.* inquietude, un-
Անհանդարտ *a.* fidgety, inquiet, noisy.
Անհանդարտութիւն S. Անհանգստութիւն.
Անհանդերձ *a.* unclad, naked.
Անհանդուրժակ, Անհանդուրժական, Անհանդուրժելի *a.* intolerable, insupportable.

Անհանճար, *ից*, *այ* *a.* foolish, imprudent, ill-advised. [dently.

Անհանճարաբար *ad.* foolishly, impru-

Անհանճարագոյն *a.* more or very foolish.

Անհանճարական S. *Անհանճար*.

Անհանճարութիւն *s.* folly, imprudence; insipidity, dulness.

Անհաշիւ S. *Անհամար*.

Անհաշտ, *Անհաշտական*, *Անհաշտելի* *a.* implacable, irreconcilable.

Անհաս, *ից* *a.* imperceptible, incomprehensible, inconceivable; unripe.

Անհասակոյ, *Անհասական*, *Անհասանելի* S. *Անհաս*.

Անհասութիւն *s.* incomprehensibility: unripeness.

Անհաստատ *a.* inconstant, changeable, variable, alterable: fragile.

Անհաստատութի *s.* inconstancy, instability, mutability, frailty: fragility.

Անհատ, *ից* *a.* undivided, indivisible, inseparable; incessant, continual; *s.* individual, one, atom.

Անհատաբար *ad.* indivisibly, inseparably; individually.

Անհատական *a.* individual, atomic.

Անհատահոս *a.* that flows incessantly.

Անհատուած, *Անհատուածելի* *a.* indivisible, inseparable.

Անհատութիւն *s.* inexhaustibleness; individuality. [payed.

Անհատուցումն *a.* that cannot be

Անհարազատ *a.* illegitimate, bastard, base-born, natural; altered, corrupted, false.

Անհարազատութիւն *s.* bastardy; falseness, alteration.

Անհարթ *a.* crooked, uneven, rough, rugged; awkward, rude, unpolished, coarse.

Անհարթութիւն *s.* unevenness, inequality of surface; want of politeness, rudeness, awkwardness, harshness, roughness, coarseness; – *օդոյ*, intemperance. [assured.

Անհարթչելի *a.* inevitable; fearless,

Անհարկ *a.* exempt from tax or impost.

Անհարսն, *Անհարսնական*, *Անհարսնացեալ* *a.f.* unmarried; whose marriage has not been consummated, virgin.

Անհարց *a.ad.* without asking.

Անհաց *a.* without bread, – the means of subsistence.

Անհաւան, *ից* *a.* incredulous, who makes difficulties; obstinate, stubborn, headstrong.

Անհաւանական, *Անհաւանելի* *a.* improbable, unlikely.

Անհաւանիմ, *եցայ* *vn.* to differ in opinion, to disagree; to be obstinate; to disapprove, to disallow.

Անհաւանութիւն *s.* incredulity; disapprobation; obstinacy.

Անհաւասար *a.* unequal.

Անհաւասարապէս *ad.* unequally.

Անհաւասարութիւն *s.* inequality, disparity, disproportion.

Անհաւաստի *a.* uncertain, unassured, doubtful; contingent, casual.

Անհաւաստութիւն *s.* incertitude, doubt, uncertainty; contingency.

Անհաւատ, *ից* *a.* incredulous, unbelieving, infidel, irreligious; incredible; – *լինել*, to disbelieve.

Անհաւատալի *a.* incredible.

Անհաւատամ, *ացի*, *Անհաւատանամ*, *ացայ* *vn.* to disbelieve.

Անհաւատարիմ *a.* unfaithful, disloyal, perfidious.

Անհաւատարմութիւն *s.* infidelity, disloyalty, treason, perfidy.

Անհաւատեմ, *Անհաւատիմ* S. *Անհաւատամ*.

Անհաւատութիւն *s.* incredulity, infidelity, irreligion.

Անհեդեդ, *Անհեթեթ* *a.* unfit, inept, foolish, absurd, fantastical, whimsical, grotesque, ridiculous, extravagant, silly, ill-shaped, ill-contrived, awkward; –*ս*, *ad.* absurdly, fantastically, ridiculously, awkwardly.

Անհեդեդութիւն, *Անհեթեթութիւն* *s.* absurdity, whim, extravagance; awkwardness, unfitness.

Անհետ *a.* without vestige, untraced; – *առնել*, to annihilate; – *լինել*, to be annihilated.

Անհետազօտ, *Անհետազօտելի* *a.* that cannot be traced or investigated; impenetrable, inscrutable. [*նել*.

Անհետանամ, *Անհետիմ* S. *Անհետ լի-*

Անհերքելի *a.* irrefutable; undeniable, incontestable.

Անհզօր S. *Անզօր*.

Անհիմն *a.* without foundation, – base.

Անհիւթ, *Անհիւթական* *a.* sapless, marrowless; incorporeal, immaterial, spiritual.

Անհմուտ *a.* unpractised, untried, new, inexperienced, ignorant.

Անհմտաբար *ad.* inexperienced, without ability, – knowledge of.

Անհմտութիւն *s.* inexperience, unskilfulness, ignorance.

Անհնազանդ *a.* disobedient, refractory, rebellious; – լինել, to disobey.

Անհնազանդիմ, եցայ *vn.* to disobey, to rebel. [transgression.

Անհնազանդութիւն *s.* disobedience,

Անհնար, ից *a.* impossible; յ–ս մտանել, to get embarrassed, to be entangled, to want resources, to be reduced to extremities, not to know what to do; յ–ից է, it is impossible.

Անհնարագոյն *a.* quite impossible; very difficult.

Անհնարաւոր *a.* impossible; imaginary; excessive, violent.

Անհնարիմ, եցայ *vn.* to be impossible; to be irremediable, to be desperate.

Անհնարին *a.ad.* impossible; extremely difficult; insupportable, intolerable; extreme, violent, excessive, enormous, horrible, terrible.

Անհնարութի *s.* impossibility. [old.

Անհնութիւն *s.* act of never growing

Անհոգ, ոյ *a.* negligent, heedless, indifferent, inattentive; confident, sure; –, յ–ս, *ad.* negligently, carelessly; confidently; indifferently; յ–ս կալ լինել, to be negligent or indifferent.

Անհոգանամ, ացայ *vn.* to be neglectful, inattentive, indifferent.

Անհոգի *a.* without soul; spiritless; inanimate.

Անհոգութի *s.* negligence, heedlessness, carelessness, inattention, lethargy.

Անհոլով *a.* indeclinable.

Անհողմ *a.* not agitated by the wind, calm, serene. [serenity.

Անհողմութիւն *s.* want of wind, calm,

Անհովիւ *a.* without shepherd, unattended.

Անհոտ *a.* without smell.

Անհուն *a.* not fordable; unfathomable, immense.

Անհուպ *a.* that does not approach, come near, touch; inaccessible; distant, far. [need of fire.

Անհուր *a.* without fire; that has no

Անհպատակ *a.* insubordinate; not subject. [tion.

Անհպատակութիւն *s.* insubordina-

Անհպարտ *a.* not haughty, humble, unpretending.

Անհպարտութիւն *s.* freedom from pride, humility.

Անհպելի S. Անհուպ.

Անհրաժեշտ *a.* inevitable, indispensable, necessary; irrevocable; *ad.* indispensably, necessarily, inevitably, irrevocably.

Անհրահանգ S. Անկիրթ.

Անհրաման *a.* without permission or licence. [seduce.

Անհրապոյր *a.* that does not allure or

Անհրաւէր *a.* who invites nobody: S. Անկոչ.

Անձայն *a.* without voice; mute, without sound; consonant.

Անձայնութի *s.* loss of voice; aphony.

Անձանձիր, Անձանձրոյթ *a.* indefatigable, diligent; *ad.* indefatigably, diligently.

Անձաւ, աց *s.* cavern, den, cave.

Անձաւախիտ *a.* cavernous.

Անձեռագործ. Անձեռակերտ *a.* not made by hands, natural, spiritual.

Անձեռն *a.* handless; without succour.

Անձեռնարկելի *a.* that cannot be taken in hand, extremely difficult; untractable. [wild.

Անձեռնընդել *a.* untameable, savage,

Անձեռնկալ *a.* helpless, without succour.

Անձեռնհաս *a.* that cannot reach or accomplish, incapable, unskilful.

Անձեռոց, ոց *s.* towel.

Անձեռոցիկ *s.* napkin.

Անձեւ, ից *a.* unformed.

Անձեւանամ, ացայ *vn.* to lose shape, to become deformed.

Անձիր *a.* unproductive, unfruitful; ungrateful, unthankful.

Անձխոտ *s. bot.* fumitory.

Անձկաբեկ *a.* panting with desire, very desirous. [sirable.

Անձկալի, Անձկական *a.* narrow; de-

Անձկակարօտ S. Անձկայրեաց.

Անձկամ, ացայ *vn.* to desire, to wish; to aspire to, to sigh for, to long for.

Անձկայրեաց *a.* burning with desire, sighing after. [Անձկամ.

Անձկանամ, ացայ *vn.* to be narrow; S.

Անձկանք *s.* lively desire, impatience; անձկանօք, *ad.* impatiently; սպասել անձկանօք, to wait impatiently.

Անձկացուցանեմ, ուցի *va.* to reduce to extremities, to force; to narrow, to contract, to restringe.

Անձկութիւն *s.* narrowness, contractedness; pressure; constraint; anxiety, inquietude, chagrin, trouble, vexation, care, affliction, tribulation, anguish.

Անձն, *ձին*, *ձանց* *s.* person; hypostasis, personality; creature, being; soul; mind; heart; myself, thyself, himself; *անձամբ*, personally; *անձամբ անձին*, by one's self, personally; *զանձամբ դառնալ*, to turn back; *զանձամբ արկանել*, to put on; *յանձին բերել*, to imitate; *յանձին առնել*, to accept, to approve; *չառնուլ յ—*, to refuse, to deny; *սիրէ նա զ— իւր* he loves himself; *վասն անձին եւեթ տամ պատասխանի*, I only answer for myself; *երդնում յ— իմ, թէ այդ այդպէս է*, on my soul, it is so; *զգաստանալ յանձին*, to revive, to recover one's senses; *փոյթ ունի նա վասն անձին*, he takes care of himself; *անձին առնել*, to commit suicide; *ձեռն յանձին հարկանել*, to boast of, to flatter one's self, to prick one's self; *յ— առնել*, to recommend, to confide; *յ— լինել*, to commend one's self, to have confidence in, to confide in, to be committed.

Անձնագեղ, *ոյ* *a.* well formed, elegant, handsome, beautiful.

Անձնագով *a.* boasting, blustering, swaggering.

Անձնագովութիւն *s.* self-praise, vainglory, arrogance; egotism.

Անձնադատ *a.* that condemns himself.

Անձնադիր *a.* that gives bail for another, responsible.

Անձնադիւր S. **Անձնդիւր**.

Անձնադսրով *a.* that blames himself.

Անձնախրոխտ *a.* vain, presumptuous, haughty.

Անձնակամ *a.* voluntary, with good will; free; — *կամօք*, *ad.* willingly.

Անձնական *a.* personal; hypostatical; own.

Անձնակից *a.* unanimous, with one accord.

Անձնակործան, **Անձնակորոյս** *a.* that ruins himself.

Անձնահաճ, **Անձնահաճոյ** *a.* presumptuous, vain.

Անձնահաճութիւն *s.* presumption, pride, vanity.

Անձնահամբոյր *a.* unanimous, consentaneous.

Անձնամատն *a.* that betrays himself; — *լինել* to betray one's self.

Անձնանախատ *a.* that reproaches himself.

Անձնանուէր *a.* self-devoted.

Անձնանուիրութիւն, **Անձնանուիրումն** *s.* self-devotion, self-sacrifice.

Անձնապահ *a.* on guard, cautious; *s.* royal guard, body-guard; — *լինել*, to be cautious, to be on guard.

Անձնապահապետ *s.* the commander or captain of the guard.

Անձնապանծ *a.* boastful, full of vanity; — *լինել*, to be extolled.

Անձնապաշտ *a.* that adores himself, interested, selfish, egoistical.

Անձնապարար *a.* that pampers himself, dainty, delicate.

Անձնապէս *ad.* personally; properly; hypostatically.

Անձնապուր, **Անձնապուրծ** *լինել՝ երթալ* *vn.* to escape, to fly, to have a narrow escape, to run away.

Անձնասէր *a.* selfish, self-interested; guilty of egotism; mild, courteous.

Անձնասիրութիւն *s.* selfishness, self-love; egotism.

Անձնասպան, *այ* *a.* that has committed suicide; *s.* self-murderer.

Անձնասպանութիւն *s.* suicide, self-murder.

Անձնավաճառ *a.* that sells himself.

Անձնատէր S. **Անձնիշխան**.

Անձնատոչոր *a.* that burns himself.

Անձնատուր *a.* that surrenders; addicted, subject; determined, desperate; — *լինել*, to abandon himself, to be addicted; to surrender, to capitulate; to refer.

Անձնացոյց *a.* ostentatious, pompous, full of affectation.

Անձնացուցանեմ, *ուցի* *va.* to be the vital or principal to an organized body, to animate; to vivify, to personify, to personate.

Անձնաւոր *a.* animated, alive, rational; personal; hypostatical.

Անձնաւորաբար *ad.* personally; hypostatically.

Անձնաւորական *a.* personal; hypostatical.

Անձնաւորեմ, *եցի* *va.* S. **Անձնացուցանեմ**.

Անձնաւորիմ, *եցայ* *vn.* to have a soul; to be animate; to live, to exist.

Անձնաւորութիւն *s.* personality; hypostasis; person.

Անձնդիւր *a.* given to pleasure, to one's own comforts, lazy, dissipated; selfish; comfortable.

Անձնդիւրութի *s.* dissipation; egotism,

selfishness; comfortableness; անձըն-դիւրութեամբ շրջել, to live delicately.

Անձնեայ, Անձնեղ a. personable, of good appearance, tall, well made, fine limbed.

Անձնընտիր լինել, առնել va. to seek for quiet, tranquillity, ease, to look after one's interests; - առնել, to choose among men. [independent.

Անձնիշխան a. free, that has freewill,

Անձնիշխանութիւն s. freewill, choice, free agency, independence.

Անձնիւր S. Անցնիւր.

Անձնյարգութիւն s. self-esteem, presumption. [negation.

Անձնուրացութիւն s. self-denial, ab-

Անձուկ, ձկի, ձկոյ a.s. narrow, strait; narrow passage, defile, strait, pass; desire, wish; - ունել, to desire, to wish.

Անձրեւ, ի, ոյ, աց s. rain; - իջանել, to rain; - արտասուաց, a flood of tears; յորդ -, violent, pouring rain; անձրե-ւաչափ (գործի), rain-guage.

Անձրեւաբախ a. beaten by the rain.

Անձրեւաբեր a. that brings rain, rainy.

Անձրեւաթաց a. wet with rain.

Անձրեւաթիւք s. drop of rain.

Անձրեւածին a. that engenders rain; copious.

Անձրեւակ s. fine rain.

Անձրեւակաթք S. Անձրեւաթիւք.

Անձրեւաձիր a. that gives or engenders rain.

Անձրեւային a. rainy, that abounds in rain, formed from rain.

Անձրեւայորդ a. rainy. [rain.

Անձրեւայորդք s. shower, violent

Անձրեւանամ, ացայ vn. to fall like rain.

Անձրեւաշիթ, -թք S. Անձրեւաթիւք.

Անձրեւաչափ գործի s. rain-guage.

Անձրեւաջուր s. rain-water.

Անձրեւածնունդ a. produced by rain.

Անձրեւեմ, եցի vna. te rain, to shower, to pour down; անձրեւէ, it rains.

Անձրուկ s. anchovy.

Անճահ a. inconvenient, unbecoming; -ս, ad. unseemly.

Անճաճանչ a. not brilliant, gloomy.

Անճանաչելի a. unrecognizable.

Անճանապարհ S. Անշաւիղ.

Անճաշակ a.ad. that fasts, fasting; without eating.

Անճառ, ից a. ineffable, unspeakable.

Անճառագայթ a. without rays, - light. [prodigious.

Անճառահրաշ a. very wonderful,

Անճառաշնորհ a. of wonderful grace, very graceful, admirable; very abundant.

Անճառապատկեր a. that has an admirable figure or appearance.

Անճառելի S. Անճառ.

Անճառութիւն s. ineffability; unspeakableness.

Անճար, Անճարակ a. unskilful, incapable; irreparable, irremediable.

Անճարակութիւն s. inability, incapacity.

Անճարանամ, ացայ vn. to be incapable; to be without remedy, to despair.

Անճարութիւն S. Անճարակութիւն.

Անճետ a. without posterity; - առնել S. Անճխտեմ.

Անճխտեմ, եցի va. to destroy the race of, to extirpate the posterity of.

Անճնշական, Անճնշելի a. incompressible.

Անճշդութիւն s. inaccuracy.

Անճողոպրելի a. inextricable.

Անճոռնի a. gigantic, enormous, monstrous; grotesque, extravagant, absurd, ridiculous, unseemly.

Անճոռնութիւն s. monstrosity, absurdity. [licious.

Անմախասէր a. not envious, not ma-

Անմահ, ից a. immortal.

Անմահաբեր a. that immortalizes, immortal. [ambrosia.

Անմահական a. immortal; - ճաշակ,

Անմահաճաշակ a. that does not taste death, immortal; that has a foretaste of immortality. [talized.

Անմահանամ, ացայ vn. to be immor-

Անմահարար S. Անմահաբեր.

Անմահացուցանեմ, ուցի va. to immortalize, to eternize.

Անմահացուցիչ a. that immortalizes.

Անմահութիւն s. immortality.

Անմայր a. motherless.

Անմասն a. without share or portion, that does not participate; bereft, destitute; - լինել, to be destitute, to be bereft; - առնել, to deprive.

Անմատոյց, Անմատչելի a. inaccessible, unapproachable.

Անմարդ, Անմարդաբնակ a. uninhabited; uninhabitable, desert, unfrequented, lonely.

Անմարդադոյն *a.* more or very inhuman, – fierce, – unkind.

Անմարդանամ, *ացայ vn.* to be deserted, to be dispeopled.

Անմարդացուցանեմ, *ուցի va.* to depopulate, to dispeople, to desolate.

Անմարդի *a.* inhuman; unkind, uncivil, brutal; desert, uninhabited; – *կացուցանել՝ զնել*, to unman, to divest of humanity; to depopulate.

Անմարդութիւն *s.* depopulation; inhumanity, barbarity; incivility, brutality.

Անմարթ *a.* impossible; very difficult; indecent, unseemly; – *է*, it is not fit; it is impossible.

Անմարմին, **Անմարմնաւոր** *a.* incorporeal, immaterial. [*մարմին.*

Անմարմնական, **Անմարմնային** S. **Ան-**

Անմարմնութիւն *s.* incorporality.

Անմարս *a.* undigested.

Անմարսութիւն *s.* indigestion.

Անմարտ, **Անմարտնչելի** *a.* impregnable, invincible.

Անմաքուր, **Անմաքրական** *a.* impure, filthy, indecent, obscene, vile. [ly.

Անմաքրապէս *ad.* impurely, indecent-

Անմաքրասէր *a.* that does not love purity, uncleanly, filthy, indecent.

Անմաքրութիւն *s.* impurity, uncleanness, filthiness, indecency.

Անմեծար *a.* vile, abject, degraded.

Անմեծարդի *a.* who desires not honour or preferment.

Անմեծարդութիւն *s.* want of ambition, indifference to honour.

Անմեծարութիւն *s.* want of respect; – *հիւրոց*, inhospitality.

Անմեկին *a.* not clear, indistinct, not evident, not explicit, not plain: indivisible.

Անմեկնելի *a.* inseparable, indivisible; inexplicable, inexpressible.

Անմեղ, *ի*, *աց* *a.* impeccable; innocent; harmless, silly; – *կացուցանել*, to acquit.

Անմեղաբար, **Անմեղս** *ad.* innocently.

Անմեղադիր *a.* that excuses, pardons; – *առնել*, to excuse, to pardon; – – *զանձն*, to excuse one's self, to justify himself. [able.

Անմեղադրելի *a.* excusable, pardon-

Անմեղադրութիւն *s.* excuse, apology.

Անմեղանամ, *ացայ vn.* to be innocent.

Անմեղանչական *a.* impeccable; innocent.

Անմեղացուցանեմ, *ուցի va.* to acquit, to declare innocent, to clear.

Անմեղկելի *a.* not to be softened, hardhearted, inflexible, inexorable.

Անմեղութիւն *s.* innocence; impeccability.

Անմեռ S. **Անմահ.**

Անմեռուկ *s. bot.* purslain.

Անմերձենալի *a.* not to be accosted, inaccessible; untouched.

Անմի առնեմ *va.* to leave not one, to exterminate.

Անմիաբան *a.* discordant, different, dissonant, diverse, divided, not agreed, at variance, contrary; irreconcilable; – *լինել*, to differ, to disagree.

Անմիաբանիմ S. **Անմիաբան լինիմ.**

Անմիաբանութիւն *s.* discord, dissension, disagreement, difference, misunderstanding; – *ձայնի*, discordance, dissonance.

Անմիասնական *a.* discordant, incompatible, inconsistent.

Անմիասնականութիւն *s.* incompatibility, inconsistency.

Անմիջաբար, **Անմիջապէս** *ad.* immediately, directly.

Անմիջական *a.* immediate, direct.

Անմիջնորդ *a.ad.* without mediator.

Անմիս *a.* fleshless; without meat.

Անմիտ *a.* mad, silly, brainless, senseless, stupid, foolish, irrational, crazy.

Անմխիթար *a.* disconsolate, inconsolable; *ad.* disconsolately.

Անմնացական *a.* inconstant, variable, uncertain, transitory.

Անմշակելի *a.* incapable of cultivation.

Անմոլար, **Անմոլոր** *a.* infallible, unerring; – *աստեղք*, fixed stars.

Անմոլորութիւն *s.* infallibility.

Անմոլորապէս *ad.* infallibly.

Անմոռանալի, **Անմոռաց** *a.* that does not forget; unforgotten; that cannot be forgotten; *ad.* without fail, infallibly.

Անմոռացութիւն *s.* eternal remembrance. [ken.

Անմուլ, *մլից* *a.* indomitable, unbro-

Անմուտ *a.* the entrance to which is shut; without entrance; impenetrable, inaccessible.

Անմուրուս *a.* beardless.

Անմռնչելի, **Անմռունչ**, *մռնչի* *a.* mute, speechless; that will not speak.

Անմտաբար *ad.* foolishly, stupidly, inconsiderately, ignorantly, rashly, madly.

Անմտագոյն *a.* more or very senseless, – foolish, – stupid.

Անմտադիր *a.* inattentive, careless, inconsiderate, unmindful.

Անմտադրութիւն *s.* inattention, want of application, carelessness, inconsiderateness, inadvertence.

Անմտանամ, *ացայ vn.* to lose senses, to become crazy or stupid.

Անմտութիւն *s.* madness, craziness, fatuity; phrensy; folly, silliness, imprudence, extravagancy, absurdity.

Անմօրուք, **Անմօրուս** S. **Անմուրուս**.

Անյագ, *ագ a.* insatiable, greedy, gluttonous; – *ուտել*, to devour.

Անյագ, **Անյագաբար** *ad.* insatiably, greedily, gluttonously.

Անյագութիւն *s.* insatiableness, greediness, gluttony.

Անյաղթ, **Անյաղթելի** *a.* invincible, unconquered, insurmountable, ungovernable.

Անյայտ, *ից a.* not evident, not manifest, obscure, hidden, secret; apocryphal. [re.

Անյայտագոյն *a.* more or very obscu-

Անյայտեմ, *եցի va.* to annihilate; to hide.

Անյայտիմ, *եցայ vn.* to be annihilated, to vanish, to disappear.

Անյայտանութիւն, **Անյայտութիւն** *s.* obscureness, occultness, secretness.

Անյանգ *a.* rhymeless.

Անյապաղ *a.* prompt, diligent; *ad.* promptly, diligently, without delay.

Անյաջող, **Անյաջողակ** *a.* unfavourable, unlucky, unfortunate, disadvantageous.

Անյաջողակ *a.* awkward, incapable.

Անյաջողակութիւն *s.* unskilfulness, awkwardness.

Անյաջողութիւն *s.* unfavourableness, unfortunateness, disadvantage.

Անյաջորդ *a.* without successour, – succession; unchangeable.

Անյատակ, **Անյատակելի** *a.* bottomless; very deep.

Անյատուկ *a.* improper.

Անյարդար *a.* unpolished, unfurnished, unprovided, unprepared, out of order; hard, cold, raw; *կին* –, slut.

Անյարիր *a.* that cannot rise.

Անյարկ *a.* shelterless, without roof, houseless.

Անյարմար *a.* incongruous, unsuitable, unbecoming, not appropriate; unskilful, insufficient, incapable.

Անյարմարագիր *a.* that writes in an unbecoming manner; indecently written.

Անյարմարութիւն *s.* incongruity, impropriety; incapacity, insufficiency.

Անյաւ *a.* infinite, interminable.

Անյեղ, **Անյեղլի**, **Անյեղյեղուկ** *a.* immutable, unchangeable, constant.

Անյեղաբար, **Անյեղապէս** *ad.* immutably. [յեղ.

Անյեղաշրջելի, **Անյեղափոխելի** S. **Ան-**

Անյեղութիւն *s.* immutability.

Անյերկուանալի *a.* indubitable.

Անյիշաչար *a.* that easily forgives, that does not bear malice.

Ընդդիմադարձութիւն *s.* opposition, resistance; antiperistasis.

Ընդդիմադիր, *դրաց a.* opposed, contrary; opposite.

Ընդդիմադրեմ, *եցի va.* to oppose, to object. [jection.

Ընդդիմադրութիւն *s.* opposition, ob-

Ընդդիմախօս &c. S. –*բան* &c.

Ընդդիմակ, *աց a.* contrary, opposite; *s.* opposite extremes, adversity, disgrace, calamity; – *զօրութիւն*, coercive power; –*ս դնել*, to oppose, to contract.

Ընդդիմակաց լինիմ, **Ընդդիմակայեմ**, *եցի vn.* to oppose, to resist.

Ընդդիմակայութիւն *s.* resistance.

Ընդդիմակայ S. **Ընդդիմակաց**; – *ցաւք* or –*ք*, adversity, calamity.

Ընդդիմակայութիւն, –*յումն s.* opposition, resistance; confutation, refutation, dispute, controversy.

Ընդդիմակաց, *աց a.* that resists, opposite, contrary.

Ընդդիմակացութիւն *s.* opposition, resistance. [nist.

Ընդդիմակից *a. s.* adversary, antago-

Ընդդիմակողմն *s.* opposite side, reverse, wrong side.

Ընդդիմակրութիւն *s.* antipathy.

Ընդդիմակցութի S. **Դիմամարտութի**.

Ընդդիմահար, *աց a.* opposite, that opposes, resists; hard, solid, opaque.

Ընդդիմահարիմ, *եցայ vn.* to resist; to repel, to repercute.

Ընդդիմահարութիւն *s.* opposition, resistance; counterblow, rebound; *phys.* impenetrability.

Ընդդիմամարտ, *ից*, –*մարտիկ*, *տկաց a.* contrary, inimical, opposite; *s.* adversary, antagonist.

Ընդդիմամարտութիւն *s.* opposition, resistance, action, combat.

Ընդդիմանամ, *ացայ vn.* to resist, to contrast, to be repugnant, to mutiny.

Ընդդիմասովոր *a.* refractory, restive; S. **Հակառակասէր**.

Ընդդիմարգել, *ից s.* barricade; – *կանգնել*, to raise a –; *կործանել զ–*, to force a –.

Ընդդիմաքննութի *s.* contrary thought or sentiment. [des.

Ընդդիմոտունք, *տանց s. pl.* antipo-

Ընդդիմութիւն *s.* resistance, opposition; contradiction, contrariety, discord; hinderance, obstacle; strife; dislike, aversion, repugnance, conflict, trouble, implication.

Ընդել, –*ակ*, –*ական a.* familiar, domestic, tame, easy, mild, tractable, approachable.

Ընդելակից *a.* familiar, intimate, bosom, linked or knit together in the closest bonds of friendship, intimately acquainted ; – լինել S. Ընդելակցիմ.

Ընդելակցիմ, եցայ *vn.* to grow familiar, to make acquaintance.

Ընդելանիմ, լայ *vn.* to grow familiar, to become familiar ; to make acquaintance ; to get used or accustomed to, to habituate one's self.

Ընդելասէր *a.* familiar, tame, domestic.

Ընդելացուցանեմ, ուցի *va.* to make familiar, to tame; to instruct; to tame, to render mild and less ferocious.

Ընդելուզած S. Ընդելուզուած.

Ընդելուզանեմ, ուզի *va.* to enchase, to fit into, to set, to mount, to enchase, to set in a bezel; to string pearls, to interweave, to entwine, to braid, to form a tress; ընդելուզեալ ակամբք, մարգարտով, ոսկւով, adorned, set with jewels or pearls, ornamented with gold, or arabesqued; ընդելուզեալ յոսկի, set in gold.

Ընդելուզուած, Ընդելուզումն *s.* setting, mounting, enchasing, fitting in; weaving, web, braid, texture.

Ընդելութիւն *s.* familiarity; acquaintance; custom; յ– ածել, to familiarize with; – ունել ընդ ումեք, to be familiar with.

Ընդելուցանեմ S. Ընդելացուցանեմ.

Ընդեղէնք *s pl.* all kinds of pulse.

Ընդեղձանեմ, -նիմ *vn.* to supplicate, to implore, to beseech, to entreat, to beg.

Ընդերաբանութիւն *s.* enterology.

Ընդերական *a.* intestinal.

Ընդերահմայ, ից *s.* aruspex, soothsayer.

Ընդերեկ, -կք, -կս *ad.* towards evening.

Ընդերկայնամիտ S. Երկայնամիտ.

Ընդերկայնիմ, եցայ *vn.* to extend.

Ընդերկար *a.* long, extended; prolix; *ad.* long, at length; long time; amply, diffusely, tediously; – առնել, to prolong; – լինել, to be prolonged.

Ընդերկարաձգեմ; Ընդերկարեմ, եցի *vna.* to prolong, to make last a long time; to extend; to defer, to spin out, to great length.

Ընդերկարաձիգ *a.* very long.

Ընդերկարանամ, ացայ *vn.* to last a long time.

Ընդերկարութիւն *s.* length, extent, duration; – կենաց, long life, longevity.

Ընդերկնահաչ *a.* baying the moon; barking at in vain.

Ընդերկուանամ, ացայ, -կուիմ, եցայ S. Յերկուանամ.

Ընդերք, րաց *s.* entrails, guts, bowels, intestine, tripe; cæcum, blindgut; զսուրս նոցա –րաց իւրեանց մատուցանել, to slay others with their own swords.

Ընդէր *ad.* why? for what reason? wherefore? – ոչ? why not? &c.

Ընդիկ *s.* a few pulse, pease, beans,

Ընդիկտիոն, ի *s.* Indiction; շրջան –ի, cycle of –.

Ընդլայնեմ, եցի *va.* to amplify.

Ընդլայնումն *s.* amplification; *chem.* ductility.

Ընդլծեալ *a.* yoked together; bearing the same yoke.

Ընդխառնեմ, եցի *va.* to incorporate, to intermix.

Ընդխառնիմ, եցայ *vn.* to become incorporated; to intermeddle; to come to blows, to come to battle, to join battle; ընդխառնեցաւ պատերազմն, the battle was commenced.

Ընդխառնութիւն *s.* incorporation.

Ընդհայեցողական *a.* dioptric.

Ընդհայեցողութիւն *s.* dioptrics.

Ընդհանուր *a.* universal, general, common; –ք, or – տիեզերք, the universe, the whole world, or earth; – առնել, to generalize; *ad.* every where; in general.

Ընդհանրական *a.* universal, general, catholic; – եկեղեցի, the catholic or universal church; S. Թուղթ. Թողով.

Ընդհանրանամ, ացայ *vn.* to become general.

Ընդհանրապէս *a.* universally, generally, commonly, absolutely.

Ընդհանրացուցանեմ, ուցի *va.* to generalize.

Ընդհանրութն *s.* universality, generality.

Ընդհատ, ից *s.* interval, space; *a.* discontinued, intermittent; loose; different, separate; less, lesser; *mech.* intermittent; *ad.* differently, otherwise; nor more nor less; ամք սակաւ ինչ – ի բիւրուց, a little less than 10,000 years; Իւ իւիք իցեմք – ի նոցանէ, in what do we differ from them? ոչ ինչ – է ի նմանէ, he differs not from him; նուազ ինչ – ի փչմանէ լինել շնչոյն, to be almost at the last extremity, or last gasp; չեն – յերազոց, they resemble dreams.

Ընդհատեմ, *եցի va.* to interrupt, to discontinue, to cease; *-իմ vn.* to break off, to interrupt one's self.

Ընդհատիչ *s.* interrupter.

Ընդհատութիւն, *-ութեան s.* interruption, intermittence, intermission, discontinuance, relaxation, cessation.

Ընդհարկանեմ, *հարի va.* to knock, to clash, to strike, to beat; *- զերկաթ*, to strike fire.

Ընդհարկանիմ, *հարայ vn.* to fight, to smite, to knock, to strike, to thump at; *- ընդ միմեանս*, to knock against each other; to encounter each other; *- զգլուխն ընդ որմն*, to knock one's head against a wall; *- ընդ ճանապարհ*, to be on the way to ...; *- ի խղճէ մտաց*, to have remorse.

Ընդհարումն *s.* collision, shock, conflict.

Ընդ հուպ S. **Հուպ**.

Ընդձեռեմ, *եցի va.* to give, to put into one's hands, to grant; to take away, to appropriate to one's self.

Ընդ ձեռն *pr.* by means of, through.

Ընդ մէջ S. **Մէջ**.

Ընդմիմեանք *a.* subaltern.

Ընդմիջաբար *ad.* by means of, by some expedient.

Ընդմիջական *a.* immediate.

Ընդմիջաշաւիղ *s.* the middle of a way, or road, carriage-road, pitching.

Ընդմիջարկութիւն *s.* interposition, intermission, obstacle; partition wall.

Ընդմիջեմ, *եցի va.* to interrupt, to discontinue; to divide into two parts; to separate, to hinder; to intermeddle; *- զխօսս ուրուք*, to interrupt, to break in upon; *- զճանապարհն*, to go half the way; *յ- կենաց իւրեանց սատակիլ*, to die halfway on the road of life.

Ընդմիջիմ, *եցայ vn.* to be split, to be in half; to discontinue; *իբրեւ տօնն ընդմիջեցաւ*, passed the middle of the feast.

Ընդմիջութիւն *s.* mediocrity, mediation, middle way.

Ընդմտանեմ, *մտի vn.* to penetrate, to pierce, to strike through or pass across; to insinuate one's self; to pass through a filter.

Ընդմտանող *a.* piercing, keen, sharp.

Ընդմտաւոր, *աց a.* touchy, easily offended, sensible, feeling; thoughtful, pensive, anxious, gloomy, full of care.

Ընդոծին, *ծնաց s. a.* born in the house of one's master, domestic, servant; *-ք*, family; S. **Ընդաբոյս**.

Ընդոդնեցուցանեմ, *ուցի va.* to render proud, insolent, impertinent.

Ընդոդնիմ, *նեցայ vn.* to lie down at length, supine; to become idle, negligent, feeble: to adorn one's self magnificently, gorgeously; to make an ostentatious display, to dress pretentiously; to become vain or insolent.

Ընդոյր *a.* quiet; good.

Ընդոստ *a.* that leaps, that bounds; jumping, starting; *ad.* by stealth, stealthily; rebounding, by fits and starts; - -, by skips and jumps; palpitating, bounding; *- ի քնոյ լինել*, to awake suddenly, to start from sleep; *- ի քնոյն զարթուցանել*, to rouse suddenly, hurriedly; *- կալ*, to leap, to hop, to rebound; to start back with fear, to be startled, to retire, to frighten; *- - խաղալ*, to leap, to jump up, to rouse one's self; *- - երթալ*, to go with fear and trembling; to go by leaps; *- - խաղացումն ուսոց, շարժումն թիկանց, աչաց*, shrugging of the shoulders; nervous twitching of the eyes; *- անցանել*, to leap, to leap over.

Ընդոստախօս *a.* boaster, braggart.

Ընդոստական S. **Ընդոստուցիչ**.

Ընդոստնում, **Ընդոստչիմ**, *տեայ vn.* to leap, to recoil, to start with fear; to be aroused, frightened, dismayed; to shy, to be restive; to be disturbed, disconcerted; to get angry.

Ընդոստումն *s.* leap, reboud; shaking, concussion.

Ընդոստուցանեմ, *ուցի va.* to cause to leap or recoil; to shake, to move; to impel, to push, to spur on, to thrust; to awaken, to excite.

Ընդոստուցիչ *a.* exciting; stimulating, spurring on.

Ընդոտանեմ, *եցի va.* to trample under foot; to despise; to dishearten, to humble, to subdue, to drive out, to push.

Ընդոտնոց *s.* foot-stool.

Ընդուլնեմ, *եցի va.* to twist or break the neck; to tame, to bridle.

Ընդունակ, *աց a.* receiving, welcoming; capable, susceptible; acceptable, agreeable.

Ընդունակութիւն *s.* acceptance; capacity, reach; participation; *chem.* ca-

pacity; – *ջերմութեան*, heating –.

Ընդունայն *a.* vain, void, useless; empty; indolent, idle; *ad.* in vain, uselessly, empty; – *առնել զանկնկալութիւն*, to deceive, to disappoint, to frustrate, to destroy the illusions of; *ամենայն ինչ – է*, all is vanity.

Ընդունայնաբան, եց *a.* romancing, prattling, chattering, prating; *s.* chatterer, idle talker.

Ընդունայնաբանութիւն *s.* prate, prattle, chitchat, nonsense, chattering.

Ընդունայնախօս S. **Ընդունայնաբան.**

Ընդունայնամիտ *a.* vain, frivolous, foolish.

Ընդունայնանամ, ացայ *vn.* to be vain or empty; to vanish, to pass away, to come to nothing; to seek vanities.

Ընդունայնապարծ *a.* vain, proud, vain-glorious.

Ընդունայնաջան S. **Ջրաջան.**

Ընդունայնութիւն *s.* vanity, frivolity, futility; nothing.

Ընդունարան, աց *s.* vase, vessel, receptacle; recipient, reservoir: asylum, refuge, shelter; *mech.* well, tank, cistern; – *օդոյ*, air-box; – *շոգւոյ*, steam-chamber; –*ջերմջրոյ*, hot-water well.

Ընդունելի *a.* acceptable, admissible; agreeable, welcome; obtainable; that accepts, that receives.

Ընդունելութիւն *s.* reception, taking, acceptance, admission, obtaining, acquisition; cheer, feast, entertainment; *gr.* participle; – *փոխանագրոյ*, acceptation of a letter of credit, of a bill of exchange; – *առնելումեք*, to welcome, to feast, to entertain; – *առնել օտարաց*. to lodge strangers; – *առնել ցրտագին*, to receive coldly, to give a cool reception; – *դոյր յարքունիս, ի դեսպանատան*, there was a reception at court, at the embassy; *յ– լինել Աստուծոյ*, to believe in God.

Ընդունիմ, ընկալայ *vn.* to receive, to take, to admit, to embrace, to accept, to make welcome; to gather together; to derive; to impetrate, to obtain; to suit, to agree; to approve, to confess, to consent, to acknowledge; *ոչ* –, to deny, to disavow, to disapprove; – *զոք յաւազանէ*, to stand godfather, godmother to a child; *մեղս* –, to fall into sin; – *միտաց աչօք*, to conceive, to seize mentally; *պատուով* – *զոք*, to receive with honour; *ոչ բարւոք* – *զոք*, to give a bad reception; – *յինքեան*, to learn by heart; *յաստուածս ընկալաւ զնոսա*, he has made of them his gods; *ի քէն ընկալայ զկեանս*, I owe you my life.

Ընդունիչ, Ընդունող *a. s.* who receives, receiver, acceptor; recipient; –*նող ի մկրտութենէ*, godfather, godmother; –*նող խոստովանութեան*, confessor.

Ընդունչսարկու *a.* griming, grimacing, mimicking; grumbling.

Ընդուստ S. **Ընտուստ.**

Ընդպահկեմ,-եցի *va.* to abandon, to despise; to compel to walk; to vex, to harass.

Ընդ վայր *ad.* in vain, uselessly; – *հարկանել*, to throw away, to abandon, to despise; – *յածիլ*, to run here and there, to rove, to wander; – *խօսել*, to talk in vain, right or wrong, at random; – *պայքարումն*, idle dispute.

Ընդվայրաբան *a.* quack, charlatan, who talks in vain. [idle talk.

Ընդվայրաբանութիւն *s.* quackery,

Ընդվայրաբեր *a.* vagabond.

Ընդվայրաբոյս *a.* wild, savage.

Ընդվայրագնաց S. **Ընդվայրաբեր.**

Ընդվայրախոյզ *a.* seeking vain and foolish things; inquisitive.

Ընդվայրախօս *a.* S. **Ընդունայնաբան**, &c. *s.* magician, enchanter.

Ընդվայրահաչ *a.* barking at in vain, brawling.

Ընդվայրահար *a.* abject, vile, despicable, useless, vain.

Ընդվայրամիտ S. **Ջրախորհուրդ.**

Ընդվայրայած *a.* vagabond; prating, chattering.

Ընդվայրայածութիւն *s.* vagrancy.

Ընդվայրայօն *a.* shameless, lewd; – *պչրանք*, coaxing, dalliance, coyness, affectation, coquetry.

Ընդվայրապաճոյճ *a.* coquettish.

Ընդվայրասնունդ *a.* savage.

Ընդվայրասուն *a.* ill-bred, rough, rude; idle, lazy, sluggish, unoccupied.

Ընդվայրաքարշ S. **Գետնաքարշ.**

Ընդվայրաքարշիմ, շեցայ *vn.* to be dragged along the ground, to be fastened to the ground.

Ընդվայրաքնին *a.* curious, that seeks after useless things.

Ընդվայրաքննութիւն *s.* inquisitiveness, curiosity.

Ընդվայրընկեցիկ S. Ընդվայրահար.

Ընդվայրընկեց առնեմ *va.* to debase, to vilify; to despise.

Ընդվզանք *s.* haughtiness, pride.

Ընդվզեմ, եցի *va.* to twist, to wring the neck; -իմ *vn.* to revolt, to resist, to disobey, to rebel, to throw off the yoke; to lift up the horn, to become proud, arrogant, haughty, ostentatious; to turn the back disrespectfully; to throw one's self headlong, to precipitate; ընդվզեալ ի բաց վարել յիշխանութենէ, to free from domination, to shake off the yoke.

Ընդօրինակեմ, եցի *va.* to copy, to take a copy, to transcribe.

Ընդօրինակող *a.* perspective; *s.* painter of perspectives; copist.

Ընդօրինակութիւն *s.* perspective; transcription.

Ընթադրեմ, եցի *va.* to trample under foot; to subdue, to submit; to strike, to knock; to drive away, to disperse.

Ընթադրութիւն *s.* trampling upon; subjection; project, purpose, design; սպանանել ձիախրոխտ -թեամբք, to ride over and trample to death.

Ընթանալի *a.* that runs, that walks; current; - ճանապարհ, practicable, passable.

Ընթանամ, ացայ *vn.* to run, to run to; to apply; to slide; to gallop; to walk; to go, to depart, to pass; արշաւասոյր -, to run full speed, to rattle along full speed; երամովին, խռնն -, to run in company, in crowds, in a throng, to rush, to crowd, to flock; - զհետ ուրուք, to follow, to run after; - զհետ հետոց, շաւղաց ուրուք, to follow the tracks, to tread in the steps; - զճանապարհս իւր, to follow one's career; այր անդր -, to dip into, to run over a book; ընթանալով ասել, to say in few words, to touch lightly; - ի ճանապարհս պատուիրանաց, to observe or obey the commandments; բարւոք ընթանան իրք, affairs are thriving, business is prosperous; S. Ջեն, &c.

Ընթանոց S. Պենջակ.

Ընթաց, ի, Ընթացք, ցից *s.* course, race, gait, step, pace, way, means; progress, succession, train, trace, thread; method; -ս առնուլ, to run; -ից գործի, the feet; - մի, walking distance; հետի -, foot-race; - մտաց, flight of thought; - կենաց, life's career; յ-ս կենաց, in the course of life; յ-ից ճանաչել զոք, to know one by his gait; բարւոք լնուլ զ-ս իւր, to fulfil the duties of one's station, to discharge one's functions honourably; արգելուլ զ-ս բանին, to say concisely, to shorten discourse; -ք հողմոյ, direction of the wind; -ք արեգական, լուսնի, եղանակաց, course of the sun, moon, seasons; -ք սակարանի, վաճառանոցի, հրապարակի, course of Exchange, of the market.

Ընթացական *a.* racing; swift.

Ընթացակից *a.* concurring; accompanying; agreeing, concordant; coincident; concomitant.

Ընթացակցութիւն *s.* concurrence; accompanying; concomitance; retinue; coincidence.

Ընթացատեղ, Ընթացարան *s.* gymnasium or place for gymnastic exercises; S. Ասպարէզ. [index.

Ընթացիկ *s. mech.* slider, cursor,

Ընթացող *s.* walker, pedestrian.

Ընթացուցանեմ, ուցի *va.* to cause to run.

Ընթացք S. Ընթաց.

Ընթեռնլի *a.* legible, readable; *s.* reader, lecturer.

Ընթեռնում, երցայ *vn.* to read; - ընդ միտս, զաղն ձայնիւ, - to one's self; - ի ձայն, բարձրաձայն -, - aloud; - յականջս ուրուք, - in the presence of; անսայթաք -, - currently; կակազելով -, hesitatingly; to stammer; - հարեւանցի, վեր ի վերոյ, to look through, or to skim over a book; յառաջ վարել զ-ն, - on; կրկին եւ երեքկին -, - over and over again; տալ -, to cause -; մանուկ քո գիտէ՞ -, can your boy read? ընթերցեալ զթուղթդ, after the perusal of your letter; յետս ընդդէմ -, S. Ընդդէմ.

Ընթեր S. Առընթեր.

Ընթերակայ, ից, -կաց, աց *a.* adjacent, adjoining; assisting, present.

Ընթերցակից *a.* reading together.

Ընթերցանելի *a.* legible; *s.* reader, lecturer.

Ընթերցանեմ, -նիմ *vn.* to read.

Ընթերցանութիւն *s.* reading.

Ընթերցասէր, սիրաց *a.* that loves study, studious, well-read.

Ընթերցասիրեմ *vn.* to study, to read with pleasure.

Ընթերցասիրութիւն s. love of study.

Ընթերցարան s. reading book; lesson; school; *reading room.

Ընթերցիչ, -ցող s. reader, lecturer; ազդ առ -ցողն, advertisement, address to the reader; Ներողամիտ -ցող, gentle reader.

Ընթերցողութիւն s. reading; lectureship, order of lecturers in the church.

Ընթերցուած, ոց s. lecture; lesson.

Ընթերցուածագիր s. catechism (of S. Cyril).

Ընթերցուածատետր S. Ընթերցատետր.

Ընթերցումն s. lecture; տալ յ-, to give to read; to cause to read.

Ընթրակից S. Հացակից.

Ընթրատու a. who gives a supper.

Ընթրարան s. dining-room, supper-room; tea-garden; eating-, chop-house.

Ընթրեկերք s. supper-time.

Ընթրել, եցի vna. to sup, to take the evening's repast.

Ընթրիք, րեաց s. pl. supper, evening's repast; - տէրունեան, the Lord's -, the Last -; -ս առնել, գործել, տալ, to invite to -, to give a banquet; -ս առնել առ ումեք, to sup with ...; ի ժամ ընթրեաց, at supper-time.

Ընծախոս S. Ընձախոս.

Ընծայ, ից s. present, gift, offer, offering; - առնել, տալ, մատուցանել, to give, to make a present.

Ընծայաբեր, ից or աց a. that carries presents or offerings; - լինել S. Ընծայաբերել.

Ընծայաբերել, եցի vna. to carry presents, to offer, to make a present.

Ընծայաբերութիւն s. offer, offering; offertory.

Ընծայական, աց a. sacred; s. dedication; - գիր, թուղթ, dimissory letter, testimonials; - - դեսպանաց, credentials; - - բարեկամաց, letter of recommendation. [is offered.

Ընծայամատոյց a. that offers; that

Ընծայանալ, ացայ vn. to be presented, given.

Ընծայատար S. Ընծայաբեր.

Ընծայարան, աց s. place of offering, altar.

Ընծայաւոր S. Ընծայաբեր.

Ընծայել, եցի va. to offer, to present, to sacrifice, to give, to dedicate, to attribute, to lend, to propose, to refer, to confer, to devote, to render, to ascribe; to make, to furnish; to impose, to inscribe; ի լոյս -, S. Լոյս; - զոգի ի կեանս, to give life to; to vivify; - զոգ առատ պարգեւօք, to load with presents; to confer great services; -իմ vn. to offer, to present one's self; to shew, to make one's self seen; - առաջի ուրուք, to introduce one's self to the presence of; մահու -, to die.

Ընծայեցուցանել, ուցի va. to offer, to present; to show, to expose, to place in sight; to recommend, to introduce; զանձն -, to pass one's self off for another, to counterfeit; այլ իմն միտս -, to possess, or bear another meaning; սիրելի զանձն -, to make one's self beloved.

Ընծայեցուցիչ a. that presents; producing, productive.

Ընծայութիւն s. offer, offering, dedication; presentation; թուղթ -թե, letter of recommendation; Կոչումն -թեան, catechism; S. Ընթերցուածագիր; - լուսնի, new moon.

Ընծայումն s. act of offering, of dedicating one's self; presentation; offering, present; - Ս. Կուսի, Presentation of the B. V. M.; առաջնորդ ընծայման, godfather; - լուսնի, new moon.

Ընծուիմ, ուեցայ vn. to rise, to shine, to blaze forth, to glitter, to sparkle, to glare, to be bright.

Ընծուղս S. Ընձուղտ.

Ընկալուչ, լչի a. that receives; s. betrothed, husband; խօսեցալ -, affianced wife; -, mech. receiver.

Ընկապճիմ, ճեցայ vp. to bind one's self closely, to adhere to, to entwine one's self with.

Ընկենլի a. to be thrown away, to be despised.

Ընկենում, եցի va. to throw, to cast, to hurl, to repulse, to fling, to pour; to destitute, to depose, to deprive; - յերեսաց, to drive from his presence, to despise, to abandon; - յերկիւղ, to frighten; - յոք զհոգս իւրք, to confide the care of, to confide to; - զանձն իւր յառաջ, to present one's self, to throw one's self forward, to expose one's solf; - զզէնս, to throw down one's arms, to surrender; - ի կալանս, to thrust in prison; - յերկիր, to throw down, to slay, to fell to the earth; -

արտաքս, to thrust out, to hunt or drive away: to empty the stomach; – *քարինս*, to throw stones; *կիյս* –, S. Կիյք; to despise; – *զխարիսխ*, to cast anchor; *զաստուածութեամբն* –, to attribute to God; *ի վերայ միմեանց* – *զյանցանս*, to lay the blame on one another; –, *vn.* to be thrown, or cast away; – *արտաքս*, *արտաքոյ դրան*, to be thrown out, driven away; – *ի Ճա-նապարհի*, to be cast on the streets, to be thrown out on the common way.

Ընկեր, *աց s.* companion, comrade, partner; female companion; consort; fellow; agent; neighbour; partaker; peer; clerk; assistant; *չիք իմ* –, I am peerless, I have no equal; – *զ*–, *այր զ*–, one to another, mutually; *եր-դուան այր* –*ի իւրում*, they bound themselves by mutual oaths.

Ընկերաբար *ad.* as a companion or comrade, friendly.

Ընկերագիր, *գրաց s.* subscriber; – *առնել* S. Ընկերագրեմ; – *լինել* S. Ըն-կերագրիմ.

Ընկերագրեմ, *եցի va.* to subscribe to; –*իմ vn.* to become a subscriber to.

Ընկերագրութիւն *s.* subscription; *մտանել յ*–, to subscribe to; *ելանել յ*–*թենէ*, to cease to subscribe, to be no longer a subscriber; *պայմանք* –*թեան*, terms of –.

Ընկերադաւ *a.* that betrays or kills his neighbour.

Ընկերական *a.* social, sociable.

Ընկերակից *s.* companion, comrade, colleague; associate, partner; fellow-member, friar.

Ընկերակցիմ, *ցեցայ vn.* to accompany one's self, to associate one's self, to become a partner.

Ընկերակցութի *s.* association; society.

Ընկերահաշտ, –*հաշտեայ a.* supporting social, or public harmony.

Ընկերահաշտեայք, *ից*, –*հաշտիք*, *տեաց*, –*հաշտք* S. Ընկերհաշտութիւն.

Ընկերահեղձոյց *a.* that suffocates his neighbour; annoying, molesting one's friends.

Ընկերանամ, *ացայ* S. Ընկերակցիմ.

Ընկերանի *s. pl.* companions.

Ընկերասէր, *սիրաց a.* that loves his neighbour, charitable; sociable, companionable.

Ընկերատեաց *a.* that hates his neighbour.

Ընկերեմ, *եցի vn.* to accompany, to escort, to follow; to pair; to associate; to convoy; to aid, to assist.

Ընկերհաշտութիւն *s.* social harmony under various forms of government, monarchic, oligarchic, or democratic.

Ընկերշակեմ, *եցի vn.* to associate with, to conspire, to plot.

Ընկերութիւն *s.* company, society; accompanying, assistance, partnership, match; train, retinue; fraternity, brotherhood, congregation, order, commonalty, body; conversation: knowledge; sociability.

Ընկերսիրութիւն *s.* love of one's neighbour, charity; sociability.

Ընկերող *a.* that accompanies, that assists.

Ընկեցիկ *a.* thrown away, cast off, flung off; abject, vile; exposed, abandoned; *mech.* projectile; – *շարժումն*, projection; – *նիւթ*, refuse; – *առնել*, to throw, to cast; – *առնել զման-կունս ի գետ*, *զվաճառսն ի ծով*, to throw the children in the river, merchandize in the sea; – *առնել զմանուկ*, to expose a child; – *լինել*, to be thrown out, abandoned.

Ընկեցումն *s.* cast, projection, outcast; *phys.* projection.

Ընկինեալ կամ *vn.* to resist, to act as an obstacle, to hinder; *ի ծունր* –, to kneel down.

Ընկլնում, *կլայ* S. Ընկղմիմ.

Ընկլնում, *կլի*, Ընկլուզանեմ, *ուզի*, *կլ՛* S. Ընկղմեմ.

Ընկլուզիչ *a.* submerging, engulphing, swallowing.

Ընկլուզումն, Ընկլումն S. Ընկղմումն.

Ընկղմական *a.* immersive.

Ընկղմեմ, *եցի va.* to sink, to deepen, to submerge; to flow, to inundate, to drown, to plunge, to absorb, to bury; to dim, to cloud; *նիրհմամբ* –, to lull, to make sleepy.

Ընկղմեցուցանեմ S. Ընկղմեմ.

Ընկղմիմ, *եցայ vn.* to founder, to sink, to be plunged; to lose one's self; – *ի քուն*, to sleep soundly; *յանհնարին տրտմութիւն*, *յանմխիթար սուգ* –, to abandon one's self to melancholy, to be plunged in inconsolable grief; – *ի ծով փափկութեանց*, to swim in pleasure, in delight; *ի նախանձ* –, to envy, to be jealous of.

Ընկղմիչ *a.* immersing, submerging; *s.* corsair, pirate, buccaneer.

Ընկղմութիւն, Ընկղմումն *s.* depression; immersion, submersion.

Ընկճեմ, եցի *va.* to oppress, to humble, to bring down, to debase, to throw down, to subdue, to humiliate; to blunt; -իմ *vn.* to sink, to faint, to succumb; - զոք, to be a hindrance, or stumbling block to; - ընդ բեռամբ, to bow beneath a weight; to be overwhelmed, or disheartened; ընկճեալ յամաց, ընդ ամօք, bowed by the weight of years; - զիմն, to retire, to withdraw; to impede, to hinder.

Ընկողն S. Անկողն.

Ընկողմանեցուցանեմ, Ընկողմնեց-, ուցի *va.* to stretch, to lay down, to put to bed.

Ընկողմանիմ, եցայ, -մնիմ, -միմ, -ղնիմ *vn.* to stretch one's self in bed, to lie down, to go to bed.

Ընկողմանումն *s.* going to bed: the back of a chair. [to be a partisan.

Ընկողնակից *s.* bed-fellow; - լինել,

Ընկոյզ, Ընդոյզ, կուզից or զայ *s.* walnut; - մշկահոտ, nutmeg; - հնդկայ, cocoa-nut; - արքայական, the finest quality of -; - որձագուշխ, nux vomica; կեղեւ ընկուզի, nut-shell; S. Կորճ, Փեճեկ; կանաչ կեղեւ ընկուզի, green husk of -; S. Կղեպ, Ողոխ; (ներքին) մաշկ ընկուզի, epidermis or brown cuticle of -; S. Պոպոկ, Փեճեկ; միջուկ ընկուզի, the kernel of -; S. Կթուն; ծառ ընկուզի, --tree; S. Ընկուզի; փայտ ընկուզի, - wood; գործի ի բեկանել զ-, nut-cracker; S. Ընկուզաբեկ; ի գոյն ընկուզի, nut-brown; S. Ընկուզագոյն; քաղել -ս, to nut; երթալ ի քաղել -ս, to go a-nutting; գաւազան ի ժողովել -ս, nut-hook; S. Թափիչ.

Ընկուզաբեկ (գործի) *s.* nut-cracker.

Ընկուզագոյն *a.* nut-brown, hazel.

Ընկուզաձեւ, -ձեւ *a.* made like a nut. [walnut wood.

Ընկուզենի, Ընկուզի *s.* walnut-tree;

Ընկուզուտ *a.* full of walnut trees; abounding in walnuts.

Ընկրկեմ, եցի *va.* to reject; to draw back, to pull back; to subdue; to roll; -իմ *vn.* to recede, to retreat, to flinch; to be repulsed, driven back; - անուոյ, turning of the wheel; - յաղքատս, to compassionate the poor; to pardon; - երասանաւ, to be restrained, bridled, reined in; պատերազմաց - ընդ ձեռամբ

ուրուք, to take by force, to storm, to subdue, to conquer.

Ընձախոտ *s. bot.* choke-weed, orobanche.

Ընձանօթ *s.* earthen flower-pot.

Ընձառիւծ, ուց *s.* leopard.

Ընձենի *s.* leopard skin.

Ընձեռայք, յից *s, pl.* gift, present, drink-money.

Ընձեռեմ, եցի *va.* to consign, to place in the hands of some one; to lend, to give; to undertake, to prove; to transmit, to refer, to leave in writing; -իմ *vn.* to receive from, to take, to obtain; to be given, consigned, recommended; թողութիւն -, to pardon, to forgive; կոչմունս - աստեղաց, to give names to the stars.

Ընձեռութիւն *s.* giving; tradition, treatise, discourse.

Ընձիւղ, ոյ *s.* sucker, bud, shoot, spring, button, gem.

Ընձիւղեմ, եցի *vna.* to bud, to shoot, to put forth, to sprout, to germinate, to blossom.

Ընձիւղումն *s.* budding, sprout.

Ընձուիմ, եցայ *vn.* to unclose, to blossom, to be born; to dawn, to appear, to show one's self.

Ընձուղտ, ըղտուց *s.* giraffe, cameleopard.

Ընչաթափ առնեմ, -փեմ, լինիմ, -փիմ *vna.* to deprive one of his property, to despoil, to exhaust, to extenuate, to reduce to the last shifts; to be deprived of one's property, &c.

Ընչաժողով *a.* avaricious, greedy, desirous. [created.

Ընչանամ, ացայ *vn.* to exist, to be

Ընչաշատ S. Ընչաւէտ.

Ընչապտուկ *a.* grimacing (as a monkey).

Ընչասէր *a.* loving riches, avaricious, greedy, covetous; - լինիմ, -սիրեմ, to hoard up, to save sordidly, to be niggardly.

Ընչասիրութի *s.* passion for riches, avarice, avidity, greediness.

Ընչաստացու *a.* accumulating, gathering, acquiring wealth.

Ընչավատն *a.* spendthrift, prodigal.

Ընչատեաց *a.* despising worldly wealth.

Ընչայ, յ- S. Ունչ.

Ընչաւէտ, ւէտաց *a.* rich, fortunate, monied, opulent; loaded with riches;

– լինել, to be rich, to have one's nest well feathered; անթիւ –, very wealthy, extravagantly rich; ըստ երկրի մասանց –, well off, in easy circumstances.

Ընչաւէտանամ, ացայ *vn.* to be enriched, to become wealthy.

Ընչաւէտութիւն *s.* riches, abundance of wealth.

Ընչաքաղց, ից *a.* avaricious, niggardly, miserly, sordid.

Ընչաքաղցութի *s.* avidity for wealth, insatiable avarice; անյագ –, insatiable thirst for riches.

Ընչեղ S. Ընչաւէտ; –ագոյն *a.* richer.

Ընչեղանամ S. Ընչաւէտանամ.

Ընչեղէն *a.* created; visible, sensible.

Ընչեղութիւն S. Ընչաւէտութիւն.

Ընչիկ, –չուկ *s.* trifles, gewgaws, small matters, toys.

Ընչո՞ւ *ad.* why?

Ընձողկն S. Արմատաքի.

Ընձուղ, ձղոյ or ղու *s.* heifer, bullock, calf of a year old.

Ընտանանակցիմ *vn.* to have affinity, to approach.

Ընտանանակցութի *s.* familiarity, participation.

Ընտանանամ, Ընդ–, ացայ *vn.* to seed, to come to seed.

Ընտանանանամ S. Ընտանենամ։

Ընտանանասուն S. Ընտասուն.

Ընտանեացուցանեմ S. Ընտանե–.

Ընտանեակ, եկաց *a. s.* familiar, one who is of the family, acquaintance, intimate friend.

Ընտանեբար *ad.* familiarly, domestically, confidently.

Ընտանեգոյն *a.* very familiar; proper.

Ընտանեկան *a.* familiar; – կեանք, domestic life.

Ընտանեկոտոր *a. s.* murderer of one's family, parricide, &c.

Ընտանեկցութի *s.* familiarity; cohabitation.

Ընտանենամ, եցայ *vn.* to familiarize one's self, to grow tame, familiar with, to keep company, to frequent, to communicate; to get inured, to accustom one's self; անապատի –, to be accustomed to a hermit's life; – կանոնի հաւատոյ, to observe the precepts of the Faith.

Ընտանեսէր *a.* loving one's family.

Ընտանեսուն S. Ընտասուն.

Ընտանեցուցանեմ, ուցի *va.* to render familiar, to tame, to civilize, to humanize; to accustom.

Ընտանի, նւոյ, նեաց *a. s.* familiar, domestic; proper; native; tamed; intimate, friend, relation; domestic; –ք, family; հայր –նեաց, the father of a family; – պատերազմ, intestine strife, domestic broils; civil war; – դաւաճան, թշնամի, traitor, intestine foe; – հաւատոյ, faithful to the Truth; – լինել դպրոց, to be familiar with, or versed in literature.

Ընտանութիւն *s.* familiarity, confidence, communication, frequentation; habit; intimacy; friendship; – ընդ կնոջ, carnal intercourse with a woman; յ– կոչել, to domesticate, to tame.

Ընտանուհի *sf.* female neighbour, intimate friend; house-maid, servant.

Ընտանուստ S. Ընտուստ.

Ընտասուն, –սնունդ *a.* familiar, brought up in the house; S. Ընդասուն.

Ընտել, –ութիւն S. Ընդել, &c.

Ընտեղակաց *a.* immovable, firm in one place.

Ընտիր *a.* chosen, worthy; fine, good; civil, of good family, elegant, excellent, exquisite, nice, genteel, pretty, noble, polished, precious, pure, singular, sovereign, superb; – –, the best, the most excellent, the choice, the select, the flower, the cream; զ– – զարդուցն եդին ի հպարտութիւն, precious ornaments served to beget pride; զ– –ս Գաղղիոյ սատակեաց, he beat down the choice troops, the flower of France; գումարել զ– – նահատակս, զօրս, to re-unite the bravest warriors, the picked soldiers; – – անասունք, very fat animals; – յոյժ, best, first quality; S. Ընտրելագոյն; – մատենագիր, classic author; ընդ –ս հանել, to select, to make choice of, to elect; յ– առնել, to give the choice, to permit the selection; – առնել, to choose, to make choice of, to appreciate; ընտրոյ տէր, he who has the choice, arbiter; զնոսա թողացոյց ընտրոյ տէարս լինել, he left them the choice.

Ընտոծին S. Ընդոծին.

Ընտուստ *ad.* by one's self, or itself; of one's self, naturally; of one's own head; of the house, from one's home; of the family possessions, of one's own wealth.

Ընտրական *a.* elective, eligible, electoral; better, singular, exquisite.

Ընտրականութիւն *s.* elegance, goodness, excellence; examination.

Ընտրան *s.* choicest, flower; *-ու a.* select, choice, picked; *ad.* by choice, by selection; *մանկունք -ու*, the flower of the youth; *կաշառք -ու*, rich or precious gifts.

Ընտրանք *s. pl.* choice, election, prime; act of picking; garbling; *արծաթ -նաց*, pure silver.

Ընտրեալ *a.* select, elect; virtuous, honest, upright.

Ընտրելագոյն *a.* better, excellent, very good, preferable.

Ընտրելակից *a.* elected with another.

Ընտրելաշնորհ *a.* elect and graceful.

Ընտրելի *a.* eligible; most select, best; *- է քեզ զմի յայսցանէ*, you must choose one of these alternatives.

Ընտրեմ, եցի *va.* to elect, to choose; to pick, to sort, to cull; to discern; to judge; to distinguish, to difference, to know; to decide; to love, to embrace, to prefer; *- զարդարն*, to discern what is just; *- զժամանակն*, to choose the time, to select the opportunity; *անկիւնս անկիւնս ընտրեալ*, angular; *ընտրեալ կալաւ*, he has chosen; *ընտրեցից մեռանել*, I would prefer to die.

Ընտրիչ *a.* choosing, electing; *s.* elector.

Ընտրող S. Ընտրիչ; discreet, prudent, judicious, wise.

Ընտրողական *a.* able to discern, having judgment, rational; of one's free will; wise, discreet; *s.* judgment, criterion, free will or choice.

Ընտրողութիւն *s.* choice, election; discernment, discretion, judgment, understanding; *-թեամբ ad.* discreetly.

Ընտրութիւն *s.* choice, election, suffrage, choosing, wish; arbitration, deliberative, decision, discernment, distinction, discretion; option; scrutiny, taste; *անօթ -թեան*, a vessel of mercy, chosen instrument; *- ինքնակամ*, liberty, free will; *- առնել*, to distinguish; *-թեամբ ad.* by election, or choice.

Ընտրուկք *s. pl.* rebuff, refuse, trash, offal, scum, cheat.

Ընտրումն S. Ընտրանք.

*__Ընքուլի__ S. Ցօնք.

Ըռազիան *s. bot.* fennel.

Ըռնգեղջիւր S. Ռնգեղջիւր.

Ըռնգունք S. Ռնգունք.

Ըստ *pr.* according to, in relation to, as for, conformably with, agreeably to; proportionably, at the rate of; after; near, relatively; for, as for; on; of; out; *- իս*, *- իմում կարծեաց*, according to me, in my opinion; *- իւրում կարի*, according to capacity, to the best of one's ability; *այր - սրտին Աստուծոյ*, a man after God's own heart; *կին իցէ քո - միտս*, if thou hast a wife after thine own heart; *- բախտի եղեալ նորա*, fortunately; *- պատկերի մերում եւ - նմանութեան*, in our image and likeness; *Հիւսիսոյ Կարնոյ*, north of Erzeroum; *- անձին*, upon one's back; wearing upon, - the shoulders, - the body; *- ճանապարհին*, about the streets; *- հրապարակս գնալ*, to pass through, or to wander about the public places; *- բնութեան բարի*, naturally or essentially good; *ի չափու կալայց զանձն - օրինակի նորա*, I shall be governed by his example; *ելանել - քաղաքն*, to go out of town; *այր - առնէ*, one after the other; *ամ - ամէ*, annually, every year; *օր - օրէ*, daily, every day; *- նախահօրն յանցանաց*, for the sin of the first father; *- չափու եկամտիցն*, in proportion to his income; *- աչս դատել*, to judge from the appearance; *- իրեարս պատշաճեալ*, well proportioned, symmetrical; *- տեղիս տեղիս եւ - աշխարհս աշխարհս*, according to the various places and different provinces; *- տունս ազգացն՝ ոչխար - երդ*, a lamb for every family and every house; *հրաժարել - նմանութիւն*, to have no equal, unique; *անցանել - սահմանս քո*, to pass through your confines; *- բանս անցանել*, to be inexpressible; *- միտս անցանել*, to be beyond understanding, to be past finding out, inconceivable, incomprehensible; *անցանել - չափ*, to go beyond; *- ակն լինել յումեքէ*, to be far from the sight of, alienated; *- ինքեան*, of one's self; naturally, essentially; *- ամենայնի*, totally, in all, entirely; *- այնմ*, as is said; as they say; *- իրիք*, *- իմիք*, in some part, in a certain sense, in some way, or manner; in part; *- որում*, as; since; therefore; *- որում...*, *- նմին*, or *նոյնպէս*, or *այսպէս*, as..., as; so..., as; *- օրէն*, like, after the fashion of; *- նմանէ*, after him; -

այսմանէ, like this, similarly, equally; *եւ որ – այսմանէ*, &c. &c. and so on.

Ըստանձնեմ, *եցի va.* to assume, to take, to put on, to put on one's back, to embrace, to undertake.

Ըստանձնութիւն *s.* the wearing, the clothing.

Ըստգիւտ, *ից s.* accusation, blame, reprimand, censure, reprehension, reproach, stain, imputation, criticism; defect, fault, wrong; *a.* blamable, reprehensible; – *լինել*, to be blamed, or scolded; to accuse, to charge with, to blame, to scold, to censure, to condemn: to know, to be informed of, to understand; – *լինել իմիք*, to obtain, to succeed in, to enjoy, or realize one's wishes; – *յանձն առնուլ*, to be blameworthy, to be in the wrong; – *ad.* reprehensibly; culpably; with shame, or remorse.

Ըստգտանեմ, *գտի va.* to accuse, to blame, to reprove, to censure, to condemn, to reproach, to rebuke, to jeer, to reprimand, to impute.

Ըստգտանք S. **Ըստգիւտ**.

Ըստերիւր, &c. S. **Ստերիւր**, &c.

Ըստերջ S. **Ստերջ**.

Ըստընդդիմաց S. **Ստնդդիմաց**.

Ըստիմանիմ, *եցայ vn.* to shoe, to put on shoes, or boots.

Ըստմասնեայք, *նեայց*, *–սունք*, *սանց s. pl.* individuals, particulars.

Ըստմիոջէք *s. pl.* all the rest, all; each one. [companions.

Ըստնմայք, *այց s. pl.* their fellows,

Ըստնմանէք *s. pl.* the following, successors, posterity.

Ըստ որում S. **Ըստ**.

Ըստ օրէն S. **Ըստ**.

Ըրջուկ S. **Ուրջու**.

Թ

Թ (toe or tow) *թո s.* the ninth letter of the alphabet and the fifth of the consonants; *թ*, *թ̄*, nine; ninth.

– It is sometimes confounded with the letters *դ* and *տ*, for example: *քաղիրթ*, *քաղիրդ*; *թակարթ*, *թակարդ*; *կաթսայ*, *կատսայ*.

Թագ, *ից* or *աց s.* crown, diadem, royal crown; the Crown or regal authority, kingdom; glory, honour; – *պապական*, tiara, the pope's crown; – *եպիսկոպոսական*, mitre; – *ազնուականաց*, coronet; – *ոսկի*, crown of gold; S. **Պսակ**; – *առնուլ*, to become king, to reign; – *դնել*, *կապել* (*անձին*) *vn.* to crown one's self, to put on the crown, to bind on the diadem; – – (*այլում*) *va.* to crown, to place a crown on the head of, to cause to rule; *եդաւ զ– զասիացւոց*, he crowned himself with the diadem of Asia; *–աւ* or *–իւ պսակիլ*, to be crowned; *առնուլ զ– ուրուք*, to mount another's throne; – *ի գլուխ*, crowned, wearing a crown on the head.

Թագագանգուր *a.* curled in form of crown or diadem, curled, crisp.

Թագագլուխ *a.* crowned, having a crown on the head.

Թագագիտակ *a.* royal, regal, kingly; crowned.

Թագադիր, *դրաց a.* placing the crown on the king's head; having the hereditary office of crowning the king at his coronation; – *լինել*, to crown.

Թագադրութիւն *s.* coronation; *հանդէս –թեան*, inauguration.

Թագազարդ, *–զարդեան a.* crowned, adorned with a crown.

Թագազարդեմ, եցի *va.* to crown, to adorn with a crown. [*ազն.*

Թագազարմ, Թագազն S. *Թագաւոր-*

Թագազարմուհի *af.* princess (of the royal family).

Թագաժառանգ, ՚աց *a.* inheriting the crown; *s.* heir to the throne.

Թագակալ, աց *a.* crowned, that has a crown, reigning, that holds a crown; – *դշխոյ*, queen.

Թագակապ, &c. S. *Թագադիր*, &c.

Թագակից *a.* that shares a crown; that reigns jointly.

Թագատու *a.* that gives a crown, that crowns.

Թագաւոր, աց *s.* king; *bridegroom; – *-աց*, the – of –s; – *Հայոց*, the – of Armenia; *կեցցէ* –, long live the –! God save the –! – *կենդանեաց*, the – of beasts, (lion); – *թռչնոց*, – of birds, (eagle); – *ծաղկանց*, queen (Arm. king) of flowers, (rose); – *իմ* S. *Արքայիկ օծ*; *-ք*, certain hymns of the Armenian Church; – *կալ յումեքէ ի վերայ աշխարհի ուրուք*, to be made – of some country; – *առնել*, to make –, to cause to reign.

Թագաւորաբար *ad.* kingly, royally.

Թագաւորաբնակ S. *Արքայանիստ*.

Թագաւորագիր մատեանք *s.* The Book of Kings.

Թագաւորազարմ, աց, -զդի, գւոյ, գեաց, -զն, -զուն, զնի, զանց *a.* of royal race, blood or house, descending from kings; *s.* prince (royal).

Թագաւորական *a.* royal, regal; *s.* royalist; – *ճանապարհ*, the king's highway, main road, the highway; – *օծ, իմ* S. *Արքայիկ օծ*.

Թագաւորականութիւն *s.* royalism.

Թագաւորական քաղաք S. *Արքայանիստ*.

Թագաւորակերպ *a.* king-like, like a king, regal, royal.

Թագաւորակից S. *Թագակից*; – *լինիմ, -կցիմ* *vn.* to reign together; to reign contemporarily.

Թագաւորանիստ *a.* capital, where the king resides.

Թագաւորանք *s.* court, courtiers.

Թագաւորապէս S. *-աբար*.

Թագաւորասաստ *a.* with royal threats.

Թագաւորեալ *a.* crowned; – *քաղաք*, royal or capital city, seat of government.

Թագաւորեմ, եցի *vn.* to be crowned; to reign.

Թագաւորեցուցանեմ, ուցի *va.* to make king, to crown; *-ուցի ձեզ թագաւոր*, I have given you a king; – *զճշմարտութիւն*, to preach the truth publicly.

Թագաւորող *a.* reigning; *s.* reigning prince, a crowned head.

Թագաւորորդի S. *Արքայորդի*.

Թագաւորութիւն *s.* reign, empire; royalty, crown; kingdom; *միջոց պարապոյ -թեան*, interregnum; – or *-ք*, The Book of Kings.

Թագեմ, եցի *vn.* to make king, to [crown.

Թագընկալութիւն *s.* coronation.

Թագընկէց *a.* that refuses a crown; – *առնել*, to dethrone.

Թագնաբար &c. S. *Թաքնաբար*, &c.

Թագուած *s.* hiding-place, lurking-place.

Թագուհի *sf.* Queen; *fig.* church: moon; *-ն Սաթինիկ*, – Sathinice; *մայր -հւոյն*, the – mother; *կեցցէ -ն*, long live the –! God save the –!

Թագուհութիւն, *Թագուհւոյութի* *s.* dignity of queen.

Թագուստ, Թագուցանեմ, Թագչիմ &c. S. *Թաքուստ*, &c.

Թաղեմ, եցի *vn.* to run.

Թաթ, ից *s.* hand; palm of the hand; – *ոտից*, foot; the sole of the foot; – *կենդանեաց*, paw, claw, talon; – *երկաթի*, gauntlet; (*գործի տանջողական*) fang, claw, grappling iron; – *կշռոց*, scale; S. *Նժար*.

Թաթախ *a.* covered, overspread; wet, moistened, immersed, soaked, imbued; dirty, muddy.

Թաթահատ *a.* mutilated, maimed, cut off.

Թաթահերձ *a.* cloven-footed, cloven-hoofed, fissiped.

Թաթաղեմ, եցի *va.* to fill to the brim, to load; S. *Թաթաւեմ*.

Թաթաղուն *a.* full to the brim, loaded, overflowing.

Թաթառ, *Թաթիռ, թռոյ*, *Թաթառն* *s.* whirlwind, water-spout.

Թաթաւ *a.* S. *Թաթախ*; *s.* *rain.

Թաթաւեմ, եցի, *Թաթաւեցուցանեմ* *va.* to plunge, to immerse, to soak, to steep, to drench, to imbue; *-իմ* *vn.* to plunge, to dive, to bathe one's self, to be imbrued; – *ի քիրտն*, – *յաւիշ քրտան*, to be reeking with

sweat; — ընդ աղբեւս or յաղտեղու-թիւնս, to wallow in the mire, to grovel in filth, to drag in the mud; — արեամբ or յարեան, to be imbrued or covered with blood, to wade, to welter; — տղմով, to get splashed, covered with mud; — մարմնոյ զազրու-թբ որդանց, to be covered with filth, to be full of vermin; — ի բանս մտաւե-նից, to apply one's self with the greatest attention, to study with diligence.

Թաթաւումն s. soaking, drenching, dipping.

Թաթաւուն, -ուչ a. full, very full; running over, full to the brim; furnished; endowed; adorned.

Թաթեմ, եցի va. to supplant, to trip up; to insnare, to dupe, te deceive.

Թաթոււ, Թլոց s. paw, foot.

Թաթպան, այ s. glove; S. Ձեռոցք, Ձեռնոց.

*Թաժաչ, -ժայ S. Թարմ.

Թալամ, Թալանամ, ացայ vn. to faint, to loose feeling, to become insensible; — ի ծաղուէ, to laugh till one faints, to split one's sides with laughing, to choke, to burst.

Թալաս or Թալասմեղ s. an ewe; wether.

Թալթալ s. acre; — խաղամ vn. to struggle, to writhe in the agonies of death, to be in convulsions, in agony.

Թալխայ s. fine thread.

Թալկամ vn. to abhor, to detest.

Թալկանամ, ացայ vn. to fall into a fainting fit, to faint, to swoon, to fall in a swoon; to feel giddy, dizzy, to have a swimming in the head.

Թալկացումն s. swoon, fainting, lipothymy.

Թալկացուցիչ a. that causes fainting.

Թալուկ s. fainting fit, swoon, swimming in the head, giddiness; nausea, disorder or rising in the stomach; — զարտուն գալ, to turn the stomach, to disgust, to loathe, to be sick or ready to vomit.

Թախանձ, ից s. importunity, instance, solicitation, entreaty; grief, sorrow, trouble; -ք, dowry, marriage-portion, dower; — արկանել, to solicit earnestly, to importune, to entreat.

Թախանձագին S. Թախանձանօք.

Թախանձանք S. Թախանձ; -նօք ad. humbly, in a suppliant manner, earnestly, urgently.

Թախանձելի a. troublesome, importunate, annoying, tedious, tiresome, disgusting.

Թախանձեմ, եցի, Թախանձեցու-ցանեմ, ուցի va. to solicit earnestly, to importune, to entreat with earnestness; to molest, to annoy, to vex, to torment, to cease not from entreating, or causing annoyance.

Թախանձեցուցիչ a. importunate, urgent, troublesome, tedious.

Թախանձիմ, եցայ vn. to wish for, to desire; to have need of, to want; to sadden, to afflict. [Թախանձանք.

Թախանձութիւն, Թախանձումն S.

Թախթ S. Թաղդ.

Թախիծ s. affliction; grief; a. grievous, afflicting, disconsolate, forlorn; -ք դժնդակք, black bile, deep sadness; -ք մտաց, compunction, regret, remorse; ընկենուլ զ- սրտի, to console, to cheer up; -ս արկանել առաջի ուրուք, to supplicate, to beseech, to implore.

Թախծագին a. ad. sorrowful, mournful; sorrowfully, mournfully.

Թախծադէմ a. of a mournful countenance, melancholy, sorrowful, sad.

Թախծալի, -լից a. full of sadness, of bitter grief, very sad, painful, bitter; — առնել զոք, to afflict, to sadden, to cast down.

Թախծական a. sorrowful, grievous, melancholy.

Թախծանք S. Թախծութիւն.

Թախծեալ a. sorrowful, afflicted, melancholy, gloomy.

Թախծելի S. Թախծական.

Թախծեցուցանեմ, ուցի va. to sadden, to afflict, to make desolate.

Թախծիմ, ծեցայ vn. to grieve, to be afflicted, to mourn.

Թախծողական S. Թախծական.

Թախծութիւն s. sorrow, grief, sadness, affliction, melancholy; mourning.

Թակ, ի, Թակն, կան s. mallet; large hammer; paver's beetle, rammer; -ն կոչկոճիչ զգլխոյ ձերմէ կալջիք զիս, you will make me your scourge.

Թակալակ s. dalmatica.

Թակակոփ a. beating with a sledge-hammer; hardening with the hammer.

Թակաղ, Թակապաղ s. mallet, mall, sledge-hammer, beetle.

Թակապակ s. small beetle: architrave; — or -պաղ, capital (of a pillar); — նաւու, top (in the rigging of a ship).

Թակարդ or -րթ, ից or աց s. trap, snare, gin, net; -օք որսալ, պարփակել, փակել, արկանել ի -, to draw into a snare, to entrap, to catch; շաղել ի -ի, ի -ի հարկանիլ, to fall into a snare, to be entrapped; -աւ ջուր քերել, to beat the water, or the air, to toil in vain, to have one's labour for one's pains; որպէս - դհոլմն՝ անցուցանել զխրատ, to be heedless, to disregard warning or admonition, « in at one ear, out at the other; » S. Որոգայթ.

Թակարդադիր s. he who lays snares or spreads nets.

Թակարդապատ, -եալ a. trapped; ensnared; S. Թակարդադիր.

Թակարդապատիր a. that entraps, ensnares; deceitful.

Թակարդափակեմ, եցի va. to envelope or take in nets or snares, to entrap, to entangle, to catch.

Թակարդեմ, եցի va. to entrap, to ensnare, to decoy; to take in a net, to catch, to lace; to entangle, to allure, to dupe; - զմեքենայս, to spread a net, to lay snares.

Թակեմ, եցի va. to hammer; to beat; to ram.

Թակնակուռ S. Թակակոփ.

Թակոյկ, կուկաց s. pitcher, water-vessel, jug, jar, water-pot, vessel, pot; cup, mug, goblet, bowl: the saveall of a candlestick.

Թաղ, ից s. quarter, ward, district; part; neighbourhood; - or -ի, felt; -եաւ պատել, to felt.

***Թաղաթափ** a. unveiled (female).

Թաղակ, աց s. felt head-piece.

Թաղակից լինիմ, **Թաղակցիմ**, եցայ vn. to be buried together.

Թաղանթ, -նդ, ոց, ից, աց s. membrane, cuticle, pellicle, tegument; omentum, caul, reticulum; diaphragm.

Թաղանթագեղ, -զարդ a. furnished with a membrane, membranous.

Թաղանթաթեւ a. bat-winged, having membranous wings.

Թաղանթոյն a. membranous.

Թաղանթապատեալ a. enveloped with, or in a membrane.

Թաղանթիմ vn. to produce or form a pellicle. [castrated, gelt.

Թաղատմաւոր, **Թաղամնաւոր**, աց a.

Թաղար, աց s. earthen-pot or vessel, basin; flower-pot.

Թաղեայ a. worked in felt.

Թաղելութիւն S. Թաղումն.

Թաղեմ, եցի va. to inter, to bury, to entomb, to inhume; to bury in the ground, to pay the last honours; to hide; -իմ vn. to be buried; - կենդանւոյն, to bury alive; ի յաւս Թաղեալ, sunk in grief.

Թաղերգիչ s. tragedian.

Թաղերգութիւն s. tragedy.

Թաղէգործ s. felt-maker.

Թաղթ, ից s. bot. cyclamen, sow-bread.

Թաղի s. felt cloak; S. Թաղ, Կաճ; bot. wild artichoke.

Թաղխանամ, ացայ vn. to harden, to become hardened.

Թաղկ s. talc.

Թաղկանամ S. Թաղկիմ.

Թաղկալարս a. rumpled, disordered, discomposed.

Թաղկիմ, եցայ vn. to grow tighter, thick, to condense, to be condensed.

Թաղկումն s. thickness, condensation.

Թաղհար, աց, **Թաղհալ** s. woman's cap (in form of an earthen pot).

Թաղմանական a. funeral, funereal; - հանդէս, funeral, burial, funeral rites, procession or train.

Թաղնորդ a. living in the same neighbourhood.

Թաղումն s. sepulture, burial, interment; funeral; զ- էշոյ Թաղել, to be buried like an ass.

Թաղուն a. thick, close, compact, dense; *chem.* stable.

Թամ s. enemy, foe.

Թամբ, աց s. saddle; pack-saddle: calf of the leg; - վասն կանանց, կողմնակի -, side-saddle, pillion; աշտանակել, ստանուլ ի -, to mount, to vault into the saddle; -ս հարկանել, - ի նուս դնել, to saddle; բառնալ զ-ն, to throw off the saddle, to dismount.

Թամբագործ, աց s. saddle-maker, saddler.

Թամբակալ S. Թանգ.

Թամբահարեմ S. Թամբեմ.

Թամբատեակ, -տոց s. rag, tatter, old clothes; a. old, ragged, shabby, threadbare, all in rags; S. Գրգլեակ.

Թամբեմ, եցի va. to saddle, to harness.

Թայլ S. Թաղթ. [kindred.

Թայրաթուք s. pl. the relations, the

Թան, ից *s.* soup, porridge, broth; skimmed milk; – ոսպնեայ, pottage of lentiles, lentile soup; dish of pottage. [Թէյնէքէ.

Թանապ, ից *s.* sheet-iron; *turk.*

Թանահատ, ից *a.* abstaining from soups.

Թանամ, Թացի *va.* to wet, to bathe, to dip, to drench, to soak; to moisten, to bedew, to water; – զանկողին իւր արտասուօք, to bathe one's pillow with tears; արտասուօք – զոտս ուրուք, to bathe the feet with one's tears; – զսուր ի պարանոց ուրուք, to cut the throat, to massacre; – յարիւն բազմաց, to butcher, to slaughter, to shed much blood, to swim in blood; – ի գինի, to soak, to steep in wine; գնացին առանց Թանալոյ ի վերայ ծովուն, they passed the sea dry-shod.

Թանաման, ից *s.* soup-tureen.

Թանաք, ի, աւ *s.* ink; սեաւ –, black ink; կարմիր –, red-ink; S. Կարմրագեղ; կապոյտ –, blue-ink; տպագրութեան, printing-ink; – Ճենաց, Indian or China ink; անեղծ –, indelible, indestructible ink; համակիր, ծածկագիր –, sympathetic, invisible, secret ink; – նշանագրութեան, marking-ink; արատ, բիծ –ի, ink-spot, ink-stain; արատել –աւ, to ink; մրճոտիլ, աղտեղիլ –աւ, to be inked all over; պղտան, շիշ –ի, ink-pot, ink-bottle; աման –ի, ink-horn, inkstand; S. Կապամար. [girth.

Թանգ *a.* S. Թանկ, &c.; *s.* saddle-

Թանգար, այ *s.* merchant; shop-keeper; retailer; inn-keeper.

Թանգարական *a.* mercantile, commerciale; esteemed, precious, dear.

Թանգարան, այ *s.* treasure, treasury; museum; cabinet, collection; – Բրիտանեան, the British Museum; – Աղեքսանդրեան, the Museum of Alexandria.

Կաղանդագոյց s. weather-almanack;

calendar, almanack.

Կաղանդեմ, եցի va. to give a new-year's gift; S. Կաղանդեմ.

Կաղանդէք, -դչէայ, -չէք s. new-year's gift; պատուել զոք -չէիւք, to make -s; - ընդունել, to receive -.

Կաղանչան, -ան s. bot. euphorbia, spurge, tithyma, milk thistle.

Կաղապար, աց s. model, pattern, mould, cast; standard; - արկանել, to cite as example; -եմ va. to model, to mould, to shape; -իչ s. modeller, moulder; -ումն s. modelling, moulding.

Կաղացուցանեմ, ուցի va. to lame, to make lame.

Կաղաւեմ, եցի vn. to remain torpid.

Կաղին. գնոյ s. hazel-nut; acorn; hazel-tree; արքայական -, filbert.

Կաղկանձեմ, եցի vn. to yelp, to whine, to howl; -ձիւն s. yelping, whining, howling.

Կաղնաբեկ s. nut-crackers.

Կաղնագոյն a. hazel, hazelly.

Կաղնակեր, աց a. feeding on acorns.

Կաղնահար, աց a. wood-cutter.

Կաղնաներկ s. quercitron bark.

Կաղնատու a. bearing or producing acorns; -տուն s. S. Կաղնիք.

Կաղնի s. nut- or hazel-tree; oak-tree; գետնի - bot. earth-nut; germander; -ք, hazel- or oak-grove.

Կաղութիւն s. lameness, hobbling.

Կաղջին s. cement.

*Կաղտիկ s. pruning-axe.

Կաճ, իւ s. felt; -ակուռ թաղիք, compact felt.

Կաճառ, աց s. assembly, meeting; academy, body, company, society; - բանասիրաց, academy of belles-lettres; ակմբահոյլ դիցն -, Olympus.

Կաճառական s. academician, member of an academy.

Կաճառակցութիւն s. membership.

Կաճառանոց s. hall of assembly or meeting. [reunite, to meet together.

Կաճառիմ, եցայ vn. to assemble, to

Կաճառորդ, աց s. one aggregated to an academy, honorary member; S. -ռակից; -ուն s. honorary membership.

Կաճառումն s. conference; discourse.

Կաճեայ, -ճէ a. felt, made of felt.

Կաճին, ճնոյ, ճնի s. root.

Կամ conj. or; - դու - ես, either you or I; եւ -, - թէ, or else.

Կամ, ի, աւ, ով s. will, desire; - է ինձ, I will, I intend; S. Կամք, Կոր.

Կամ, կացի vn. to be, to exist; to remain, to stand; to subsist, to live; to last, to continue, to be permanent; to stop, to stay; to wait; - մնալ, to rest, to dwell, to reside; to persist, to persevere; ի բաց -, to hold aloof, to give up, to withdraw; ի վերայ -, to superintend, to oversee; fig. to understand, to comprehend, to perceive; հաստատուն, պինդ -, to hold fast in, to remain firm; անկեալ -, to lie, to lie down; - առաջի երեսաց ուրուք, to make head against, to cope with, to resist; S. Առաջի; ստէպ -, to apply oneself, to be assiduous; ստէպ - օրինաց, to keep the laws; դատաւոր - ի վերայ, to be judge or arbitrator; շուրջ - զումեք, to beset some one; կայ մնայ նմա, it is reserved for him; զիարդ կայք, how do you do? զի՞ կաս, why do you wait? what are you waiting for? զի՞ կայ իմ եւ ձեր, what have you to do with me? what does it matter to you? եկաց, կացին, there has been; there have been; եկաց զնովին ժամանակօք, he lived or flourished about the same time or at the same epoch; կացին ի նա չքնաղ օրինակք առաքինութեան, they possessed rare examples of virtue; կացին աչք նր, he has lost his sight, he has become blind; չգիտեմ ի վերայ - բանիցդ, I don't know what you mean, I do not understand you; կալով կացցեն բանք իմ, my words shall come to pass, my prediction shall be fulfilled. [capricious.

Կամադիպաց a. voluntary, optional,

Կամաթողլինիմ vn. to renounce, to abandon. [eous, free.

Կամածին a. voluntary, spontan-

Կամակ a. agreeable, sweet, pleasing, delicious; ad. agreeably, pleasingly; -լինել ի, to be disposed or inclined to; -ք s. pl. pleasures, delights:

Կամական a. voluntary. [dainties.

Կամակատար, աց a. condescending, complaisant, obliging; - լինել ումեք, to be complaisant, very kind to, to do the obliging, to comply with the whims of, to oblige, to satisfy.

Կամակատարութիւն s. complaisance, obligingness, kindness.

Կամակար a. voluntary, willing, free, spontaneous; -, - մտօք ad. voluntarily, spontaneously, freely; willingly, at one's will or pleasure, of one's own

accord or free will.

Կամակարեմ vn. to act according to one's entire will, pleasure or caprice.

Կամակարող a. powerful, mighty, potent; — ի տէգ նիզակի, skilful at hurling the javelin.

Կամակարութիւն s. free-will; spontaneity; -ք S. Կամակար ad. [froward.

Կամակացոյց a. wilful, headstrong,

Կամակից a. agreeing with, privy to, instrumental in; s. accomplice, partaker in; -լինել, to be a party to or instrumental in, to agree with, to approve of, to consent to.

Կամակոր a. crooked, bent, curved, tortuous, sinuous; fig. indirect, crafty; S. Ցամառ; — շաւիղ, winding path, crooked way; ad. crookedly, against the grain.

Կամակորախօս a. perverse, froward.

Կամակորեմ, եցի va. to wring, to twist; to bend, to bow, to curve; fig. to distort, to overstrain a phrase, to strain, to misinterpret; to pervert, to deprave; — զարդարութիւն, to pervert justice; -իմ vn. to be bent, crooked, twisted; fig. to deviate, to turn away, to go astray; to be perverted; — ի ճանապարհս իւր, to follow or pursue the indirect paths of vice or error; — յուսանել, to refuse to learn.

Կամակորութիւն s. crookedness, tortuosity, winding; fig. perversity, depravation; S. Ցամառութիւն.

Կամակութիւն s. pleasure, contentment.

Կամակցիմ vn. to consent to, to agree with, to approve of. [complicity.

Կամակցութիւն s. consent, accord,

Կամահաճոյ, -ճութիւն S. Կամակատար, -ութիւն. [cide.

Կամամահ լինիմ vn. to commit sui-

Կամամարտ a. contentious, litigious.

Կամամտածական a. ideal, fantastic, chimerical.

Կամայ, ից, -ական a. voluntary, spontaneous, free; — եւ ակամայ ad. willingly or unwillingly, nolens-volens, willing or unwilling. [untary.

Կամայորդոր, -յօժար, -ւէր a. vol-

Կամապաշտ, ից a. wilful, selfwilled, stubborn; -ութիւն S. Ցամառութիւն.

Կամար, աց s. vault, arch, arcade; porch, portico; girdle, belt; phys. sound-wave; — սրոյ, baldric, sword-belt; — յաղթութեան, triumphal arch; կապուտակային —, the arch, vault or canopy of heaven, the vaulted sky.

Կամարածու, աց a. girdling, girding.

Կամարակալ s. flying-buttress.

Կամարակապ a. arcaded; s. arcade; atrium, porch.

Կամարաձեւ a. vaulted, arched; — գործել, յօրինել, to arch, to vault.

Կամարակիցք s. spring of an arch.

Կամարայօն a. of finely arched eyebrows. [to stoop, to grow crooked.

Կամարանամ, ացայ vn. to be bowed,

Կամարանման, -պատ S. -ձեւ, -կապ.

Կամարար, &c. S. Կամակատար, &c.

Կամարաւոր a. girdled; enclosed.

Կամարիկ s. small arch.

Կամաւ ad. voluntarily, willingly; knowingly, purposely, designedly, expressly; a. voluntary, spontaneous; S. Կամայ. [voluntary, free.

Կամաւոր, -ական a. spontaneous,

Կամաւորաբար, -պէս S. Կամովին.

Կամաւորութիւն s. free-will, spontaneity; -թք ad. willingly, freely.

Կամելումն, -եցողումն s. will, wish.

Կամենամ S. Կամիմ.

Կամեցող, Կամող a. willing, desirous.

Կամեցուցանեմ, ուցի va. to bend to one's will or wishes, to persuade, to induce.

Կամիմ, մեցայ vn. to will, to intend, to mean; — ընդ, to like, to wish, to please; to be pleased with.

Կամն, մին, մունք, -սայլ s. flail, roller to thrash corn or beat out grain.

*Կամնասայ s. coach-pole.

Կամշանամ, -շոտիմ vn. to be stubborn, obstinate, obdurate.

Կամշոտ a. capricious.

Կամովի, -ն ad. voluntarily, willingly, of one's own accord or free will.

Կամուրջ, մրջաց s. bridge; պատնէշ կամրջի, parapet —; շարժական, ամեբիկեան, կախաղանաւ, լարապինդ, բացբարձիկ, շրջելի —, draw-, trellis-, suspension-—; — of ropes; flying —; swing-—; — արկանել, շինել, կապել, to construct a —, to throw a — across; S. Կամրջեմ; անցանել ընդ -ն, to cross, to go over or across, to pass by a —; S. Նաւակամուրջ.

Կամրջախելք s. bridge-head.

Կամրջաձիգ s. pontoon-soldier, pontoneer.

Կամրջեմ, եցի va. to bridge over; to join or communicate with by a bridge.

Կամփատկ, աց s. oil-bottle; phial.

Կամք, մաց *s.* will, determination, intention, design; wish, desire; humour, fantasy, whim, caprice; ի կամաց, կամօք եւ ախորժիւք, voluntarily, willingly; կամօք, on purpose, designedly; ըստ կամի, ըստ կամս, at will, ad libitum, arbitrarily, at pleasure; at discretion; յոչ կամաց, unwillingly, in spite of oneself, against one's will, reluctantly, grudgingly; յօժար —, readiness, inclination, willingness; հաստատուն, անդրդուելի —, firm will, determination, iron will, resoluteness; յեղյեղուկ —, caprice, fickleness; ինքնիշխան, բացարձակ —, absolute will, arbitrariness, despotism; անձնիշխան —, free-will; անձնահաճ —, humour, whim, caprice, fancy; ըստ կամս անձին գնալ, to indulge one's fancy or caprice; փոխել զկամս, to change one's mind; անձնատուր լինել ի կամս ուրուք, to submit to the guideness of; to comply with all the whims of; ի կամս ուրուք գնել զինս, to depend on another's will; եթէ Տեառն — իցէ, if God wills, God willing; Տէն — լիցին, God's will be done; որչափ եւ — իցեն նր, as much as he may desire; եթէ — իցեն քո, if you wish or like; ըստ հաճոյ յից կամաց քոց, at your will or pleasure; as well as you could wish; — էին ինձ, I wished to, I wanted to; — էն ինձ ասել, I would say, I mean; կամ ոչ — էն բանիս ասել, or rather; — եղեն նմա, it pleased him to, he liked to; — էին նր, he desired or wished; հակառակ կամաց նր, against his will; որ ինչ ի կամս մեր, as much as we can; ով զիարդ եւ — իցեն նց, in any way they like.

Կայ, -ք, ից *s.* posture, position, standing still; stage, pause, rest, stop, halt; dwelling, lodge, seat; situation, state; conduct, customs; being, substance; *a.* existing, existent; զ— առնուլ, to stop, to pause, to halt, to rest, to cease; կալ յուղիղ -ի, to remain in uprightness; ոչ լինիցի — թաթից ոտից քոց, neither shall the sole of thy foot have rest; կաց ի -ի քում, stand upright!

Կայական *a.* firm, solid, stable, stationary; -ք *s.* chant, plain-song.

Կայան, ից *s.* station, place, post, site; position; dwelling, residence, abode; *ast.* station; *a.* S. Կայուն; *-ք, limbo; վերին, գերականին -ք, heaven; -ք ոտից, foot-stool.

Կայանամ, -նանամ, ացայ *vn.* *to be composed; S. Կամ.

Կայանաւոր S. Կայուն.

Կայարան S. Կայան; station; railway station; terminus; *mar.* wharf; landing place; — կառաց, coach-stand; — ելից, մտից, departure; arrival; տեսուչ -ի or

Կայարանապետ *s.* station-master, superintendent.

Կայեան, ենից S. Կայան.

Կայթ, ից *s.* basket, pannier; S. Կայթիւն; -ք գրուատեաց, rounds of applause, plaudits; -ս հարկանել, տալ S. Կայթեմ.

Կայթանեմ *vn.* to gush, to spout out.

Կայթեմ, եցի *vn.* to clap the hands or stamp the feet in sign of joy, to applaud, to load with applause: to dance, to leap, to jump, to caper, to cut capers.

Կայթիւն, **Կայթումն** *s.* clapping of hands; stamping; shouting, applause, cheers, acclamations; caper; clattering.

Կայթոտ, ոյ *a.* leaping skittishly here & there, skipping, tripping along.

Կայլակ, այ *s.* drop, globule.

Կայլակահոս *a.* dropping; distilling.

Կայլականամ, ացայ, **Կայլակեմ**, եցի *vn.* to drop, to flow by drops, to fall drop by drop, to trickle; to leak, to run out; to stream, to flow.

Կայլակնացուցանեմ, ուցի *va.* to cause to trickle.

Կայլակումն *s.* leaking; trickling.

Կայծ, ից *s.* spark; S. Կարկեհան.

Կայծախառն, **Կայծակա-** *a.* mixed with live coals; smouldering.

Կայծականամ, ացայ *vn.* to break out in flames, to blaze.

Կայծակեմ, եցի *vn.* to sparkle, to throw out sparks, to emit rays of light, to lighten; to fulminate.

Կայծակն, կան, կունք, կանց *s.* lightning, thunder; thunderbolt; spark; live or burning coal, glowing embers; *med.* carbuncle, anthrax; հրացայտ -կունք, lively sparks; -կունս արձակել, թօթափել, to emit sparks; to launch thunderbolts, to blast with lightning.

Կայծակնահար *a.* thunder-struck; thundering; fulminating; *fig.* startling; — ծառ, tree struck with lightning, a blasted tree; — առնել, սատակել, to

blast or strike with lightning, to thunderstrike ; – եղեւ տուն նորա , his house has been struck with lightning; –ութիւն s. fulmination.

Կայծակնաճաճանչ a. sparkling, bright, brilliant.

Կայծակնամաքուր a. purified by fire.

Կայծակնացայտ a. lightening, flashing; –կումն s. lightning; thunder.

Կայծանիշ մեղան S. Կարմրադեղ·

Կայծաչափ s. *phys.* spintherometer.

Կայծիկ s. little spark.

*Կայծխոտ s. *bot.* S. Եղերդ·

Կայծհան s. percussion-cap.

Կայծոռիկ s. furuncle, boil; S. Փու-[սուռայ·

Կայծքար s. silex, flint.

Կայկայիմ, եցայ *vn.* to be established, consolidated, rooted.

Կայմ, ից s. mast; sail; weaver's beam; առաջակողմեան, յետս– –, fore –; mizen –; – դրօշու, flag-staff; կանգնել զ–ն, to raise a –; խոնարհեցուցանել զ–ն, to unmast; to dismast.

Կայունն, –ունն s. stability, firmness.

Կայուն a. stable, firm, constant, durable, immoveable; – ինչք, real estate, houses & lands, landed estate; –ութիւն s. stability.

Կայռին s. *anat.* penis.

Կայս s. boisterous wind.

Կայսերագիր a. written or signed by the emperor. [or race.

Կայսերազարմ a. of imperial family

Կայսերազն a. imperial; s. imperial prince or princess.

Կայսերական a. imperial.

Կայսերակերպ a. resembling an emperor, like an emperor, imperial.

Կայսերակից a. associated in the empire, ruling jointly.

Կայսերանամ, ացայ *vn.* to rise to imperial dignity, to become or to be crowned emperor. [claim emperor.

Կայսերացուցանեմ, ուցի *va.* to pro-

Կայսերութի s. empire; – Ռուսաց, the Russian –; ի – ամբառնալ, to elevate to the purple, or to the imperial dignity.

Կայսր, սեր, ք, րաց s. emperor, cæsar; Վեհափառ –ն, His Imperial Majesty.

Կայսրընտիր, տրաց s. elector; –ընտրական a. electoral; –տրութի s. elec-

Կայսրուհի *sf.* empress. [torate.

Կայտառ, աց a. healthy; active, agile, lively, brisk, sprightly; swift, quick, diligent; gay, merry, jocose, facetious; pretty, pleasing, prepossessing; s. fish; reptile; – առնել, –ս յօրինել, to reanimate, to revive, to comfort, to invigorate.

Կայտառութիւն s. health, vivacity, loveliness; sprightliness, liveliness, gaiety, sportiveness. [baster.

Կայտեր s. marks or veins in ala-

Կայտիռ s. rejoicing, exultation; capering, friskiness, frolicsomeness, playfulness: aquatic animal, fish.

Կայտառամ, ացի, –ռեմ, եցի, –ռիմ, եցայ *vn.* to rejoice, to exult, to leap, to frisk or skip for joy, to romp, to sport, to frolic, to play, to be all alive; օձք կայտառան զանդամօք իմովք, the serpents are twining round me. [mal).

Կայտռիկատակ s. kick (from an ani-

Կայտռունակ a. containing fish or

Կայք, յից S. Կայ· [aquatic animals.

Կանամբի, բւոյ, բեաց a. having a wife, married, conjugated.

Կանանի s. *pl.* women, the fair sex.

Կանանոց s. gynecæum; harem, seraglio; nunnery, convent.

Կանանցաբարոյ a. feminine, weak, timid, cowardly, pusillanimous.

Կանանցածին, ծնաց a. born of a woman.

Կանանցական a. womanish, feminine.

Կանանցահանդերձ a. petticoated, clothed in woman's garments.

Կանանցապետութի s. gynecocracy, petticoat government.

Կանաչ a. green, verdant; s. verdure; – բացագոյն, sea-green; – հիրիկ, iris-green. [fine green colour; greenish.

Կանաչագեղ a. painted green, of a

Կանաչագոյն a. green; dark green.

Կանաչազարդ, –զգեաց, –զգեստ, –զուարճ a. clothed with verdure, covered with leaves or grass, verdant, green.

Կանաչաձեւ a. fresh, blooming.

Կանաչանամ, ացայ *vn.* to become green, to grow green again; to be verdant.

Կանաչասաղարթ a. green leaved.

Կանաչացուցանեմ, ուցի *va.* to paint or stain green, to make green.

Կանաչութիւն s. green, green colour; verdure.

Կանացաբար *ad.* womanlike, womanly; – զարդարիլ, to adorn or bedeck oneself like a woman.

Կանացի, ցւոյ, ցեաց a. female, feminine, womanly, womanish; effeminate; – սեռ, ազգ –, womankind, the fair sex; – ձայն, womanish voice; – զգեստ, woman's garments; – զարդ, female attire or ornaments; զգենուլ –, to dress oneself in female attire; մտանել զմուտ –, ննջել զգործ –, to lie with mankind; –ք s. pl. women: the menses.

Կանափ, ի s. hemp; tow.

Կանգնագեղ, –կան a. standing, upright, straight, erect; – հասակ, beautifully shaped, erect stature.

Կանգնաչափ s. cubit measure; a. S. Կանգնեան; –ութիւն s. measuring by cubits.

Կանգնաւոր S. –գեղ, –նեան.

Կանգնեան a. a cubit long; ժանիս –ս երեք, teeth three cubits long.

Կանգնեմ, եցի va. to raise, to lift up, to re-instate, to re-establish; to raise up, to erect, to set up, to found, to build, to rebuild, to construct; –իմ vn. to get up or rise again, to be built or raised up; to stay, to stop; – յաղթութիւն, – զնշան յաղթութեան, to win or obtain the victory; – դրօշ, to unfurl a flag; – զդրօշ ապստամբութեան, to raise the standard of rebellion; – զհամբաւ, զանուն ուրուք, to re-pristinate, to re-habilitate or restore the reputation or good name of; խորան, սեղան –, to pitch a tent; to erect an altar; – զբան, to reduce words to acts, to carry out a project, to accomplish a design; –իլ երիվարի, to prance, to rear.

Կանգնորդ a. upright, standing, erect.

Կանգնութիւն, –ումն s. the raising up; re-establishment, building, erection, construction; restoring, reviving; resurrection.

Կանգուն, գնոյ s. cubit; a. straight, standing, perpendicular, erect, on foot; firm, stable; –, ի – ad. quite, totally, entirely; – կալ, to be up or afoot; to rise, to get up; գնալ –, to be haughty, proud, vain; նստաւ –, he sat upright; եկաց –, he stopped, stayed, or did not pass beyond.

Կանգ, ից s. male eagle.

Կանգառիմ, եցայ vn. to be well established, deeply rooted, well founded, fixed; զաղփաղփուն –ռեալ, unstable, not well fixed; S. Խորարմատ.

Կանդրիւ s. large wooden collar.

Կանեփ S. Կանափ; –եայ a. hempen, made of hemp; –ի a. cannabine; s. drill, duck; –հատ s. hemp-seed; –ուկ s. urtica cannabina.

Կանթ, ից s. handle; – պտղոյ, pedicle, stalk.

Կանթար s. cantharis, spanish fly.

Կանթեղ, աց s. lamp; – լուսաւորութեան, կազի, գիշերոյ, ոգւոյ, illumination-, gas-–, night-light, spirit-–; – փողոցին, հայելին –, street-–; նշանատու –(երկաթուղւոյ), signal-–; – կիտուածագործի, enameller's- or glass blower's –; անբոց –, aphlogistic –; ինքնաբորբ –, – lighting by itself; անստուեր –, sinumbra –; – մածուցիկ, soldering-– ; –ք խաղետեղ թատեր, foot-–s; յարդարել, վառել, անցուցանել, զ–, to trim, to light, to extinguish or put out a –; S. Լապտեր.

Կանթեղագործ, աց s. lamp-maker; –կիր a. –-bearing; –վաճառ s. –-seller; –վառ s. –-lighter; –ւոր a. having a –; –խոտ s. bot. celandine, tetter-wort.

Կանխաբանութիւն s. foretelling, prediction; introduction.

Կանխագէտ a. foreknowing, prescient; s. diviner, foreboder; prognosticator.

Կանխագիտութիւն s. foreknowledge, prescience, gift of prophecy.

Կանխագոյն ad. already, before, previously, formerly, antecedently.

Կանխագուշակ a. foreboding, foretelling; foreboded or foretold.

Կանխագրական a. forewritten.

Կանխագրեմ va. to write beforehand, to predict in writing.

Կանխագրութիւն s. predicting in writing.

Կանխագրամ s. advance; – տալ, to advance sums.

Կանխադրութիւն s. introduction.

Կանխազեկոյց a. forewarning; forewarned.

Կանխաթիւ s. antedate.

Կանխաժաման S. Վաղահաս.

Կանխախօսումն s. prediction, prophecy.

Կանխածանօթ a. foreknown, foreseen, predicted; – գիտութիւն S. Կանխագիտութիւն.

Կանխակալ, ոյ a. ancient, of antiquated date or observance, old, inveterate; – կարծիք, սովորութիւն, prejudice, prepossession, preoccupation; – գիտումն, prescience, foreknowledge; –ութիւն s. ancient custom or usage, ancientness; prejudice, prepossession.

Կանխահաս a. early, precocious, premature, forward.

Կանխահատոյց a. paid in anticipa-

tion, advanced; – *դրամ*, advance; – *լինել*, to advance, to advance sums.

Կանխահրաւէր *a.* invited precedently.

Կանխաձայնեմ *va.* to foretell, to announce beforehand, to predict; *–ձայնութիւն* *s.* prediction.

Կանխաճառ *a.* foretold, predicted.

Կանխամուտ *a.* introduced beforehand; – *սովորութեն* *s.* prejudice, prepossession.

Կանխասահմանեալ *a.* predestinated; *–մանութիւն* *s.* predestination.

Կանխասաց *a.* predicting, foretelling; foretold, foreboded; – *բանք*, predictions; – *լինել*, to foretell, to predict, to prognosticate; to forewarn; *–ելի* *a.* prophetic; *–ութիւն* *s.* prediction.

Կանխատես *a.* provident, wary, cautious, prudent; *–ութիւն* *s.* foresight, precaution; prevision. [early.

Կանխարկ *a.* thrown down or fallen

Կանխացոյց *a.* foreshown, presaged.

Կանխաւ *ad.* before, antecedently, formerly, anciently, in bygone times.

Կանխեմ, եցի *vn.* to rise or get up early; to arrive early, before daybreak; to hasten, to hurry, to make haste, to arrive beforehand, to anticipate, to go or get before, to precede, to get the start of, to outstrip; – *ը̄ առաւօտն*, to rise with the dawn, to get up at day-break; – *ունել*, to preoccupy; – *ի կատարումն ըղձից ուրուք*, to anticipate one's desires or wishes; *–եալ եւ անագանեալ արձանանայր աւուրս խ̄*, he drew near morning & evening & presented himself forty days.

Կանխերգ *a.* predicted, foretold; *s.* *mus.* prelude.

Կանխիկ *a.* in cash, ready (money); – *դրամ*, ready money, cash; *–հատուցանել*, to pay in advance. [anticipation.

Կանխութի̄ն *s.* priority, anteriority;

Կանխումն գիշերահաւասարից *s.* precession of the equinoxes. [or informed.

Կանխուսեալ *a.* already instructed

Կանկար, –կառ, ոյ *s.* thistle-head; *ընտանի* –, artichoke; *տակ –ի*, bottom of an artichoke; *միս –ի*, artichoke-chard; *–ի խէժ*. S. *Կինաքարիս*; *–անոց* *s.* artichoke-ground.

***Կանկիճ** *s.* wooden hook.

Կանճոխ, –ճուխ *s.* rod, stick, switch; pole, perch.

Կանճրակ, ի *s.* rape, rapeseed.

Կանոն, աց *s.* rule, regulation; order, method, law, ordinance, precept, statute, regimen; model, example; canon; *հանրական* –, as a general rule; *ը̄ –ի*, according to rule; strictly, regularly; *ը̄ –աց*, canonically; – *լինել*, to serve as a rule or precept; *պահել*, *լուծանել զ–*, to keep, to break the rules or regulations; – *երից* *arith.* rule of three, proportion.

Կանոնագէտ *s.* canonist; *–գիտութի̄* *s.* canon law; *–գիրք* *s.* book of canons.

Կանոնադիր *s.* law-giver, legislator.

Կանոնադրական *a.* relating to rules or regulations.

Կանոնադրեմ, եցի *va.* to establish rules or laws, to make regulations for: to admit into canon-law.

Կանոնադրութիւն *s.* regulation, statute, constitution. [*s.* –ness.

Կանոնական *a.* canonical; *–ութիւն*

Կանոնապահ *a.* observant of rules; *–ութիւն* *s.* observation of rules.

Կանոնաւոր *a.* regular, methodical; *–եմ* *va.* to regulate, to rule, to put in order; *–իչ* *s.* regulator; *–ութիւն* *s.* regularization.

Կանոնեմ, եցի *va.* to regulate, to determine, to order, to dispose, to arrange; to prescribe, to decree, to constitute, to establish: to canonize.

Կանոնիկոս, աց *s.* canon; *կեանք –ի*, an easy life; *–ական* *a.* belonging to a –; *–ութիւն* *s.* –ry; *–ուհի* *sf.* –ess.

Կանոնլրմունք *s.* appendix or supplement to the canons.

Կանուխ, նխոց *a.* premature, precocious, ripe before the season; prior, anterior; old, ancient; *ad.* before the time, prematurely, very early; *պտուղ – եւ անագան*, early or first, late or backward fruits; *անձրեւ – եւ անագան*. the former & the latter rain, vernal & autumnal rain.

Կանչ, ոյ, ի, –իւն *s.* cry, scream, shriek; – *եւ կառանչ իմ*, my cries & shouts.

Կանչեմ, եցի *vn.* to cry, to cry out, to scream; to exclaim; * to call after, to halloo.

Կանչող *a.* crying; * calling after.

Կաշառնամ, ացայ *vn.* to become as hard as leather, to grow hard or tough, to shrivel; *fig.* to become rude, coarse, to be clownish.

Կաշառ, աց *s.* bribe, present; fees;

-օք *ad.* by force of bribery, through corruption; - *խթել, տալ,* to bribe, to corrupt, to grease the palm; to suborn; -*ս առնուլ,* to take bribes.

Կաշառաբեկ *a.* bribed, corrupted, suborned; venal; -*ս առնել,* to bribe with gifts or with money.

Կաշառագնաց լինիմ *vn.* to suffer oneself to be corrupted, to take bribes.

Կաշառակուրծ S. **Կաշառաբեկ**; -*առնել,* to procure through bribery & corruption; to corrupt, to render venal; - *լինել,* to allow oneself to be corrupted by presents, to be venal.

Կաշառակրծութիւն *s.* bribery, corruption; venality. [rupting.

Կաշառանք *s.* act of bribing or cor-

Կաշառառու, աց *a.* taking bribes, greedy of gifts, corrupted, venal; suborned; - *դատաւոր,* venal or unjust judge; -*թի s.* the accepting or taking bribes. [presents to corrupt.

Կաշառատու, աց *a.* giving bribes or

Կաշառեմ, եցի *va.* to bribe, to corrupt, to practise upon, to buy over, to suborn, to seduce with bribes. [orner.

Կաշառիչ *s.* briber, corrupter; sub-

Կաշեայ *a.* leathern, made of leather.

Կաշեգործ *s.* currier; -*ութի s.* currying; S. **Խաղախորդ**, &c.

Կաշի, շւոյ *s.* hide, skin, leather.

Կաշիմ S. **Կաշանամ**.

Կաշկանդեմ, եցի *va.* to bind, to tie fast, to bind tightly, to lash together.

Կաշկառ, աց *s.* heap of stones, mass of rocks.

Կաշմբուռն *a.* strong, sturdy, robust, athletic, muscular, brawny.

Կաչաղակ, ի *s.* magpie, pie.

Կա̊պ, ոյ,ից *s.* tie, fastening, knot; ligature, lace, lashing, band, withe, bandage, swath; rope, cord, string; *gr.* spelling; *fig.* tie, bond, link, obligation; *a.* sour, sharp, harsh, tart.

Կապալ, աց, ոց *s.* tax paid for a dignity or privilege. [joined.

Կապակից *a.* bound together; con-

Կապակտուր լինիմ *vn.* to clear away any obstacles; *fig.* to break a treaty, to repudiate obligations. [sension.

Կապակռիւ *a.* causing strife or dis-

Կապակցեմ, եցի *va.* to bind, to unite, to join together.

Կապակցութի *s.* bond, joint, conjunction, connexion; coherence, relation, concatenation.

Կապայ, ի *s.* cassock, monk's gown.

Կապան, ի *s.* pass, defile.

Կապանապահ *s.* gaoler, gaol-keeper.

Կապանաւոր *a. s.* bound, detained, captive, prisoner.

Կապանճ, -ջ *s.* jess, bewits.

Կապանք *s. pl.* bonds; hand-cuffs, fetters, manacles; rope, cord, string: pass, defile: censure, excommunication; *տուն -նաց*, prison, jail, gaol; *ի -նս արկանել,* to fetter, to put in irons; to imprison.

Կապար, աց *s.* lead; *bot.* caper; caper-bush; -*աքուռ s.* massicot; -*ագոյն a.* lead-coloured; -*ագործ s.* plumber; -*ագործութի s.* lead-works or --manufacture; -, -*ագրիչ s.* lead-pencil; -*ակիր գունդ, դերձան s.* plummet, plumb-line; -*ահանք, տաց s.* lead-mine; -*ային a.* of the nature of lead; -*այօդ a.* leaded; -*եայ a.* leaden, made of lead; -*եմ va.* to plug or stop with lead, to lead, to plumb; -*ոյ ունդ s.* *bot.* anise-seed. [bond, cord.

Կապարան *s.* detention; prison:

Կապարճադարձոյց *a.* deserting, fugitive; rebellious. [bearer.

Կապարճակիր. կրաց *s.* quiver-

Կապարճաւոր, -ճեալ *a.* furnished with a quiver, (archer).

Կապարճք, ճից *s.* quiver; -*ճս դարձուցանել,* to desert, to rebel; to retreat, to flee, to throw down one's arms. [extremities of sausages.

***Կապգլուխ** *s.* hock of a ham; tied

Կապել՛այ, -լ՛անոց, -լ՛իոն *s.* tavern, public-house; eating-house: brothel.

Կապել՛ապետ *s.* -*լ՛ուհի sf.* tavern or eating-house keeper, publican.

Կապեմ, եցի *va.* to bind, to tie, to fasten; to bind or tie up; to bind fast, to pinion; to cord, to bind with cords; to bind, to connect or link with; to chain, to put in irons, to imprison; *fig.* to bind by friendship, by contract; *gr.* to spell; -, *ընզովիւք* -, to excommunicate; - *եւ արձակել,* to bind & loose; - *խրձունս,* to bind up in bundles, in fagots; - *պատուհաս, դարովանս ի վերայ,* to chide, to correct, to punish, to chastise; to blame, to censure; - *զլեզու,* to tongue-tie; *անուն* - *անձին*, to gain celebrity, to win fame, to acquire a great name; -*իմ vn.* to be fastened, tied or bound; to thicken; *fig.* to become attached to, to

conceive affection for; — ոգւոյ ընդ ոգւոյ, — ընդ ումեք սիրով, to knit soul to soul, to be linked in the closest bonds of affection; կապեալ a. bound; imprisoned, enchained; կապեալ ձեռօք եւ կապեալ ոտիւք, bound hand & foot; իրք կապեալք s. rebus.

Կապերտ, ից s. piece of linen or of cloth; — հնոտի, tatter, rag; — այծեայ, sack- or hair-cloth; պատառել ի —ս, to tear to shreds, to tatters; * S. Գորգ.

Կապերտակ, —տիկ s. piece of rag, shred, strip, scrap, cutting of linen or cloth.

Կապէնք, պինաց s. price of prostitution.

Կապիկ, պկաց s. ape; — փոքր, marmoset; — մեծ, baboon; — երկայնաձետ, monkey.

Կապիճ, պճաց s. cab, hin, ephah, bath: bezel, mounting, setting; —ք աչաց, socket or orbit of the eye; —ք կօշկաց, vamp of a shoe; iron greaves, armor for the legs; — ատամանց, socket, alveolus.

Կապիտոլին, ի s. Capitol.

Կապծառ s. stem of a bunch of grapes.

Կապկեմ, եցի vn. to ape, to mimic.

Կապկութիւն s. mimicry.

Կապնդեղ s. bot. lovage.

Կապոյտ, ուտոյ a. blue, sky-blue, cerulean, azure; s. light blue; գորշ —, dark blue; — դաշտ, the liquid plain, the watery way, the main, the sea.

Կապութիւն s. sourness, acritude, tartness.

Կապումն s. tie, ligament.

Կապուտ, ից, — կողոպուտ s. spoils, booty, plunder, loot; a. despoiled, stripped; — առնել, թողուլ, to despoil, to plunder; ժողովել զ— անկելոց, to gather the spoils.

Կապուտագոյն a. blue, azure, cerulean.

Կապուտակ, աց a. bluish, rather blue, sky-blue; livid; s. bluish, light blue; — կամար, the roof or canopy of heaven, the cerulean vault; —ն երկնից, sky-blue; — ծովու, ultra-marine; բրուսիական —, Prussian blue.

Կապուտակագոյն, —ագործ, —կեալ, —կեայ a. blue, bluish, azure; livid, blackish.

Կապուտակիմ, եցայ vn. to become bluish or livid, to approach to blue.

Կապուտակութիւն s. lividness.

Կապտպար, Կապրցախ S. Կապպար bot.

Կապուաշ a. sky-blue, sky-coloured.

Կապտային a. chem. cyanic.

Կապտափայտ s. Brasil-wood.

Կապտեմ, եցի va. to despoil, to depredate; to plunder, to loot, to collect booty, to rob, to strip, to deprive of, to bereave.

Կապտումն, —ման s. spoiling, stripping, depredation, pillage.

Կառ հարկանեմ vn. to fix the regards on, to bend, to rivet on.

Կառաքարձ, —ձից a. harnessed, put to; —ձիգք s. team; pair of carriage horses.

Կառաքոյս s. zoophyte.

Կառագործ, աց s. coach-maker.

Կառաժուղ s. zool. gnat, mosquito.

Կառամ, ացի S. Խենեշանեմ.

Կառամարտ, —իկ a. fighting from a chariot; s. fight in chariots.

Կառամուտ, մտաց a. harnessed to a coach; — դուռն, carriage-gate.

Կառան, աց s. cable.

Կառանոց s. coach-house; կառք —ի, job-carriage.

Կառանչ, Կառաչ s. cry, outcry; bellowing; croaking; —եմ vn. to cry, to shout, to utter cries, to bawl; to roar; to low, to bellow; to croak; —իւն s. crying; bellowing; croaking.

Կառապետ, —վար, աց s. coachman, driver: drover; governor, regent, chief, rector; աթոռակ —վարի, coachman's box.

Կառավարեմ, եցի va. to drive a coach: to conduct, to direct, to guide, to govern, to rule, to regulate; սրարշաւ —, to drive, to rattle along at full speed; —իմ ի թեւս հողմոց, to be borne on the wings of the wind.

Կառավարութիւն s. act of driving: conduct, regency, direction, government; — տան, house-keeping, economy; — քաղաքի, policy, politics.

Կառատորմ, ից s. carriage- or waggon-train; railway train; — երթի, down-train; — դարձի, up-train; երագընթաց կամ յամրընթաց —, fast, slow train; հապճեպ, կայական, համաշխարհիկ, բեռնակիր or —բարձ, երթեւեկաց, զբօսանաց —, express, stopping, mixed, goods- or luggage-, passenger, excursion train; անեղափոխիկ —, carriage-truck; եհաս ահա հինգ եւ կիսոյ ժամուն —, the half past five o'clock train is just arrived; S. Երկաթուղի.

Կառարշաւ, աց a. racing in chariots; s. chariot-race.

Կառաւէտ a. having many coaches, waggons or carriages.

Կառափեմ, *եցի va.* to strike on the head; to behead, to execute, to decapitate; *տեղի -ելոյ* or

Կառափետող *s.* Golgotha, place of the skull, place of execution.

Կառափն *s.* skull, cranium, head; *ը - հանել*, to cut off the head, to behead, to decapitate.

Կառափնատ *a.* whose skull or head is wounded; *-եմ va.* to wound or strike on the head, to knock down; *-ում, փումն s.* beheading, decapitation.

Կառքնթաց *a.* carriageable, along which a coach may go; *- շաւիղ*, carriage-way. [hawthorn, may-.

Կառն, *ռին s.* prickly artichoke; *bot.*

Կառոյց S. **Կառուցումն**.

Կառուցանեմ, *ուցի va.* to construct, to build, to found, to erect, to set up, to raise, to edify; to establish, to fix; to place, to put; to fasten, to attach; to thicken; *- զաչս յինն*, to fix eyes on, to gaze at, to stare at.

Կառուցումն *s.* establishment, construction, edifice, erection; elevation.

Կառչիմ, *ռեայ*, *ռուցեալ vna.* to grasp at, to lay hold of, to cling to; to be caught by, bent or fixed on.

Կառք, *ռաց s.* coach, carriage; car, chariot; *- գերանդաւորք*, chariots armed with scythes; *- աղխաղխեալք*, *շոգեմուղ* - S. **Կառատորմ**; **Շոգեկառք**; *- երկանիւ*, *քառանիւ*, two-, four-wheeled carriage; *- քառաձի*, *վեցձիան* -, a coach and four, and six; *համաշխարհիկ* -, *- կառանոցի*, *երագընթաց* -, omnibus; hired-coach; stage-coach; *վարձուոր*, *հասարակաց*, *առանձնական* -, hackney-coach; cab; private coach; *հովանաւոր* -, carriage with awning or curtains; *կայարան կառաց*, cab-stand; *աստիճանք*, *դռնակ*, *աթոռակ*, *կուրծք* or *գոգ*, *կողք կառաց*, foot-board of a carriage; carriage-door; coachman's box; carriage-seat; hood of a carriage; *վարձ*, *սակ կառաց*, coach-hire, fare; *ելանել*, *մտանել ի կառս*, to get into the coach; *օգնել*, *տալ բազուկ յելեւէջս ի կառաց*, to help into, or down from the coach; *վարել զկառս*, to drive a coach; *երթալ կառօք*, to go or ride in a coach; *կացուցանել զկառսն*, to stop the carriage; *դադարէ -ն*, the coach pulls up; S. **Երկաթուղի**, **Իջանեմ**, **Ծածկոյթ**, **Կաղմեմ**, &c.

Կասդրիոս *s. zool.* beaver, castor; *ast.* Castor. [**Կասիմ**, **Կասումն**.

Կասեմ, *եցի vn.* to thrash corn; S.

Կասեցուցանեմ, *ուցի va.* to stop, to detain, to withhold, to keep in, to prevent, to hinder, to hold back, to interrupt. [interrupting.

Կասեցուցիչ *a.* impeding, hindering,

Կասի, *սեայ*, **Կասիա**, *յի s.* cinnamon; *-*, *-մոն* S. **Կակժիրակ**.

Կասիմ, *եցայ vn.* to stop, to cease, to desist, to leave off; to retard, to restrain; to diminish, to lessen: to lose courage. [machine.

Կասիչ *s.* thrasher; *mech.* thrashing-

Կասլայ, *ից s. bot.* laurel, bay-tree.

Կասկ, *ի s.* pearl barley; malt: chestnut? S. **Շերխայ**.

Կասկած, *ի*, *ոյ s.* suspicion, distrust, surmise, doubt, mistrust, umbrage; *a.* suspicious, distrustful; *- առնուլ*, *- ի միտ ունել*, *ի - անկանել*, *ի -ի լինել*, to conceive suspicion, to be suspicious, to distrust; *փարատել զ-*, to dissipate, to cure of suspicion or distrust; *- է ինձ զնմանէ*, I suspect or doubt him, I have no confidence in him, I am diffident about him.

Կասկածագին, *-գոյն a.* suspicious, doubtful, mistrustful.

Կասկածանք S. **Կասկած**; *-նօք ad.* distrustfully; *տարապարտ -նս ունել զումեքէ*, to suspect wrongfully or without cause.

Կասկածաւոր, *-ծելի a.* suspicious, distrustful, diffident, doubtful; *- լինել ումեք*, to become suspicious of.

Կասկածեմ, *եցի vn.* to suspect, to have a suspicion of, to be doubtful, to doubt, to distrust, to mistrust, to be diffident, mistrustful of.

Կասկածոտ, *աց a.* suspicious, mistrustful, distrustful, umbrageous; apprehensive, uncertain, irresolute; *ի միտս -ս լինել մէ*, to suspect, to want confidence in, to be suspicious of; *-ութ s.* diffident or irresolute character.

Կասկամ, *ի s. zool.* owl, owlet.

Կասկաջուր *s.* malt-liquor, beer; *- սեղանոյ*, table-beer; *- ընտիր*, ale; *զօրաւոր* or *սեաւ* -, porter; *- յոռի*, swipes.

Կասկարայ, *եց s.* gridiron: trivet, tripod; *խորովել*, *եփել ի վերայ -ի*, to broil, to grill, to cook upon the gridiron; *միս ի -է*, broiled meat; *- եղէն*

գետնախնձորօք, beefsteak with potatoes.

Կակեմ va. to profane, to pervert.

Կասկենի s. chestnut-tree; ձիդիկ —, horse-—; -ք s. chestnut-grove.

Կակուածն s. chem. malting.

Կասում, սի va. to thrash corn; to triturate, to pound, to bruise, to grind.

Կասումն s. cessation: thrashing.

Կասս s. pincers.

Կաստանայ, ի s. chestnut.

Կատաք s. bird living on herbs.

Կատակ, այ s. green wood-pecker.

Կատակ, ի s. jesting, trifling, pleasantry, trick, facetiousness; derision, mockery, sport; S. Խաղ; a. jocose, waggish; humorous, diverting, droll, comical; ը -ս ad. pleasantly, jestingly, in jest; humorously, jocosely; Թող անդր զ-զ, joking apart; — առնել, to jest, to joke, to play the fool; ասել ը -ս, to say jestingly, to cut jokes on; այպն եւ — առնել, to laugh at, to mock, to jeer, to rally, to scoff at, to turn into ridicule; այպն եւ -լինել, to be laughed at, to be the laughing-stock of.

Կատակաբան a. droll, facetious, jocular, waggish; -ութի s. facetiousness, merry conceit, pleasantry, joceseness, humour.

Կատականք s. pleasantry, jesting, foolery; mockery, jeering, jeer, scoff, taunting; opprobrium; ծաղր եւ այպն -նայ առնել, to laugh, to scoff or jeer at, to cover with ridicule; — or ծաղր եւ այպն -նայ լինել, to make oneself ridiculous, to render oneself an object of derision; to be the sport or laughing-stock of.

Կատակասէր a. given to waggery or jesting, jocose, waggish, jocular, sportive, playful.

Կատակեմ, եցի va. to joke, to jest; to rally, to mock, to laugh at.

Կատակերգ, -ակ, այ s. actor; comedian; a. comic.

Կատակերգական a. comical, burlesque, farcical, facetious.

Կատակերգասէր a. fond of comedy.

Կատակերգեմ va. to act comedy; fig. to jeer, to mock, to rally.

Կատակերգութիւն s. comedy; — յօրինել, to write —; — խաղալ, հանդիսացուցանել, to act a play, to represent plays; — իմն է, it is but a farce.

Կատակութիւն S. Կատականք.

Կատաղաբար ad. furiously, madly, frantically, desperately. [roistering.

Կատաղախօս a. speaking furiously,

Կատաղանք S. Կատաղութիւն.

Կատաղենի s. bot. sycamore-tree.

Կատաղեցուցանեմ, ուցի va. to enrage, to drive into a rage, to goad to madness, to drive mad, to plague to death. [ing, maddening.

Կատաղեցուցիչ a. enraging, provok-

Կատաղի, ղւոյ, ղեաց a. furious, impetuous, fierce, frantic, fiery, passionate, violent, unruly, wild, untamed, ferocious.

Կատաղիմ, ղեցայ vn. to become furious, to be enraged, to fly into a passion, to put oneself in a fury, to break into a fit of rage, to fall into a violent passion.

Կատաղութիւն, -ումն s. fury, impetuosity, rage, ferocity, frenzy, madness; — հողմոց, wild rage, the fury of the winds; -շան, rage, canine madness.

Կատար, ոյ, ի, աց s. summit, top, height; end, conclusion, term, accomplishment; — հաւու, cock's comb; crest; tuft; ի -ն եհաս շնորհաց, he arrived at the height of favour; S. -ած.

Կատարած, ից, աց s. end, extremity, term; accomplishment, consummation; end, close, expiration; effect; destiny; ածել ի —, ի — հասուցանել, to conduct to the end, to put the finishing touch, to accomplish, to perfect; նորանշան կալաւ նա —, strange was his destiny; մինչեւ ի — Ժի, to the end of time, when time shall be no longer; այլ չեւ է —, but the end is not yet.

Կատարեալ a. perfect, accomplished, finished, consummated, complete, entire; gr. preterite, past tense; այր —, man of ripe years, grown up; fig. perfect man; — աւուրբք, advanced in years, old, aged; decrepit, worn out with age; լինել եւ եւս —, to improve; տալ իշխանութիւն —, to empower, to give full powers to.

Կատարելագործ a. improved; improving; -եմ va. to finish; to improve, to perfect; -ութիւն s. improvement, perfection. [a perfect state.

Կատարելածին a. produced, born in

Կատարելակից a. equally perfect.

Կատարելահասակ *a.* grown up, adult.

Կատարելամիտ, *-լիմաստ* *a.* of ripe understanding, discreet, prudent, judicious, sage. [fection; entirely.

Կատարելապէս *ad.* perfectly, in per-

Կատարելիք, *լեաց* *s.* completion, accomplishment.

Կատարելութիւն *s.* perfection, integrity; crowning, perfecting; completion, accomplishment, consummation: martyrdom: consecration; initiation; *-դ* or *քո -*, your Holiness.

Կատարեմ, *եցի* *va.* to finish, to end, to accomplish, to complete, to consummate; to crown, to effectuate, to execute, to perfect, to fulfil, to realize; to improve; to consecrate, to hallow, to sanctify; to initiate; *- զպարտս*, to perform, to fulfil a duty; *- զխորհուրդ*, to carry out a project; *- զկամս անձին*, to have one's will, to be contented, to do according to one's desire; *- զկամս ուրուք*, to fulfil the wishes of, to humour, to content; *- զցասումն իւր յոք*, to glut one's wrath or vengeance on; *- զընթացս*, *զաւուրս իւր*, to terminate one's career; to end one's days; *- զհոգի*, to give up the ghost, to expire, to die; *-իմ* *vn.* to be ended, accomplished, finished, crowned; to end, to die.

Կատարիչ *s.* that conducts to the end, finisher, executor: consecrator; *a.* executive.

Կատարողապետ *s.* author of all Mysteries; high-priest; minister, celebrator. [bration; consecration.

Կատարողութիւն *s.* administration, cele-

Կատարումն *s.* accomplishment, completion, consummation; execution, realization; perfection; end, term, conclusion; end, death; consecration; initiation; *- առնուլ*, to be accomplished, finished; to improve; *- տալ*, *ի - ածել*, to finish, to terminate, to achieve; to improve, to perfect; S. Մազ. [*s.* entelechia.

Կատարուն S. Կատարեալ; *-ութիւն*

Կատաւան *s. bot.* origanum.

Կատու, *ուց* *s.* cat, puss; *- արու*, tom-cat; *- էգ*, she-cat; *- ոչ մաքեալ*, he-cat; *ձագ -ի*, kitten, young cat; *- քաջ մկնորս*, a good mouser; *- վայրի*, cat-o-mountain; *նուալ*, *մլաւել -ի*, to mew, to caterwaul; *մլաւիւն -ի*, mewing; *երաժշտութիւն -ուց*, caterwauling; *ծնանիլ -ի*, to kitten, to bring forth kittens; *-ագլուխ* *s. bot.* cat's-head; *-ախոտ* *s. bot.* cat-mint, valerian; *-ականջ* *s. bot.* anagallis, chickweed; *-ակն* *s.* cat's-eye; *-աձետ* *s. bot.* cat's-tail; *-աձուկն* *s. zool.* skate, ray, thornback; *-իկ* *s.* kitty, pussy; *-ոտն* *s. bot.* cat's-foot; *ուր չիցեն -ք*, *անդ կայտառեն մկունք*, when the cat's away, the mice will play.

Կատուապաշտ, *եց* *s.* worshipper of cats; *-ութիւն* cat-worship.

Կար, *ոյ*, *ով* *s.* cord, line, string, packthread, twine; needlework; sewing; seam; *-ս հարկանել*, to sew, to seam.

Կար, *ի*, *իւ* *s.* force, vigour; power; means, faculty, capacity, ability; *- է*, it is possible; *ոչ է -*, it is impossible; *ըստ -ի*, as much as possible; *ըստ -ի փութով*, with all possible speed; *ըստ -ի նուազ*, as little as can be; *իւրաքանչիւր ըստ իւրում -ի*, every one according to his ability; *որչափ ի -ի քում իցէ*, as much as you can or as lies in your power; *ըստ իւրում -ի*, *որչափ էր նմա - եւ զօրութիւն*, as much as he could or as was possible for him; *ըստ -ի զօրութեան իմոյ*, to the utmost of my power, the best I can, all I can; *ոչ գոյ ի ձեռս մեր -*, it is not in our power, we cannot; *ի վեր քան զ- իւրեանց*, beyond their strength.

Կարագ, *ի* *s.* butter; *թարմ*, *ընտիր*, *ծթրեալ -*, fresh, best, rancid -; *-աւաճառ*, *ի* *s.* --dealer; S. Կոգի.

Կարակին, *կնաց* *s.* compasses: arch, vault; *- հիւսանց*, mason's plummet, level. [round, circular.

Կարակնաձեւ *a.* in form of a circle,

Կարակնեմ, *եցի* *va.* to measure with a compass; to round.

Կարակում *s.* thick dirt or mire, mud, slough; *a.* miry, muddy.

Կարաձմեռն *s.* rough, hard winter; *a.* wintry, brumal, hyemal, stormy.

Կարամուքք *s.* joints or articulations.

Կարան, *ի* *s.* seam; suture; *առանց -ի*, without seam.

Կարապ, *ոյ* *s.* swan; *ast.* cygnus; *ձագ -ի*, cygnet; *երգ -ի*, the tuneful strains of the expiring swan; *-անման պարանոց*, a swan-like neck.

Կարապետ, *ի* *s.* fore-runner, precursor; out-rider; guide; *a.* precursory; *np.* St. John the Baptist.

Կարապետեմ, *եցի* *vn.* to fore-run,

to precede; to guide, to conduct: to announce. [sor; fore-running.

Կարապետութիւն *s.* office of precur-

Կարաս, ոյ *s.* large jar for wine, cask, barrel; tun; S. Տակ.

Կարասեակ *s.* light baggage.

Կարասեկիր *a.* carrying goods; baggage-bearing; *s.* beast of burden.

Կարասի, սւոյ, սեաց *s.* moveables, furniture, baggage, equipage; implements, utensils; wealth, riches, money; goods & chattels; գիր -սւոյ, inventory; Հարեալ ի -սւոյ, covetous, miserly, niggardly. [*s.* caravansary.

Կարաւան, այ *s.* caravan; -ատուն

Կարաւանդք, դից *s.* seam, joint of a cuirass; *anat.* hypochondria.

Կարգ, աց *s.* order, rank, rule, class, series, arrangement, disposition; turn, succession, sequel, train, concatenation; rank, state, condition; religious order, institution, congregation; orders, ordination; hierarchy: rank, line, battle-array: stratum, layer, bed; -աւ, ըստ -ի, ըստ -է, ըստ -ի *ad.* in order, orderly, regularly, systematically, by turns; one after another, each in his turn, successively; արտաքոյ -ի, extraordinary; - բնութեան, order of nature; -ք ուղղութեան, the laws of probity; դաշնակեալ -ք, harmony; - կանանց, the menses; - բանից, train, style; անդրէն ի - բանին ի վեր ելանել, to return to one's subject, to take up a discourse anew; դնել ի -ի, ի - արկանել, ածել, to put or set in order, to set to rights, to order, to arrange, to settle, to regulate, to dispose; to count, to enumerate, to run over; խանգարել, վրդովել զ-, to trouble, to disturb, to disarrange (the order); զանձն ի -ի ունել, ի - գալ, to regulate oneself, to become discreet, orderly, methodical; ի - անկանիլ, to prepare, to dispose oneself; ի - անկեալ պատմել, to relate or narrate methodically; դնել ի վերայ -, to impose penitence; ի - Ծի մտանել, to get married; և որ ի -ին, and so forth; & so on, et cœtera, &c. [regular discourse.

Կարգաբանեմ, եցի *vn.* to make a

Կարգաբանութիւն *s.* good order, method in oratory.

Կարգագիր *a.* written regularly; *s.* register, account book.

Կարգագրեմ *vn.* to write methodically, in order; to set down in writing.

Կարգադիր, դրաց *s.* orderer, disposer, regulator: tutor.

Կարգադրեմ, եցի *va.* to put in order, to order, to dispose, to arrange.

Կարգադրութիւն *s.* ordinance, disposition, arrangement; regulation, organisation, constitution.

Կարգաթող *a.* unfrocked; *s.* apostate; - լինել, to throw off the cowl, to renounce holy orders.

Կարգած, ոյ *s.* order, command; *a.* ordered, established.

Կարգակէս *s.* half a line.

Կարգակից *a.* of the same religion or order; *s.* comrade, colleague, companion, fellow.

Կարգապետ *s.* chief, founder or general of an order: Grand-Master.

Կարգապետութիւն *s.* hierarchy; supreme or highest order: generalship.

Կարգառութիւն *s.* succession.

Կարգավար, ի *s.* inspector.

Կարգաւոր *a.* well ordered, regular, methodical; *s.* ecclesiastic, clergyman.

Կարգաւորաբար, -պէս *ad.* orderly, regularly, suitably, methodically.

Կարգաւորեմ, եցի *va.* to order, to set in order or to rights, to regulate, to arrange, to array, to dispose.

Կարգաւորութիւն *s.* regularity, order, method; arrangement, regulation; - հասարակաց աղօթից, office, divine service.

Կարգեմ, եցի *va.* to put in order, to arrange, to dispose, to distribute, to put, to place, to plant; to destine, to prescribe, to fix, to assign, to enjoin; to establish, to institute, to found; to constitute, to charge with; to number or place among; to range in battle, to put in order of battle or in battle-array; *to marry, to give in marriage; կարգեալք ը͞ն իշխանութը͞, subaltern, inferior; խաղային յառաջ՝ կարգեալք և կազմեալք, they cautiously advanced in good order. [dismissal.

Կարգընկեցութիւն *s.* degradation,

Կարգընկէց S. Կարգաթող; - առնել, to dismiss, to degrade from one's rank, degree or dignity; to expel from a convent.

Կարգամ, ացի *va.* to call, to call aloud, to send forth or utter cries; to cry to, to call upon, to invoke, to implore; to call, to name; to call, to in-

vite; to raise up, to evoke: to read; – *զանուն ուրուք*, to call on the name of; – *յօգնութիւն*, to cry out for help, succour or assistance; – *զօգնականութիւն*, to implore, to crave the aid of; *երջանիկ – ումեք*, to call any one happy; *վաշ վաշ* –, to insult, to revile, to scoff at; *աւաղ* or *ողբս* –, to deplore, to lament for.

Կարդացումն *s.* lecture.

Կարդինալ, *աց s.* cardinal; *–ական a.* of a –; *–ութիւն s.* –ship.

Կարելի *a.* possible; – *է*, it is –; *չէ* –, it is im–, it cannot be.

Կարեկիր, *–կից a.* compassionate, feeling, sensible, merciful; *–կիցք մարմնոյ*, intimate friends; relations; *–կից լինել* S. **Կարեկցիմ**.

Կարեկցաբար *ad.* compassionately, with compassion, mercifully, piteously; tenderly, affectionately; – *հայել*, to regard with a compassionate eye.

Կարեկցիմ, *եցայ vn.* to compassionate, to pity, to have compassion on, to take pity, to be pitiful, to feel pity or compassion for, to interest oneself for.

Կարեկցութիւն *s.* compassion, pity; *շարժել ի* –, to move one's compassion, to excite pity.

Կարեմ, *եցի va.* to sew, to join or unite with thread; – *հարեւանցի*, to tack, to baste; – *զոք ը. որմն*, to pin against the wall, to transfix.

Կարեմ, *բացի vn.* to be able, to have the power or faculty to, to be in a condition to; *ոչ եւս* –, to be quite exhausted or spent; *չ*–, to be unable; *չկարեմ առնել զայդ*, I cannot do it; *արարից՝ եթէ կարացից*, I will do it if I can.

Կարեպէս է *v. imp.* it is very necessary, it is urgent.

Կարեսէր *a.* fond of trifles; passionate, vicious.

Կարեվէր *a.* severely, seriously or mortally wounded; *ad.* cruelly, grievously, to death; – *խոցել, առնել*, to wound mortally or to death, to give a death blow or mortal wound.

Կարեցական *a.* self-interested, selfish.

Կարեւոր, *աց a.* necessary; urgent, pressing, important, serious; grave, considerable; essential, expedient: devoted, attached; intimate; *ad.* much; *–ք*, the needful or essential, necessaries, what is necessary; *–ք* or – *անդամք*, the private parts; *–հարկ*, great, absolute necessity, urgency; – *սիրելի*, a very amiable person; – *բարեկամ*, intimate friend; – *եւ* –, of great importance, very necessary; – *պէտք*, the real wants; *–ք բնութեան, կենաց*, the wants of nature; the necessities of life; *զրկել ի –աց*, to want the needful; – *համարել, դատել*, to deem necessary; – *զանձն ընծայեցուցանել*, to make oneself necessary; – *լինել*, to be necessary, wanting, needful; – *է զի*, it is important that; – *է մեզ յոյժ զի*, it is of the highest importance to us all that; *առցուք սուղ ինչ* –, let us take a little food, let us eat a little.

Կարեւորագոյն *a.* very necessary, – important, – pressing, urgent, of great or of the highest importance.

Կարեւորութիւն *s.* necessity; importance, urgency.

Կարթ, *ից s.* fish-hook, fishing line; line, rod; spur; hook, crook; nose-ring: shin-bone, tibia; – *ընկենուլ*, to throw a hook, to cast a line.

Կարթակոտոր առնել, **Կարթահարեմ**, *եցի va.* to hamstring, to hough, to cut the houghs of.

Կարթաձուկն *s. astr.* cancer.

Կարթեմ, *եցի va.* to fish with a hook or line, to angle; *fig.* to allure, to entice; to decoy, to inveigle; *vn.* to change one's direction, to turn out of one's way, to deviate, to swerve.

Կարթընկեց *s.* fisher with a hook or line, angler.

Կարթուսեանք *s.* Carthusian convent; *–եան a. s.* Carthusian monk.

Կարժ, *ի s.* skein; – *գործել*, to reel a –.

Կարժառ, *ի s.* reel; winder.

Կարի *ad.* very, much, very much; – *իմն, յոյժ, քաջ*, enough, sufficient; a great deal, too much, to excess, to distraction, to the utmost, beyond all measure, excessively, unboundedly, supremely; *եւ – քաջ, եւ – իսկ քաջ*, certainly, surely, to be sure, assuredly, undoubtedly; – *յոյժ ձանձրացուցիչ*, excessively annoying, tiresome beyond description; – *քաջ սիրել*, to love to distraction.

Կարիճ, *րճաց s.* scorpion; *ast.* –; *fig.* thorny cudgel or stick; *իւղ կարճի*, – oil.

Կարիտոս (Greek word) S. **Պինասպաս**.

Կարիք, *րեաց s.* passion, mental or bodily affection; grief, sorrow, affliction, torment, trouble; pain, illness;

cation, consecration, *sagra;* feast, festival, rejoicing; S. Խնդութիւն; առնել զ-իս շինուածոյ, to inaugurate a building; -իս առնել սեղանոյն, to dedicate or consecrate an altar; -կերութիւն S. Նաւագործութիւն; -կիկ *s.* small boat, skiff, cock-boat; -կից *a.* voyaging together; *s.* fellow-voyager; -կոծ *a.* shipwrecked; -լինել, or -կոծիմ *vn.* to suffer shipwreck, to be lost, to perish by shipwreck; -կոծութիւն *s.* shipwreck; -կուիւք, -կռուութիւն S. Նաւամարտութիւն; -կցիմ *vn.* to sail together; -հանգիստ *s.* port, haven, harbour, sea-port; *fig.* the port of salvation; S. Նաւակայք; ընդարձակ, ապահով, գեղեցիկ -, a spacious, safe, fine harbour or port; - գետոյ, wharf, quay; հրամանատար -գատից, harbour-master; դիւրամերձենալի -, port accessible at any time of the tide; դժուարամուտ -, harbour with a bar; մտանել, հասանել, իջանել ի -, to harbour; (նաւ) to sail into or enter harbour; (շոգենաւ) to steam into harbour; հասանել ողջամբ ի -, to get safe into port; to arrive safe; նաւաբեկ լինել ի -դրունտեան, to be wrecked in port; -հանգէս *s.* navy; -ձգումն *s.* towing, towage; -ձիգ *s.* tug-boat, tug, tow-boat; - շոգենաւու, steam-tug; - պարան, tow-rope; - լինել, to tow, to haul, to drag along; -ղօղակ, աց *a.* sea-faring; *s.* navigator, voyager; -մակոյկ *s.* yawl, pinnace; -մատոյց *s.* ladder; landing-place; -մարտ, -մարտիկ *a.* fighting at sea; *s.* naval fight; - լինել, to fight a battle at sea; - տորմիղ նաւուց, fleet, army; -մարտութիւն *s.* naval engagement; mock sea-fight, naumachy; -մուտ *a.* embarked; *s.* S. Նաւավար; - լինել, to embark; -շինութիւն S. Նաւագործութիւն; -շու *s.* way, passage, ferry; *a.* S. Նաւադնաց; -պետ *s.* captain, commander; -պետեմ, եցի *va.* to command, to steer or guide a vessel; to pilot; -պետութիւն *s.* command, steering, working, piloting a vessel; -ռաջք *s.* stem, prow, head.

Նաւասարդ, ի *s.* the first month of the ancient Armenian calendar, (August).

Նաւաստ, ի. -ի, ուոյ, տեաց *s.* sailor, seaman, mariner, sea-faring man, tar, jack-tar; -ք, seamen, sea-faring people, crew; -եմ *va.* to steer a ship; -ութիւն *s.* profession of a sailor; seamanship; steering of a ship; piloting; navigation.

Նաւավար, աց *s.* navigator; S. Նաւուղիղ; seaman, boatman, gondolier, rower; -եմ, &c. S. Նաւապետեմ, &c.

Նաւատիանոս, աց *a. s.* Novatian.

Նաւատորմ, ի, -իղ or իղ *s.* squadron, fleet; -իկ *s.* flotilla.

Նաւարան *s.* arsenal; dock-yard.

Նաւարար, &c. S. Նաւագործ, &c.

Նաւարկելի *a.* navigable; -կեմ, եցի *vn.* to sail, to navigate, to go to sea; S. Հողմ; -կող S. Նաւորդ; -կութիւն *s.* navigation, voyage at sea, passage.

Նաւացռուկ *s.* rostrum, beak-head, cut-water, knee of the head; -փայտ *s.* ship: forest-tree; S. Լաստենի; -քարշ, &c. S. Նաւաձիգ, &c.

Նաւեկացոց S. Նաւաստ; արգիականք, the Argonauts. [to go to sea.

Նաւեմ, եցի *vn.* to sail, to navigate,

Նաւթ, ից *s.* naphtha; -իտ *s.* -line.

Նաւթճեմ S. Նօթճեմ.

Նաւինեար, ներոյ *s. pl.* boats.

Նաւորդ, աց *s.* navigator; passenger; S. Նաւաստ; -ք Արգեայ, the Argonauts.

Նաւուղիղ, ղղի, -ղղակ *s.* helmsman, steersman; pilot; -ղղութիւն *s.* S. Նաւապետութիւն; navigation; art of sailing, histiodromia; գիրք -թէ, treatise on Navigation.

Նաւվարձեմ *va.* to freight, to charter; -ձութիւն *s.* freighting, chartering.

Նափորտ, ի, ամբ. ունք *s.* cloak, mantle; monk's long mantle; cope, chasuble; -անի *s. pl.* copes; -ապատ *a.* wearing a cope; -իկ *s.* small mantle, mantelet; dalmatic.

Նաքարակիտ, կտի *s.* a farthing, two mites, fourth part of a penny.

Նգաբեկեմ, Նգախարխար առնեմ, Նգեմ, եցի *va.* to demolish with levers or crow-bars, to dismantle, to throw down, to raze; -հար *a.* driving in a

Նգոյր *s.* three-legged table. [stake.

Նգոտիմ, տեալ *vn.* to grow mouldy, to get spoiled.

Նեարդ, ներգից *s.* fibre, string; ligament; tendon, sinew; -իտ *s.* fibrine; -ապատ *a.* fibrous, stringy, muscular, brawny; ligamentous; tendinous, sinewy; -ատեսակ *a.* cartilaginous.

Նեխ, ոյ *s.* putrefaction, rottenness, putrescence, corruption; infection, bad smell, stench, stink, fetidness;

chem. brome; *a.* corrupt, spoiled, putrid, stinking; *հոտութիւն –*, foul smell; *– անկաւ ի մարմինն*, it has began to putrefy.

Նեխական *a.* corruptible; S. **Նեխ** *a.*; *–հալած* *a.* antimephitic; *–հոտ* *a.* stinking, infected, putrescent, rotten, corrupt; *–հոտութի* *s.* infection, bad smell; *–շաղիղ* *a.* putrified, stinking, fetid; *–վայրք* *s.* fetid or stinking places.

Նեխեմ, եցի *va.* to putrefy, to corrupt, to rot; *–իմ* *vn.* to become putrid, to be corrupted, spoiled, rotten, [stinking.

Նեխուած *s.* corrupt sores.

Նեխութիւն, *–ումն* S. **Նեխ** *s.*

Նեխուր, *ի* *s.* apium, ache, wild celery, smallage. [or –owner.

Նեկաթ *s. Hebrew w.* sheep-master

Նեկտար, *ի* *s.* nectar.

Նեղ *a.* narrow, strait, close; *s.* narrowness, straitnes; *fig.* anxiety, grief, distress; *–ք*, strait; defile; *ի – արկանել, հասուցանել*, to reduce to distress or to straits, to constrain, to oblige, to compel, to force; to press, to urge, to embarrass; *ի – մտանել, անկանել*, to be pinched for means, to be in straitened circumstances, to be reduced to straits, to the last extremity, to be embarrassed, distressed.

Նեղաբերան *a.* narrow-mouthed; *–գարշապար* *a.* narrow-heeled; *–լանջ* *a.* narrow-breasted; *–ծերպ* *a.* creviced; *–հարութի* *s.* pain or uneasiness caused by constraint; *–հաւատ* *a.* doubting, hesitating, of little faith; *–նամ, ացայ* *vn.* S. **Նեղարարիմ**; to be narrowed; *fig.* to become impoverished, to be reduced to misery; *–պատիմ*, &c. S. **Նեղարարիմ**. &c.; *–պէս* *ad.* narrowly, straitly, hardly; sparingly; *–սաստ*, *–սիրտ* *a.* impatient, touchy, crabbed, peevish, surly, surly-humoured, choleric, morose, irascible, passionate, hasty; *–սրտիմ, ութեցայ* *vn.* to be impatient, fretful, to fidget, to lose patience, to be vexed; to be ill-tempered, cross, angry, irritated, exasperated; *–սրտութի* *s.* impatience, ill-temper, intolerance, vexation, irritation, exasperation, bursts or fits of passion or rage.

Նեղացուցանեմ *va.* to worry, to afflict, to torment, to vex.

Նեղափողոց S. **Նրբափողոց**.

Նեղեմ, եցի *va.* to narrow, to make narrow, to contract, to straiten, to restrain, to tie down, to press, to constrain; to give trouble, to disquiet, to incommode, to inconvenience, to importune, to annoy, to trouble, to torment, to harass, to infest, to plague, to molest, to maltreat, to oppress; *– զոք ամբոխին*, to crowd, to oppress, to press, to squeeze; *ժողովուրդքն նեղէին զնա*, he was oppressed by the throng; *էշն նեղեաց զինքն ը որմն*, the ass thrust herself unto the wall.

Նեղիմ, եցայ *vn.* to be put to straits, to be constrained or necessitated; to be uneasy, disquieted, afflicted, troubled, tormented, vexed, molested; *– եւ մտել ի սեղան*, to be intruded upon or thrust in; to meddle with, to interpose.

Նեղիչ *a.* afflicting, troubling; molesting, oppressing, persecuting; distressing; vexatious, disquieting.

Նեղութիւն *s.* want of width or amplitude, narrowness, straitness; care, trouble, tribulation, grief, sorrow, affliction, inquietude, displeasure; fatigue, weariness; importunity, incommodiousness, annoyance, tedium; torment, worry, vexation, oppression.

Նեղումն S. **Նեղեմ, իմ.** [mus; pass.

Նեղուց, *ի* *s.* straits, channel; isth-

Նեղսիրտ, &c. S. **Նեղասիրտ**, &c.

Նեմէ, *ի*, *ուղ.* *մեայք* *s.* Nemæan-games; *–ական* *a.* Nemæan.

Նենգ, *ի*, *աւ* or *իւ* *s.* fraud, artifice, stratagem, wile, craft, guile, cunning; *a.* S. **Նենգաւոր**; *–աւ*, *–իւ*, *–ով* *ad.* with fraud, fraudulently, artfully, insidiously, maliciously, treacherously, knavishly; *– գործել*, to machinate, devise, hatch or frame a plot; *– կրել յումեքէ*, to be betrayed, defrauded, cheated.

Նենգաբանութիւն *s.* fallacy, falsehood, deceit; *–բար* S. **Նենգաւ** *ad.*; *–բարոյ*, *–գործ*, *–մէտ* or *մտ* S. **Նենգաւոր**; *–խոհ* *a.* fraudulent, malicious, sly, guileful, cunning, crafty; *–խողխող* *a.* killing by surprise or treachery, guileful, assassinating; *–խօսութիւն* *s.* double-dealing; crafty speech, honied or delusive words, deceitful discourse; *–միտ* S. **Նենգախոհ**.

Նենգան, *աց* S. **Նենգ** *s.*; *–աւ*, *–օք* S. **Նենգաւ**. [deceitful.

Նենգապատիր *a.* insidious, artful,

Նենգաւոր *a.* fraudulent, cunning, wily, sly, insidious; gloomy, sullen, saturnine; treacherous, disloyal, perfidious, felonious; roguish, swindling; *-եմ*, &c. S. *Նենգեմ*, &c.

Նենգեմ, *եցի va.* to defraud, to deceive, to cheat, to dupe, to cozen, to trick, to gull, to swindle; to circumvent; to betray; *-իմ vn.* to be deceived, betrayed, &c.; *- ի տեսութէ*, to lose the sight, to become blind.

Նենգիչ *a.* knavish, roguish, cheating, crafty; falsifying, forging; stealing.

Նենգութիւն *s.* fraud, trick, artifice, craftiness, slyness, cheating; duplicity, deception, trickery, knavery; disloyalty, perfidy, felony, treason; swindling, roguery. [wood-louse.

Նեպակ, *Նեպուկ*, *աց s.* milliped,

Նեռն, *ռին*, *ռինք s.* antichrist.

Նեսար, *ի*, *աւ s. Hebrew w.* neessarian; *նեղեալ -աւ*, energumenous, demoniacal. [*s.* nestorianism.

Նեստորական *a. s.* Nestorian; *-ութ*

Նետ, *ից s.* arrow, bolt, shaft, dart; *- օձ*, dart-snake, acontias, jaculum; *- տու ի յԱյ*, thunder; *-ս արձակել*, to shoot an arrow, to discharge or let fly arrows.

Նետաթափ S. *Նետաձիգ*; *-լից առնեմ va.* to pierce with many arrows; *-կալ*, *աց s.* balista; arbalet, crossbow; catapult; *-հար a.* shot, pierced or wounded with an arrow; *-ձգող s.* archer, bowman; *-ձգութ s.* shooting, letting fly an arrow; *-ձիգ a.* drawing a bow; serving to launch an arrow; *s.* S. *Նետընկէց*; *- առնել*, *լինել*, to shoot, to let fly an arrow, to draw a [bow.

Նետեմ S. *Ձգեմ*.

Նետընկէց *s.* bow-shot.

Նետող S. *Նետաձգող*; *ազգ -աց*, Scythians, Sarmatians.

Ներ, *ի*, *ոյ s.* sister-in-law; *-*, *ք s.* period or cycle of six hundred years, or 600 months; *-*, *pr.* in, into; within; *ի - անձինդ*, in thyself; *- արհեստին*, skilled in art.

Ներածական *a.* introductory; *-ծեմ va.* to introduce; *-ծու*, *ի s.* introducer; *-ծութ s.* introduction; *-կրթեմ va.* to instruct well; *-միտ a.* endowed with intellect, reasonable, rational; *-մնեայ a.* monthly; *-մտեմ vn.* to enter, to introduce oneself; *-նիւթեմ va.* to infer, to deduce.

Ներանձն, *-ական* S. *Ներանձնաւոր*; *-նամ vn.* to withdraw or seclude oneself from the world, to give oneself up to a spiritual life; *-ացեալ*, *-աւոր a.* living retired, solitary, secluded; devoted, spiritual; contemplative; *-ութ s.* solitude, secluded, contemplative or ascetic life; contemplation.

Ներբան *s.* sole of the foot; *- կօշկաց*, sole; *- գուլպայից*, foot; *-ափոկ s.* trowser-strap. [or *ումն s.* importation.

Ներբերեմ *va.* to import; *-բերութ*

Ներբող, *ից s.* eulogy, praise, encomium, panegyric.

Ներբողաբան S. *Ներբողիչ*; *-եմ* S. *Ներբողեմ*; *-ութ* S. *Ներբող*.

Ներբողական *a.* laudative; panegyrical, eulogistic. [panegyrics.

Ներբողանք *s. pl.* praises, eulogies,

Ներբողեան, *ենի* S. *Ներբող*.

Ներբողեմ, *եցի va.* to make the panegyric, the eulogy of; to give praises, to laud, to eulogize, to praise, to exalt.

Ներբողիչ *s.* panegyrist, eulogist.

Ներբուն *s.* trunk.

Ներգեւ, *ից a.* slim, slender, lean, thin, weak; languid, faint; *gr.* tribrachys; *-իմ*, *եցայ vn.* to become weak, lean, faint, to grow languid.

Ներգիւն *s. bot.* lotus; lotus plant.

Ներգոյ, *ից a.* internal, interior, inward; innate, natural; *-ական a.* commorative; *- հոլով*, *-* case.

Ներգործաբար *ad.* actively; *-ծական a.* active; *- բայ*, active verb; *- քուէ*, active voice; *- շնորհք*, effective grace; *-ծակից a.* co-operative; *-ծեմ va.* to do, to act, to operate, to influence; *-ծութ s.* activity, energy, force, virtue; influence, operation; act, deed, work; *- հաւատոյ*, act of faith; *-ծօրէն ad.* effectively, in effect.

Ներդաշնակ *a.* harmonious; *s.* harmonica; *- ձայն*, harmonic sound; *-ապէս ad.* harmonically, harmoniously; *-աւոր a.* harmonious, harmonic, tuneful, cadenced, concerted; *-ութ s.* harmony, accord; symphony; concert.

Ներդեայ *a.* made of fibres or nerves.

Ներեայք *s.* Nereids, sea-nymphs.

Ներելի *a.* pardonable, excusable, remissible; *- մեղք*, venial sin.

Ներեմ, *եցի va.* to grant pardon for a fault, to pardon, to excuse, to forgive, to be indulgent; to permit, to allow; to tolerate, to endure, to suffer,

to support; *ներեցէք*. I beg pardon; pardon me; *զայս ասեմ ներելով*. I speak this by permission.

Ներընդունակ *a.* contingent, casual; *-ութիւն s.* contingence, casualty.

Ներխորհուրդ *s.* arcane, secret or hidden sense or meaning.

Ներծովային *a.* marine.

Ներկ, *ոյ s.* tint, dye, colour; *- կօշկաց*, shoe-blacking.

Ներկագործ *s.* dyer. [*a.* dyed, colored.

Ներկած, *ոյ s.* spot, stain; - or *-ոյ*

Ներկական *a.* serving to dye.

Ներկայ, *ից a.* present, actual; *gr. a. s.* present; *-անամ, ացայ vn.* to present oneself; *-այուցանեմ va.* to present; *-ութիւն s.* presence.

Ներկանեմ, *կի va.* to dye, to colour, to tinge; *- ի կարմիր*, to give a red dye to, to dye red.

Ներկանիւթ *s.* colour, colouring matter; *-տուն s.* dye-house; *-տուփ s.* colour- or paint-box; *-րար s.* dyer; *-րարութիւն s.* dyeing; dye-works.

Ներկեմ, *եցի va.* S. Ներկանեմ; *տալ ի ներկել*. to give out to be dyed.

Ներկես S. Նարկս.

Ներկիչ *s.* dyer.

Ներկոց *s.* dye-house. [spot.

Ներկուած, *ոյ s.* dye, colour; stain,

Ներկուռ *a.* S. Խիտ *a.*; well instructed, very erudite, learned, clever, imbued with science.

Ներհակ S. Հակառակ; *-ակիր a.* contrary, incompatible; antipathetical; *- բնութիւն*, incompatibility; *-հական*, *-ութիւն* S. Հակառակ, *-ութիւն*; *-ութիւն գունոց*, contrast of colours.

Ներհմտութիւն S. Հմտութիւն.

Ներհոսաչափ *s.* eudosmometer; *-հոսումն s.* eudosmose.

Ներհուն S. Ներկուռ.

Ներմարդանամ S. Մարդանամ.

Ներմարդկութիւն, *-դութիւն*, *-մարմնութիւն s.* incarnation.

Ներմեղական *a.* stained with sin.

Ներշնչական *a.* spiritual; *-չիմ, եցայ vn.* to be inspired, transported; *-չումն s.* inspiration, transport.

Ներշրջական or *ջանական a.* encyclopedical; *-ջանակք s.* encyclopedia.

Ներող *a.* indulgent, condescending, forbearing, merciful, clement; *- լինել*, to be indulgent.

Ներողակրօն *a.* tolerant; *- միաք*, *խորհուրդ* or *-ութիւն s.* toleration.

Ներողամիտ S. Ներող; *- քաղցրութբ*, with the greatest kindness; *-մտութ s.* indulgence, condescension, clemency.

Ներողութիւն *s.* indulgence; pardon, remission, mercy, pity; *-թեամբ ad.* indulgently.

Ներութիւն, *-ումն s.* pardon; *- խնդրել*, to beg pardon or forgiveness, to apologize. [Ներքս.

Ներս, *ի - ad.* in, within, inside; S.

Ներվարժական *a.* instructive; *-ժութիւն* or *ումն s.* instruction, erudition, [discipline.

Ներտ, *ից* S. Նարդ.

Ներտատուական *a.* corporeal, material.

Ներտրամադրական, or *դրեալ a.* inward, innate, inborn; *- բան*, idea, thought, conceit; *-դրութիւն s.* natural disposition; conception, thought.

Ներտրամախոհական *a.* fictitious; *-խոհութիւն s.* meditation, thought.

Ներփակեալ *a.* enclosed within; *- նամակս*, the enclosed letter.

Ներքանոց *s.* any piece of furniture used as a couch, bedding.

Ներքեւ *pr.* under, below.

Ներքին, *քնոց a.* interior, internal, inner; intestine; intrinsic; intimate, cordial; underground, subterranean; *- անկիւն*, internal angle. [eunuch.

Ներքինանամ, *ացայ vn.* to become

Ներքինապետ *s.* chief of the eunuchs, S. Մարդապետ. [to geld, to castrate.

Ներքինացուցանեմ *va.* to eunuchate,

Ներքինի. *նւոյ*, *նեաց s.* eunuch; *ձայն -նւոյ*, shrill voice; *- առնել*, *-ս խզել* S. Ներքինացուցանել; *անմօրուս են -*, eunuchs have no beard.

Ներքնաբաժին *s.* subdivision; *- առնել*, to subdivide; *-բերդ s.* citadel; *-գիր s.* inscription; *-գունդ s.* troops of men, terrestrial or mortal hosts; *-գրոշմ a.* marked inside, inscribed; *-խաղ s. mus.* an Armenian note (՝); *-լողակ* or *լուղակ s.* diver; *-խարիսխ s.* pedestal, stand.

Ներքնակ, *աց s.* under-coat, - waistcoat; shirt-front; *- կանանց*, chemisette, habit-shirt, under-petticoat.

Ներքնական *a.* inferior, interior; *-կողմն s.* the interior part; *-յարկ s.* mezzanine, entresol; *-տուն s.* ground-floor; cellar.

Ներքնուղի S. Ստորուղի.

Ներքոյ *a.* under, nether, lower; -, *ի - pr. ad.* under, below, beneath; in, within, through, inwardly, inside;

ի – արկանել. to subdue; ի – կացեալ, անկեալ. subject, submissive, dependent; պատել ի –, to line, to cover on the inside; –ք s. the inside, interior.

Ներքոյաբնակք s. antipodes.

Ներքուստ, ի – ad. internally, inwardly; below, beneath; inside, within, inwardly; from beneath, from below.

Ներքս, ի – ad. in, into, inside; մըտանել ի –, to go in, to enter; ընկալաւ զնա ի –, he took him in, he received him; եդաք ի – ի սենեակն, we placed it in the room.

Ներքսագոյն a. interior, internal, innermost; –դրեմ va. to imprint, to impress; –դրական a. intercalary; –դրութիւն s. intercalation; –ծութիւն s. introduction; –կողմն s. interior, the inside part; –մուտ առնեմ va. to cause to enter, to introduce, to bring in.

Նեցուկ, ցկի s. stay, staff, prop; sustainer, support, upholder, buttress; –ս արկանել, to prop, to stay, to support; – ամրութեան լինել ումեք, to be a support of, to uphold, to sustain, to protect; – կալ հաւատոց, to support religion, to be a supporter of religion; S. Յենարան.

Նզար a. weak, slender, slim, thin.

Նզովք, ից s. anathema, excommunication, malediction, curse; imprecation, execration; լինել ի –ս, to become anathema, to be a subject of execration; առնել զոք ի –ս, տալ զոք ի –ս, to subject a person to execration; ը –իւք կապիլ or անկանիլ, to be excommunicated or execrated; –ս արձակել, –ս ի վերայ կարդալ, to anathematize, to curse; –ս ի հետ արկանել or զկնի արձակել, to load with cursing, to curse, to execrate, to imprecate; to excommunicate.

Նզովեալ, ոյ s. anathema; a. excommunicated. [– ad. –cally.

Նզովական a. anathematical; իբրեւ

Նզովանք S. Նզովք.

Նզովեմ, եցի va. to anathematize, to excommunicate; to curse, to condemn; to execrate, to imprecate; –իմ vn. to be excommunicated, anathematized; եղիցի նզովեալ, let him be anathema.

Նէ, նեքա, զնէ pron. f. she, her.

Նէեղասս, աց s. H. w. neelassa; pea-

Նէեսս s. H. w. nessa; ostrich. [cock.

Նժար, ից s. balance-scale.

Նժդեհ, –ական, &c. S. Պանդուխտ, Պանդխտական, &c.

Նժոյգ, ուգից s. fresh horse, relay, led-horse; prancer; courser; –աձիգ s. groom; –աւոր a. mounted on a courser, horseman, cavalier.

Նիազ a. poor, necessitous, indigent; մեզ ոչինչ – եր ի ձէնջ, we had no need of you; –եցուցանեմ va. to macerate, to mortify; –ութիւն s. want, necessity, indigence.

Նիգ. նգաց s. bolt, lock, padlock; lever, bar; traverse, cross piece of timber; trabs, trabeculæ (a meteor); – փայտեղէն, mortar; փակել նգօք, to bar, to bolt, to fasten with a padlock.

Նիզակ, աց s. lance, spear; pelta, clypheus; հարուած –ի, spear or lance-thrust; ի տէգ –ի վառեալ, armed with a lance, pikeman; անտառախիտ –ք, a forest of spears; սատակել –աւ գերանդւոյ, to slay with scythes.

Նիզակաբեկորք or բեկք s. broken spears; –բուն s. spear-staff or -shaft; –խուռն a. bristling with spears; –զօրք, company of pikemen; –կից s. fellow-soldier, comrade; ally, confederate; a. allied, leagued, confederate; –կուր առնեմ va. to subjugate with lance & spear; –կցիմ vn. to fight together; to be allied, leagued, to form a coalition with, to enter into an alliance, to league together; to help, to succour, to aid; –կցութի s. alliance, league, confederacy, coalition, confederation; –ձեւ a. lance or spear-shaped; –ձօձ a. ad. poising a javelin or brandishing a spear; –մուխ s. javelin-man; –տէգ s. the dart or the head of a lance; –ւոր s. lancer, pikeman, halberdier; – աստղ, lance-shaped meteor; –փակ a. surrounded or hemmed in by pikemen.

Նիզակընկեց լինիմ vn. to throw down one's arms & desert, to abandon one's post, to flee.

Նիզակիկ s. javelin, dart, short lance.

Նիկիադաւան a. holding or professing the doctrine of the council of Nice.

Նիկիական a. Nicean.

Նիկողայեցիք, –յեաց s. Nicolaitans.

Նիհ, Նեհ s. list of prices, tax, rate, tariff.

Նիհար, աց a. thin, lean, meagre, gaunt, spare, skinny, scraggy; –անամ, ացայ vn. to grow lean or spare, to

become thin, to fall away; *-ացուցանեմ va.* to make thin or lean, to emaciate, to extenuate, to weaken, to attenuate; *-ութիւն s.* leanness, thinness, emaciation, extenuation.

Նինուէաբար *ad.* like the Ninevites.

Նինջ *s.* slumber, sleep, repose; *մի տար — արտեւանաց քոց*, give not slumber to thine eyelids.

Նիշ *s.* sign, mark; spot, speckle; *geom.* point; *այս —, այն —*, such a one, such; so & so; *յայս — աւուր*, in such a day. [brews, Nisan, (March).

Նիսան *s.* the first month of the He-

Նիստ, նստի *s.* sitting posture; position, situation; seat, residence, abode; property, possession; sitting, session, meeting; *— թագաւորական*, seat of Government, capital city; *— բանակի*, encampment; *ի — լինել*, to sit up, to sit down, to be seated; *ի — ննջել*, to sleep in a sitting posture; *— առնուլ*, to be tranquillized, allayed, lulled into security; *ի — գումարիլ*, to hold a sitting; *ի նստի անդ*, during the sitting, forthwith, before separating; *երեք նստիւ նկարել զկենդանագիր*, to paint a portrait in three sittings.

Նիտամ, ացի *va.* to invent, to contrive, to frame, to hatch, to plot.

Նիրհ *s.* light sleep, drowsiness, sleepiness, dozing; *— առնուլ, — անկանել ումեք* or *-եմ, եցի vn.* to fall into a doze, to begin to nod, to doze, to nap, to be drowsy, to drop off to sleep, to take a nap or snooze; *— ի քուն թանձրութէ*, to fall fast asleep or into a sound sleep, to be fallen into a deep sleep; *նիրհեալ ջրհորք*, waterless or dried wells; *—* or *-եցուցանեմ va.* to render drowsy or sleepy, to send to sleep; *— յօրօրանի*, to lull or rock to [sleep.

Նիրհումն S. **Նիրհ**.

Նիւ *s. bot.* wild-turnip.

Նիւթ, ոց *s.* matter, body; element; substance; subject, matter; cause, reason, grounds; *-ք*, materials; *— հրոյ*, matchs, incentive, tinder; *— ցրիւ*, diffuse matter; *— եւ տեսակ*, form & matter; *խօսեսցուք զայսր -ոյ*, let us discourse on this subject.

Նիւթագործեմ *va.* to spin.

Նիւթական *a.* material; *-ութիւն s.* materiality; *-հաւատք a.* avaricious, grasping; *-պաշտ, ից s.* idolater; materialist; *-պաշտութիւն s.* idolatry; materialism; *-պէս ad.* materially. [ed.

Նիւթարկումն *s.* the subject propos-

Նիւթացուցանեմ *va.* to give a material form or existence, to create, to produce, &c.

Նիւթաւոր *a.* material; liquid, fluid; *fig.* worldly-minded; *-իմ vn.* to be formed, to be composed of matter, to exist, to be.

Նիւթեղէն *a.* material, corporeal; *-ղինապէս ad.* materially; sensually; *-ղինութիւն s.* materiality; sensuality.

Նիւթեմ, եցի *va.* to spin, to twist; to weave, to plait; to prepare, to form, to project, to design; to cause, to produce, to excite; to contrive, to machinate, to plot; *— զնենգութիւն*, to weave plots or snares, to conspire, to plot, to lay snares; *դաւ —*, to frame or plot a treacherous design, to hatch treason; *կործանումն —*, to ruin, to cause the ruin of; *չարիս — ումեք*, to meditate evil against a person, the ruin of; *— խորհուրդս չարութեան*, to meditate gloomy, foul or heinous thoughts; *— անձին չարիս* or *զկորուստ*, to contrive one's own ruin; *— նիւթ*, to accumulate; *— զգործն*, to undertake, to execute, to put into execution; *լրբենի ախտ նր մահ նիւթեաց նմա*, his infamous passion cost him his life.

Նիւթիչ *a.* spinning; weaving.

Նիւթծուն S. **Թրծուն**.

Նիւթութիւն *s.* materiality; *-ումն s.* machination, plot.

Նիւս S. **Նուս** or **Նուք**.

Նխոթեմ, թի *va.* to push with force, to drive or thrust in, to fix. [loaf.

Նկան, աց *s.* hearth- or griddle-cake;

Նկանակ, աց *s.* roll, manchet; *քանի — հաց ունիք*, how many loaves have you?

Նկատ *s.* human respect; *— լինել* or *-եմ, եցի vn.* to see, to look at, to regard, to observe, to examine, to consider, to contemplate, to reflect, to ponder on; to show or pay regard to; *-իչ a.* regarding, observing, contemplating; *-ութիւն, -ումն s.* observation, contemplation; regard, consideration.

Նկար, ուց *s.* painting, picture; image, figure, effigy; embroidery or needlework of divers colours; lively description; *ի -ու հանել*, to paint, to take or draw a portrait; to describe; S. **Թատրոնական**, **Մաւրիտանական**, &c.

Նկարագեղ *a.* picturesque; -գիծ *s.* painter; -գիր, գրաց *s.* description; picture, painting; representation, likeness, portrait; delineation, design, plan, model, form; style; text; S. Նկարագիծ; *a.* painted; described; պատկերակերպ —, portrait, likeness; — բնութե, the picture of nature; ըստ -գրին, literally; մեկնել ըստ -գրին, to explain literally; -գործ *a.* variegated; -գրական *a.* representative; descriptive; picturesque; characteristic; literal; — իմաստիւք, literally; -գրեմ *va.* to paint, to represent; to pourtray, to depict, to paint, to describe, to give a description of; to characterize; -գրութի *s.* painting, representation, portrait, image, figure, delineation, sketch; description; *rhet.* hypotyposis, imagery.

Նկարագէմ *a.* painted; -գրոշմ *s.* character, letter; -կերպ *a.* painted, diversified with colours, variegated, checkered; embroidered; *s.* painting, image; -կերտ, աց or ից *s.* embroiderer; painter; *a.* of divers colours; figured; embroidered; -կերտեմ *va.* to paint; to embroider; -կերտութիւն *s.* painting; embroidery; -պաճոյճ *a.* painted, adorned with paintings; — տախտակ, picture, painting; -պատկեր *s.* image, portrait, effigy; -տիպ *s.* literal history; text; -ցոյց *a.* representing a picture or image.

Նկարեմ, եցի *va.* to paint; to represent, to figure, to form; to depict, to describe, to write; — ի միտս, to imagine, to fancy, to picture to oneself; — ի գրի, to write, to describe.

Նկարէն *a.* painted, coloured, variegated, varied with many colours; embellished with imagery; — պաստառք չնդկաց, printed calico, chintz, cotton.

Նկարիչ *s.* painter; կենդանագիր —, portrait painter; կին —, paintress.

Նկարուն S. Նկարէն.

Նկարչական *a.* picturesque; -չութի *s.* painting; — իւղաթուրմ, oil-painting; — ջրաղանկ, water-colour painting.

Նկնախոհ *a.* mean-spirited, low-minded; -հասակ *a.* low-sized, short, little; -ձեւ *a.* mean in appearance, low, poor.

Նկնութիւն *s.* meanness, baseness, lowness, smallness, shabbiness.

Նկուղ, ից *s.* hollow, ditch, cave, cavern, grotto.

Նկուն *a.* vanquished, conquered, humbled, lowered, abased, depressed; base, abject, vile, low, contemptible, mean, poor, little, ignoble; — առնել, to conquer, to subdue, to bear or break down, to humble, to depress, to abase, to weaken, to harass, to mortify, to humiliate; — լինել, to be conquered, overcome, humbled, abased, worsted, to succumb, to yield to.

Նկրտեմ, եցի *va.* to push on, to induce, to incite; to promote, to advance.

Նկրտիմ, եցայ *vn.* to endeavour, to exert oneself, to take pains, to make great efforts, to strive hard, to do one's best.

Նկրտումն *s.* advancement, progress; effort, study, diligence.

Նհանգ, աց *s.* alligator, cayman.

Նմա *pron.* to him or her.

Նման, ից *a.* like, similar, resembling, approaching; equal, conformable, analogous; *ad.* similarly, in the same manner, alike, such; — է *v. imp.* it suits, it is proper, fit or becoming; it seems, it appears; ամենեւին — է նմա, he is as like him as can be; — զ-ն սիրէ, like loves like.

Նմանաբանութի *s.* imitating a person's voice or speech, mimicry; -բար *ad.* likewise, equally, in the same manner; -բերեմ *va.* to figure, to represent; -բոյժ *s.a.* homœopathist; — բժիշկ, homœopathic doctor; -բուժական *a.* homœopathic; — դեղ, — medicine; -բուժութի *s.* homœopathy; -գոյն S. Նման *a.* & *ad.*; -գործ *a.* counterfeited; *s.* counterfeiter; -գործեմ *va.* to counterfeit; -գործութի *s.* counterfeiting; forgery; -գրեմ *va.* to write a similar hand; to fac-simile; -գրութի *s.* fac-simile; -խօս *a.* imitating the human voice.

Նմանակ *a.* like.

Նմանական *a.* imitative; mimic; -ն *s.* mimicry; -կերպ *a.* uniform, conformable or resembling; -կերպիմ *vn.* to conform to, to become like, to resemble; -կերպութի *s.* similarity, conformity, uniformity, resemblance, analogy; -կի *ad.* likewise; -կիր *a.* subject to the same feeling or passions; -կից *a.* S. Նման; imitating, following; -ակցութի *s.* conformity; imitation; -հան *a.* pourtraying faithfully; traced, counterdrawn; -հանեմ *va.* to trace, to counterdraw; -հանութիւն *s.* tracing, counterdrawing; -հաւասար *ad.* like,

similarly, equally; *-հիւթ* *a.* formed of the same material; *-ձոյլ* *a.* stereotyped; *s.* stereotype; stereotype-plate; *-ձուլեմ* *va.* to stereotype; *-ձուլիչ* *s.* stereotyper; *-ձուլութիւն* *s.* stereotyping; *-մասն* *a.* composed of similar or equal parts; *-ձայն* *a. gr.* consonant; *-ձայնութիւն* *s.* consonance, harmony, concord; *-պէս* *ad.* likewise, in like manner, in the same manner, conformably, equally, analogically; *-սեռ* *a.* of the same gender; *-սեր* *a.* of the same kind, family or species; *-վիշտ* *a.* subject to the same afflictions or pains; *-տառութիւն* *s.* alliteration; *-տիպ* S. Նմանակերպ; *-ցեղ* S. Նմանասեր.

Նմանելի *a.* imitable.

Նմանեմ, *եցի*, *-եցուցանեմ* *va.* to render like, to assimilate, to conform, to equalize, to liken; to imitate, to counterfeit. [image, statue.

Նմանի S. Նման *a.*; *-ք* *s.* likeness,

Նմանիմ, *եցի*, *-նիմ*, *եցայ* *vn.* to be alike, similar, to resemble, to approach, to be equal with; to imitate, to follow, to tread in the steps of; *նմանեալ մարդկան*, in the human form; *նմանի* *v. imp.* it suits; it is very probable; *- եթէ*, it seems, it appears.

Նմանող, *-ակից* *s.* imitator; *- լինել*, to imitate, to follow, to endeavour, to resemble; to copy, to ape, to mimic; *-ութիւն* *s.* imitation; mimicry.

Նմանորդ, *աց* S. Նմանող.

Նմանութիւն *s.* similarity, resemblance, conformity, analogy; assimilation; comparison; uniformity, equality; imitation; likeness, image, effigy; figure, type, form: parable, example; *ըստ -թէ*, *ի -*, in imitation of, after the fashion of; *ըստ նմին -թէ*, in like manner, likewise; S. Բերեմ.

Նմանունակ, **Նմանացօրէն**, **Նմանօրէն** *ad.* likewise, equally; like, same, conformable.

Նմանօրինակ S. Նոյնօրինակ.

Նմին աղագաւ, **Նմին իրի** *ad.* for which reason, therefore, wherefor, on that account; consequently.

Ննջարան *s.* dormitory, bed-room.

Ննջեմ, *եցի* *vn.* to sleep, to slumber, to lie down, to go to bed; to repose, to rest; *fig.* to die, to expire, to depart this life; *- ընդ կնոջ*, to lie with a woman; *- արտաքոյ*, to lie abroad, out of doors; *- բացօթեայ*, *ընդ սատեղօք*, to sleep in the open air, to lie under the canopy of heaven; *- աչօք բացօք*, to sleep like a hare; *- ի Տէր*, to go to sleep in Jesus, to rest in God; *- ի հող մահու*, to sleep the sleep that knows no waking; *- ընդ հարս իւր*, to sleep with one's fathers.

Ննջեցեալ *a.* sleeping; dead in God, deceased, defunct; S. Մեռեալ; *աղօթք վասն ննջեցելոց*, prayer for the dead; *պաշտօն -ցելոց*, requiem, obsequies; S. Պաշտօն.

Ննջեցուցանեմ *va.* to lull, to put to sleep, to lay down, to put to bed; *- զկին ընդ ի լանջս ուրուք*, to marry, to join in wedlock; *- զկոյս*, to deflower; *- զոք ի քուն յաւիտենից*, to slay, to kill.

Ննջիւն, **Ննջումն** *s.* sleep, repose, dormancy; decease, death, exit, transit; coition, copulation; *ի - խոնարհիլ* S. Նիրհեմ. [almond--oil.

Նշաձեւ *a.* almond-shaped; *-ձէթ* *s.*

*****Նշայ**, *ի* *s.* starch.

Նշան, *աց* *s.* sign, mark; sign, signal, character, symbol; trace, vestige; sign, proof, token; omen; miracle, prodigy, wonder; ensign, colours, flag, standard, banner; the Holy Cross; betrothal, affiancing; seal, mark; central point, centre; aim, butt; *geom.* point; *- կռուոյ*, arms; *- յաղթութեան*, trophy, triumph, victory; *-* or *-ս տալ*, to give a sign, to beckon; to signify, to indicate; to affiance; *- առնուլ*, to take aim at, to level at; *ոչ եւս տալ-կենաց*, to give no signs of life; *- անձրեւի է*, we shall have rain.

Նշանաբան *s.* watch-word, pass-word; *-ութիւն* *s.* signification; *-գիր*, *գրաց* or *գրոց* *s.* character, letter; register, archives; secretary; cipher; signature, paraph, flourish; *-ք*, alphabet; elements, rudiments; *-ք եգիպտականք*, hieroglyphs; *-գիւտ* *a.* noting down; *-գործ*, *աց* *a.* performing miracles, doing wonders; prodigious, marvellous; *s.* thaumaturgus, wonder-worker, miracle-monger; *-գործեմ* *va.* to work or perform miracles; *-գործութիւն* *s.* miracle, prodigy, sign; *-գրեմ* *va.* to characterize; to write, to compose; to note, to mark; to delineate; *-գրութիւն* *s.* character, letter; writing; note, annotation; *-գէտ* *s.* sign-observer, soothsayer, augur, aruspex; *-գիմակք* *s.* notable or important

events; *-գրոշմ* *s.* character, letter; *-գրոշմումն* *s.* making the sign of the cross; *-զգեաց* S. Նշանազգեստ; *-զգեստ* *s.* uniform, regimentals; *- սպասաւոր-րաց*, livery; *-լոյծ* *s.* diviner, astrologer, augur; *-խեց* *s.* iota, tittle; point; *-խնդիր* *a.* seeking signs or miracles.

Նշանակ, *աց* *s.* sign, mark; signal, indication, character, expression, proof; symbol; emblem; label, ticket; sign, miracle, prodigy; sceptre; sign-post; flag, colours, ensign; *- Հրոյ*, smoke; flame; *փողք -աց*, signal trumpet, bugle; *- դատապարտութե*, judgment, sentence, condemnation; *սբ -ք*, Sacred Elements; *- Հաւատոյ*, symbol or formula of faith, Creed; *-ք ախտից*, symptoms; *կանգնել յաղթութեան -*, to raise a trophy, a monument of victory.

Նշանակաբար *ad.* symbolically, allegorically, mystically.

Նշանականական, **Նշանական** *a.* significative, expressive; symbolic; characteristic.

Նշանակապ *a.* fringed.

Նշանակապէս, *-կաւ* S. Նշանակաբար.

Նշանակաւոր *a.* significative; symbolic; remarkable, worthy of note, notable.

Նշանակեմ, *եցի* *va.* to signify, to denote, to betoken, to indicate, to declare, to notify, to express, to distinguish; to signalize; to characterize; to note, to mark, to remark; to figure, to represent, to mean, to signify, to have the sense or a meaning of; to cross, to make the sign of the cross; *- զգիրս*, to quote; *- զվաճառս*, to ticket.

Նշանակերտ S. Հրաշակերտ; *-կիչ* *a.* significative; *-կիր* *s.* ensign, ensign- or standard-bearer; *-կութի* *s.* signification, interpretation, meaning, sense; *-տուր* *s.* commandant, chief; general; *-րձակ* *a.* hung with flags; *-ցեմ*, *ցի* *va.* to make signs, to beckon, to nod, to wink; to indicate, to point out; *-ցի* *ad.* by signs; *- խօսել*, to speak -; *- առնել ձեռամբ*, to point at, to signify by hand; *-ցոյց* *a.* shewing a sign, signal-giving; *s.* formula; *-ւոր* *a.* signed, marked with a sign; special, signal, famous, remarkable, notable; symbolic, mystical; ensign-bearing; *նաւ մի -աւ Դիոսկորացւոց*, a ship bearing the sign of Castor & Pollux.

Նշանեմ, *եցի* *va.* to put a sign or mark upon, to sign, to mark, to brand; to make a sign; to promise in marriage, to affiance, to betroth.

Նշաջուր *s.* almond-water; *-տերեւ* *a.* shaped like a almond-leaf.

Նշաւակ, *աց* *s.* mark, butt, aim, target; - or *առակ -ի* *fig.* spectacle, butt, object of derision, laughing-stock; *առակ -ի կացուցանել*, *յառակ -ի դնել*, to expose to the mockery or contempt of the people, to set up to public ridicule; *անձին -ի լինել*, to make a show of oneself, to make oneself ridiculous to every body; *-լինել*, *կալ*, *գտանիլ*, to become an object of opprobrium, to be a prey or victim to ignominy, to be exposed to dirision; *- կալ նշաւակութեանց*, to be exposed to the darts of reproach or rebuke; *եդին զիս - ի բերանս*, they regarded me with horror, or as an abomination; *եղիցին դիակունք - ը երեսս դաշտաց*, the carcasses shall lie as dung upon the open field; *- եղէ ես բազմաց*, I was as a wonder unto many; S. Առակ; *-ի նետաձգութե*, skilful in archery.

Նշաւակելի *a.* shameful, infamous.

Նշաւակեմ, *եցի* *va.* to confound, to put to shame, to expose to public censure or to the ridicule of every one, to ridicule, to cry down, to defame, to slander, to lampoon; to lead in triumph.

Նշաւակութիւն *s.* spectacle, laughing-stock; shame, ignominy, opprobrium; nickname, by-name: hardy deed.

Նշաւոր or *-ի կալ* S. Կալ.

Նշդարենի, *-րի* *s.bot.* yoke-elm, horn-beam.

Նշենի, **Նշի** *s.* almond-tree.

Նշիա *s.* *chem.* amygdalin.

Նշխար, *աց* *s.* bit, piece, particle, fragment; rest, residue; remains, mortal coil; consecrated bread, eulogia; *-ք սրբց*, relic; *տուփ -աց*, reliquary, shrine; *- պատարագի*, host, wafer; *- կնքոյ*, wafer; *- գործել* or *կազմել*, to make wafers; *-ք եւ Նշմարք Հայաստանի*, the antiquities of Armenia, (Picturesque Armenia).

Նշխարական *s.* host-box; *-տուն* *s.* place for making hosts or wafers.

Նշխարեմ, *եցի* *vna.* to remain over & above; to leave fragments; *-եալ* *a.* left, remained; *- ոսկերք սրբց*, relics; *- կեանք իմ*, my spark of life; the rest of my life.

Նշկահեմ, եցի *va.* to rise, to rise against, to revolt, to rebel, to mutiny, to rise in insurrection; to reject, to despise; – զոք, – ի ներքուստ ձեռին ուրուք, to shake off the yoke, to free or rid oneself from another's domination. [disdain.

Նշկահումն *s.* rebellion; contempt,

Նշմար, ի. –անք *s.* mark, trace, sign, vestige, indication; – գեղոյ, some remains of beauty.

Նշմարեմ, եցի *va.* to catch a glimpse of, to see imperfectly, to perceive, to discover, to examine, to observe, to regard; զերկիր –, to cast the eyes down, to look on the ground.

Նշմարեցուցանեմ *va.* to let see, regard or perceive.

Նշող S. Նշոյլ. Շող; –ազարդ S. Նշուլ–; –եմ, եցի *vna.* to glitter, to glisten, to shine, to sparkle, to flash.

Նշոյլ, ուլից *s.* light, shining; reflex, glimmer; – խնդութե, ray or beam of joy; աղօտ, մռայլ –, faint glimmer, dim light.

Նշուլազեղ, –զարդ, –փայլ *a.* shining, gleaming, radiant, brilliant.

Նշուլեմ S. Նշողեմ.

Նշուտ *a.* full of almonds; abounding in almond-trees.

Նշտր, տրոյ, ով. Նշտրակ, աց *s.* lancet; incision- or surgical-knife, bistoury; – պայտարայ, fleam.

Նշօշ *s. bot.* telegonus.

Նոխազ, ազ *s.* he-goat, goat; –ադէմ *a.* goat-faced; –ական թթուուտ *s. chem.* hircic acid; –եան *a.* goatish; *s. pl.* he-goats; –երգու. գութի S. Ողբերգակ, –գութի; –ին *s. chem.* hircine; –ոտն *a.* goat-footed.

Նողկ, –ալի or –տալի *a.* nauseous, loathsome, fulsome; disgusting, detestable; tiresome.

Նողկամ, ացայ, Նողկնում, Նողկտամ *vn.* to be disgusted, to loathe, to feel sick or inclined to vomit; to abhor, to detest, to turn from with disgust.

Նողկանք *s.* disgust, nausea, qualms, rising of the stomach; abomination.

Նողկացուցանեմ *va.* to disgust, to nauseate, to make loathe or sick of; to repugnate, to cause to abhor; to tire, to weary; –ուցիչ *a.* disgusting, nauseous, loathsome.

Նողկութի or –կտութի S. Նողկանք.

Նոճ, ի, –ի, ճւոյ *s.* cypress; cyprus.

Նոճ, –եայ, –ի *a.* made of cypress-wood. [press.

Նոճիաճաճ *a.* ornamented with cy-

Նոմիկոս, աց *s. Gr. w.* lawyer, jurisconsult; president.

Նոմիսմայ *s. Latin & Gr. w.* coin.

Նոմոս, աց or իւ *s. Gr. w.* law, right.

Նոյական, Նոյեան *a.* of Noah.

Նոյանք *s.* Noah & his family.

Նոյեմբեր, ի *s.* November.

Նոյն, նորին, նովին or նմին *pron.* himself, herself, itself; he, she, it; *a.* even, equal, identical; *ad.* ditto, do, idem or id; the same, of the same kind, after the same manner, equally, conformably, identically; մի եւ –, the same; ի –, ի նմին, together, all at once; ի –, – ը –, ը –ս իսկ, ի մի եւ ի –, ի նմին ժամանակի, – ժամայն, – հետայն *ad.* soon, very soon, quickly, in the same moment, immediately, directly; –գործել, to identify.

Նոյնաբան *s.* tautologist; –ական *a.* -gical; –եմ, եցի *vn.* to say over & over again, to repeat, to tautologize; –ութի *s.* repetition of words; *rhet.* tautology; literal translation; –բար *ad.* identically; uniformly, equally; –գոյ S. Համագոյ; –գաւակ *a.* being as brothers, having, as it were, the same father; –գէի. –կերպ S. Համագգի. Միակերպ; –հրաշ *a.* equally wonderful; –ձայնութի *s.* homophony; –ձեւ *a.* isomorphous; uniform; –ձեւութի *s.* isomorphism; uniformity; –մասն *a.* isomerous; –մասնութի *s.* isomerism; –յանգ, ութի S. Նմանայանգ, ութի; –նամ, ացայ *vn.* to be the same or identical, to become identified; to unite with, to be equal; –նման *a.* quite the same; –նշան S. Համանշան; –նուն *a.* of the same name; S. Համանուն; –սերմն *a.* of the same family, consanguineous; –վերջ *a.* cadenced; –տիպ *a.* conform; *ad.* likewise; –ցուցանեմ *va.* to identify; to unite, to equal. [*ad.* S. Նոյնպէս.

Նոյնգունակ *a.* even, equal, same;

Նոյնութիւն *s.* identity, sameness.

Նոյնչափ *ad.* as much.

Նոյնպէս *ad.* after the same manner, in like manner, equally, as much as, as well as, also, idem.

Նոյնպիսի, ւոյ, սեաց *a.* even, like, equal, alike, the same.

Նոյնքան, –ի *ad.* as much.

Նոյնօրէն *ad.* likewise; –օրին *ad.* in

the same day; immediately, forthwith; *–օրինակ a.* like, the same; –, *կ– ad.*

*Նոպայ *s. med.* period. [S. Նոյնպէս.

Նովանք *s.* new-married couple; S. Նոր. [writer, secretary; *a.* notarial.

Նոտար S. Նօտար; *–ագի s.* short-hand

Նոտրգիր S. Նօտր.

Նոր, *ոյ a.* new, fresh, young; novel, recent, modern; strange, extraordinary, curious; inexperienced, unpractised, new, raw; *ad.* newly, lately, freshly, recently; *– ինչ* curiosity; *– ոմն Լեւոնդիոս*, like a second Leontius; *– նորոգող բնութեան մերոյ*, the Renewer of our nature; *ամիս –ոյ*, the month of first fruits; – – S. Նորանոր; *ի –ումն* or *ումն ad.* at present; under the new dispensation, according to the christian law; now, in the present age.

Նորա *pron.* to him or to her.

Նորաբան *s.* neologist; *–ական a.* -gical; *–ութիւն s.* -gy; -gism; *–բեր a.* recently conceded or granted; *– ամն*, the new year; *–բողբոջ*, *–բոյս a.* new-born, just brought forth, new, young, tender; *–գին a.* recently bought; *–գիւտ a.* new-fangled, newly invented or discovered, new, recent, modern; *–գործ a.* newly made, new, novel, fresh; strange, surprising, curious, paradoxical; *–գործեմ va.* to renovate, to renew; to restore; to do something new, extraordinary, miraculous; *–գործութիւն s.* renewing; a miracle, an extraordinary or marvellous thing, deed or act; *–գրեմ va.* to write anew; *–զարդ* S. Նորահաւատ; *–զգեստ a.* dressed in new clothes; *–զուարճ a.* new & merry; pleasant, grown green or flowering anew; *–թեք a.* new made; *–լուրք s.* news, novelty; *զի՞նչ – լսեն*, what news? *–խայծ ողկոյզ s.* ripening grape; *–խնդիր s.* newsmonger; *–խող-խող a.* just beheaded; *–խոց a.* wounded recently; *–ծին*, *–ծնեալ a.* new-born; regenerate; springing up afresh, budding anew; *–ծնեալ յաւազանէ*, just christened; *կին –ծին*, recently delivered woman; *–ծնիմ* or *–ծնանիմ vn.* to be regenerated; *–ծնութիւն s.* regeneration; *–ծնունդ* S. Նորածին; *–կառուցց a.* new-built; *–կատար a.* lately finished or ended; young, raw, inexpert; *–կարգ a.* lately recruited; *–կերպ a.* prodigious, portentous, monstruous; *–կերտ a.* newly built or constructed; strange, stupendous; newly ordained; *–կերտեմ* S. Նորագործեմ; *–կնիք*, *կնքի*, *–կնուք a.* newly baptized; converted; ordained; *s.* neophyte; *–կտտուտ a.* ferociously tormented; *–կրօն s.* innovator; *a.* superstitious; *–կրօնութիւն s.* innovation or novelty in religious matters; superstition; *–հաս a.* arrived lately; precocious, early, premature; unexpected, sudden; young, fresh; *–հատակ a.* young, tender; *–հարսն sf.* new-married, bride; *–հաւատ a.* newly converted; *s.* neophyte, proselite; *–հնար a.* newly invented, modern, fashionable; *–հրաշ* S. Նորանշան; *–ձայն a.* strange, unheard of, innovated, invented or published lately; false, erroneous; *–ձայնութիւն s.* novelty, innovation; strangeness; *–ձեւ a.* new-fashioned, innovated, newly found out or invented; modish, capricious, fantastical; *–ք s.* fashion, mode, novelty; *–ս առնել*, *ձեւել*, *մուծանել* or *–ձեւեմ va.* to innovate, to introduce any novelty or innovation, fashion or mode; *–ձեւիչ s.* innovator; milliner; *–ձեւութիւն s.* innovation; mode, fashion; *–ք*, fancy articles; *–ղանդ a. s.* protestant; *–ղանդութիւն s.* protestantism; *–ճաշակ a.* having a novel taste, agreeable to the palate, delicious, exquisite; *–մարդ* S. Նորավարժ; *–մուտ a.* newly entered, young; *s.* novice; *–ք s.* innovation; *–ս նորոգել*, to introduce innovations or novelties; *–մտութիւն s.* the first day of a month. [own, his or her own.

Նորայ, *ոյ*, *–ին*, *յնոց pron.* one's

Նորանամ, *ացայ vn.* to become new, to be renewed; *–նայ լուսին*, it is new moon; *–նկար a.* newly painted; *–նշան a.* prodigious, marvellous, astonishing, surprising, wonderful; unheard of, extraordinary, incredible, paradoxical, phenomenal, monstruous; *– ինչ*, phenomenon, prodigy, paradox; *–նշոյլ a.* furnished with new light or glory, shining anew; *ընդ այգն –*, at early dawn, at the first dawning of aurora; *–նոր a.* quite new, quite recent; *ad.* anew, over again; *–շէն a.* new-built; *–պաղ a.* freshly frozen; *–պարգեւ a.* recently accorded, granted or given; *–պէս ad.* newly, recently, freshly; *–պսակ a.* newly crowned; *– հայրապետն Լեւոն ԺԳ*, Leo XIII, lately raised to the

pontificate; *-սէր* a. fond of novelty or news, modish, fashionable; s. fashionist; *-սիրութիւն* s. love of novelty, modishness; *-սնունդ* a. newly fed, young, tender; *-ստեղծ, իւ* a. newly created, produced or invented; *-ստեղծեմ, եցի, -ծումն, ծի* va. to create, to re-create, to make anew; *-սքանչ* S. Նորանշան; *-վարժ* a. inexperienced, unpractised, inexpert, young, novice; *- ձի,* unbroken horse; *-տեսակ* a. of a new kind or sort; *-տեսիլ* a. extraordinary, strange, paradoxical, prodigious, portentous; *-տիք* a. of tender age, young; *-տունկ* a. newly planted; s. young, small plant; *fig.* neophyte; *-տուր* a. lately given, novel, recent; *-րար* a. renewing, re-creating; newly done; *-րծաթ* s. packfond, German silver; *-ցոյց* S. Նորանշան; *-ցուցանեմ* va. to make new, to renew, to renovate; *-փառ* a. vain, vain-glorious, vaunting; s. heterodox, heretic; *-փառութիւն* s. vain-glory, vanity; heterodoxy, heresy; *-փետուր* a. moulted, new-feathered; *fig.* made young again, renewed, revived; *- զարդարիլ,* to moult, to get new-feathers, to put on new plumage; *fig.* to grow young again, to be revived; *-փթիթ* a. new-budded, new-blossomed, freshblown; *- ծաղիկ.* a tender or new-budding flower; *- գեղ գարնանային,* budding graces of Spring; *- ստինք,* budding breasts; *-փոր* a. newly dug; engraved; *-քաղաք* s. new-city; *np.* Vagharshabad.

Նորեկ, *այ* a. new-come, newly arrived; *fig.* newly converted; *- հարսն,* bride, new-married; *- եղբայր,* novice; *- ի հաւատս,* neophyte. [րանամ.

Նորեմ, *եցի* S. Նորոգեմ; *-իմ* S. Նո-

Նորընծայ a. newly offered, dedicated, ordained or consecrated; starting in life, entering in a profession or career, making one's outset; s. novice, probationer; *-արան* s. apartment for novices; *-ութիւն* s. outset, first steps, starting, setting out; novitiate, probationership, time of probation; *-ընկալ* a. newly obtained; *-ընտիր* a. newly elected or chosen; *- Աբբայ,* a - Abbot-General; *- լինել,* to enrol fresh troops, to recruit anew.

Նորի, *բուց, րեաց* a. premature, precocious; *-ք* s. first-fruits, premices; *օր նորեաց,* first-fruits' day.

Նորիմաց S. Նորահնար.

Նորին S. Նորա.

Նորոգ S. Նոր; *-ագործ* S. Նորագործ; *-այարդար* a. renewed, re-made, made up anew; *-ապէս* S. Նոր *ad.*; *-ատուր* S. Նորատուր.

Նորոգեմ, *եցի* va. to mend, to do up, to repair, to restore to the first condition or state, to put in good or better condition; to regenerate, to reform; *fig.* to renew, to renovate, to revive, to re-establish; *- զնկար,* to restore a picture; *-իմ* vn. to be renewed, restored, regenerated, re-established; *fig.* to revive, to come to life again.

Նորոգիչ s. reformer, innovator, regenerator.

Նորոգութիւն, *-ուած* s. renewing, renovation, restoration, reparation, mending; reform, reformation; new birth, regeneration; growing young again; S. Տոմար. [novation.

Նորութիւն, *-ուած* s. novelty; in-

Նորուս, *-ուած* s. a. new-student or scholar.

Նորօրէն ad. in a new, unheard of or extraordinary manner, prodigiously; a. unheard of, extraordinary.

Նորօրինակ a. unexampled, strange, new, extraordinary, prodigious, un-

Նոցա *pron.* to them. [usual.

Նոցայք, *յոց, ցինք* s. their.

Նու, *նուոյ. -ք, ոց, -անք, անց* sf. daughter-in-law; sister-in-law, brother's wife.

Նուագ, *այ* s. music, song, air, tune, melody, strain; sonnet: cup, goblet, bowl, mug: fashion, manner; bout, time; *- ոսկի,* golden cup or goblet; *երեքսրբեան -,* trisagium, agiology; *յօրինել -ս,* to modulate, to sing; *հեշտացուցանել զ-ս,* to make a sweet concert or harmony; *զյաղթութեան -ս երգել,* to sing an epinicion, a triumphal song; *յերկարագոյն -օք զբանիւք անկանել,* to be prolix, to prolong the discourse; *զառաջին -ն, յառաջնում -ի,* the first time; *ի բազում -ս, ի -ս բազումս, յայլ եւ այլ -ս,* more than once, several or many times, over & over again; *ի միում -ի,* once, at once; all at once; *զմի - եւս,* once more; *մի միոյ -ի, առ մի -,* for once; *զայս մի եւս -,* once more, once again; *յերկարագոյն -օք,* long, a great while or time; *զմեց օրն մի մի -,* once

a day for six days; լուր զայս վերջին –, hear for the last time.

Նուագաթուղթ s. music-paper; –խաղ s. melodrama; –խումբ s. orchestra; band; –ծու, աց s. musician; –կից s. accompanist; – լինել, to accompany; –կցեմ va. to accompany; –կցութիւն s. accompaniment; base; –համերգ s. concert; դահլիճ –գիտի, concert-room; –մոլ a. music-mad; s. melomaniac; –մոլութիւն s. melomania; –յարդար, իչ s. musical composer; song-writer; lyric poet; –րան s. musical instrument; music- or song-book; – փչողական, բերանաւոր, լեզուակաւոր, wind, mouth, reed instruments; –ւոր a. musical, harmonious, cadenced, melodious; –ւորեմ va. to present the wine-cup, to hand a wine-glass.

Նուագեմ, եցի va. to sing; to give out the tune, to strike up; to play on a musical instrument, to execute, to perform; – ընդ ումեք, to accompany; – սրնգաւ, to play the flute.

Նուագերգութիւն s. music, song, melody.

Նուազ, ից a. of little consequence, inconsiderable, few in number; lesser, smaller, very slight, weak, little; thin, slender; base, low, vile; *ad.* not so much, less but little, not over; ոչ ինչ –, not less, not fewer; յաւէտ կամ –, more or less; ոչ յաւէտ եւ ոչ –, neither more nor less; – առնել S. Նուազեցուցանեմ.

Նուազաբան a. brief, laconic; –գիւտ a. rare; –կան a. diminutive, decreasing; – պատկեր, negative picture; –միտ a. short-witted; –նամ S. Նուազիմ.

